

"Հաստատում եմ"

Հասմիկ Հարությունյան

(ՀՀ ԱՆ ԳՀ ԾՀ ղեկավարի անուն, ազգանուն)



(ստորագրություն)

29 « 01 » 2014թ.

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի 2014 թվականի «հունվարի» «22» -ի թիվ «1» արձանագրությամբ

Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ «ԳՀ ՊԸԾԶԲ-14/2»

Պատվիրատուն՝ ՀՀ առողջապահության նախարարությունը, որը գտնվում է ք.Երևան, Կառավարական տուն 3 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգ:

Պարզեցված ընթացակարգում հաղթող ճանաչված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել «Արտաքին անկախ աուդիտորական ծառայությունների» մատուցման պայմանագիր (այսուհետև՝ պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի պարզեցված ընթացակարգին մասնակցելու հավասար իրավունք:

Պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ, ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական գործունեության համապատասխանություն՝ պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ:

Հաղթող մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով, որի հետ կնքվում է պայմանագիր:

Սույն ընթացակարգի հրավերը փաստաթղթային ձևով ստանալու համար անհրաժեշտ է դիմել պատվիրատուին, մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված՝ «10» -րդ օրը ժամը «11:00»-ը: Ընդ որում փաստաթղթային ձևով հրավեր ստանալու համար պատվիրատուին պետք է ներկայացնել գրավոր դիմում: Պատվիրատուն ապահովում է փաստաթղթային ձևով հրավերի տրամադրումն անվճար:

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն հրավերով նախատեսված կարգով հրավեր չստանալը չի սահմանափակում մասնակցի՝ սույն ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան Կառավարության 3 շենք ՀՀ առողջապահության նախարարության 003 սենյակ հասցեով, փաստաթղթային ձևով մինչև սույն հայտարարությունը հրապարակման օրվանից հաշված «10»-րդ օրվա ժամը «11:00»-ն և դրանք պետք է կազմված լինեն հայերեն/անգլերեն:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երևան, Կոմիտասի 54/բ հասցեով: Բողոքարկումն իրկանացվում է սույն հրավերի 1-ին մասի 12-րդ բաժնով սահմանված կարգով:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, մասնակիցները պետք է պատվիրատուին ներկայացնեն ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Հ. Պողոսյանին:

Հեռախոս՝ (374 10) 29 75 36:

Էլ.փոստ՝ procurement@healthpiu.am, gfpui@moh.am:

Պատվիրատուի պաշտոնական կայքը՝ [www.moh.am](http://www.moh.am)

Պատվիրատու՝ ՀՀ առողջապահության նախարարություն

Հաստատված է  
«ԳՀ ՊԸԾՁԲ-14/2» ծածկագրով  
պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի  
2013թ. « հունվարի » « 22 »-ի թիվ «1» արձանագրությամբ

## **ՀՀ առողջապահության նախարարություն**

### **Հ Ր Ա Վ Ե Ր**

## **ՀՀ առողջապահության նախարարություն կարիքների համար՝ «Արտաքին անկախ աուդիտորական ծառայությունների» ձեռքբերման նպատակով հայտարարված պարզեցված ընթացակարգի**

Հարգելի մասնակից

Նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն  
հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:

### **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար՝ «Արտաքին անկախ  
աուդիտորական ծառայությունների մատուցման» ձեռքբերման նպատակով հայտարարված սույն  
պարզեցված ընթացակարգի հրավերի

### **ՄԱՍ 1.**

1. Գնման առարկայի բնութագիրը
2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը
3. Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը
4. Հայտը ներկայացնելու կարգը
5. Հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու և դրանք հետ վերցնելու կարգը
6. Հայտի ապահովումը
7. Հայտերի բացումը
8. Հայտերի գնահատումը, համեմատումը և արդյունքների ամփոփումը
9. Պայմանագրի կնքումը
10. Պայմանագրի ապահովումը
11. Ընթացակարգը չկայացած հայտարարելը
12. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը

1. Ընդհանուր դրույթներ
2. Ընթացակարգի հայտը
3. Մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերի կազմմանը ներկայացվող պահանջները
4. Հայտի գնային առաջարկը
5. Հայտը պատրաստելու կարգը
6. Հավելվածներ 1-9
7. Ցանկ մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերի

Սույն հրավերը տրամադրվում է ի լրումն ՀՀ առողջապահության նախարարության (այսուհետև՝ Պատվիրատու)՝ կարիքների համար՝ «Արտաքին անկախ աուդիտորական ծառայությունների մատուցման» ձեռքբերման նպատակով, «ԳՀ ՊԸԾՁԲ-14/2» ծածկագրով անցկացվող պարզեցված ընթացակարգի (այսուհետև՝ ընթացակարգ) հայտարարության:

Սույն հրավերը կազմվել է գնումների մասին ՀՀ օրենսդրության, այդ թվում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011 թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետև՝ Կարգ) և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան և նպատակ ունի Պատվիրատուի կողմից հայտարարված ընթացակարգին մասնակցելու մտադրություն ունեցող անձանց (այսուհետև՝ նաև Մասնակից) տեղեկացնելու ընթացակարգի պայմանների՝ գնման առարկայի, ընթացակարգի անցկացման, հաղթողին որոշելու և նրա հետ պայմանագիր կնքելու մասին, ինչպես նաև օժանդակելու ընթացակարգի հայտը պատրաստելիս:

Հայտեր կարող են ներկայացնել բոլոր անձինք, անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների և (կամ) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) գնումների գործընթացին մասնակցության դեպքերի:

Սույն ընթացակարգի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը: Սույն ընթացակարգի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

ՀՀ առողջապահության նախարարության «Գլոբալ հիմնադրամի ծրագրերը համակարգող խմբի» էլեկտրոնային փոստի հասցեն է՝ [gfpriu@moh.am](mailto:gfpriu@moh.am)

## 1. Գնման առարկայի բնութագիրը

**Գնման առարկա է հանդիսանում ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար՝ «Արտաքին անկախ աուդիտորական ծառայությունների մատուցման» ձեռքբերումը, որոնք խմբավորված են «6» չափաբաժնի՝**

| Չափաբաժինների համարները | Չափաբաժնի անվանումը                                                                                                                                                                 |
|-------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|
| 1                       | Ծրագրի անվանում՝ «Առողջապահական համակարգի հզորացում»՝ <b>01.01.2013-31.12.2013</b>                                                                                                  |
| 2                       | Ծրագրի անվանում՝ «Առողջապահական համակարգի հզորացում»՝ <b>01.01.2014 -31.12.2014; 01.01.2015-31.03.2015</b>                                                                          |
| 3                       | Ծրագրի անվանում՝ «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»՝ <b>01.01.2013-31.12.2013</b>                                                  |
| 4                       | Ծրագրի անվանում՝ «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»՝ <b>01.01.2014 -31.12.2014</b>                                                 |
| 5                       | Ծրագրի անվանում՝ «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում»՝ <b>01.01.2013-31.12.2013</b>  |
| 6                       | Ծրագրի անվանում՝ «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում»՝ <b>01.01.2014 -31.12.2014</b> |

ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար՝ «Արտաքին անկախ աուդիտորական ծառայությունների մատուցում» տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում:

## 2. Մասնակցի մասնակցության իրավունքի պահանջները, որակավորման չափանիշները և դրանց գնահատման կարգը

2.1 Մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ «Մասնակցության իրավունքը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) եթե մասնակիցը հայտով ներկայացրել է Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին,

2) բացի հայտարարությունից, Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով մասնակցից, այդ թվում՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

2.2 Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեն անձինք՝

1) որոնք դատական կարգով ճանաչվել են սնանկ,

2) որոնք ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4) որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Եթե մասնակիցը հայտով ներկայացրել է սույն հրավերի II մասի 2.2.1 կետով նախատեսված գրավոր հայտարարություն, ապա տվյալ մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին:

2.3 Մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը,

2) մասնագիտական փորձառություն,

4) ֆինանսական միջոցներ,

5) աշխատանքային ռեսուրսներ:

Ընդ որում մասնակցի՝

- «Մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հետևյալ տեղեկությունները.

| Նախկինում կատարված պայմանագրերի |                                              |                                                |
|---------------------------------|----------------------------------------------|------------------------------------------------|
| առարկան                         | ծավալը՝ գումարային արտահայտությամբ (ՀՀ դրամ) | պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու տվյալները |
| 1                               | 2                                            | 3                                              |
| Տարեթիվը՝ ..... թվական          |                                              |                                                |
| 1.                              |                                              |                                                |
| 2.                              |                                              |                                                |
| ..                              |                                              |                                                |
| Տարեթիվը՝ ..... թվական          |                                              |                                                |
| 1.                              |                                              |                                                |
| 2.                              |                                              |                                                |
| ..                              |                                              |                                                |
| Տարեթիվը՝ ..... թվական          |                                              |                                                |
| 1.                              |                                              |                                                |
| 2.                              |                                              |                                                |
| ..                              |                                              |                                                |

2) Մասնակիցը համարվում է նշված պահանջին բավարարող, եթե հայտով ներկայացնում է պահանջվող տեղեկությունները և հայտարարություն (հավելված 3.1), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման /նմանատիպ/ ծառայությունների մատուցման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր: **Նմանադիպ են համարվում ISA միջազգային աուդիտորական սրանդարտներով աուդիտորական ծառայությունների մատուցումը:**

- «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.2), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

2. նախկինում կատարած պայմանագրի (կամ պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.

3) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն մասով նախատեսված պահանջները:

- «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը, որի համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված է պարտադիր աուդիտի ենթարկվելու պահանջ՝ պետք է որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերով ներկայացնի չճանաչված/դրական/ աուդիտորական եզրակացություն:

2) Այն ընկերությունների դեպքում, որոնց համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված է պարտադիր աուդիտի ենթարկվելու պահանջ՝ Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է

բավարար, եթե աուդիտորական եզրակացությունը տրված է ՀՀ կառավարության 29/11/2011թ. N 1931-Ն որոշմամբ նախատեսված «Աուդիտի միջազգային ստանդարտ 700-ի» պահանջներին համապատասխան:

- «Աշխատանքային ռեսուրսներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն (հավելված 3.4) պայմանագրի կատարման համար սույն հրավերով պահանջվող աշխատանքային ռեսուրսների առկայության մասին՝ կցելով պայմանագրի կատարման համար Մասնակցի կողմից առաջարկվող աշխատակազմի վերաբերյալ տվյալները՝ հետևյալ ձևով՝

| Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների |              |                    |                                           |                                                       |
|----------------------------------------------|--------------|--------------------|-------------------------------------------|-------------------------------------------------------|
| անունը,<br>ազգանունը                         | որակավորումը | աշխատանքային փորձը |                                           | գործատուն և նրա<br>հետ կապ<br>հաստատելու<br>տվյալները |
|                                              |              | ժամանակահատվածը    | գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը |                                                       |
| 1                                            | 2            | 3                  | 4                                         | 5                                                     |
| 1.                                           |              |                    |                                           |                                                       |
| 2.                                           |              |                    |                                           |                                                       |
| ..                                           |              |                    |                                           |                                                       |

Ընդ որում աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար Մասնակիցը ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:

2) Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն մասով նախատեսված պահանջները:

Պայմանագրի կատարման համար պահանջվող աշխատանքային ռեսուրսների նվազագույն պահանջներն են՝

- **Առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ տվյալ ոլորտում համարժեք չափի նմանատիպ ծրագրերի աուդիտի իրականացմամբ՝ Միջազգային աուդիտորական ստանդարտների համաձայն:**
- **Թիմում առնվազն 5 աշխատակիցների առկայություն, որոնք ունեն համարժեք որակի և բարդության ծրագրերի աուդիտի իրականացման փորձ: Հաշվապահական համապատասխան մասնագիտական ասոցիացիաներին անդամակցությունը ցանկալի է:**
- **Աուդիտի թիմի ղեկավարի համար առնվազն 7 տարվա աշխատանքային փորձ տվյալ ոլորտում համարժեք չափի նմանատիպ ծրագրերի աուդիտի իրականացմամբ՝ Միջազգային աուդիտորական ստանդարտների համաձայն:**

Որակավորման չափանիշներից որևէ մեկին չբավարարելու դեպքում Մասնակցի հայտը մերժվում է:

### 3. Հրավերի պարզաբանումը և հրավերում փոփոխություն կատարելու կարգը

3.1 Օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցն իրավունք ունի Պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում:

Մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած Մասնակցին պարզաբանումը տրամադրվում է հարցումն ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում:

3.2 Հարցման և պարզաբանումների բովանդակության մասին հայտարարությունը հրապարակվում է տեղեկագրում՝ հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրելու օրվան հաջորդող օրը, առանց նշելու հարցումը կատարած Մասնակցի տվյալները:

3.3 Պարզաբանում չի տրամադրվում, եթե հարցումը կատարվել է սույն բաժնով սահմանված ժամկետի խախտմամբ, ինչպես նաև, եթե հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից:

3.4 Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ հրավերում կարող են կատարվել փոփոխություններ: Փոփոխություն կատարելու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում փոփոխություն կատարելու և դրանք տրամադրելու պայմանների մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում:

3.5 Հրավերում փոփոխություններ կատարվելու դեպքում հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը հաշվվում է այդ փոփոխությունների մասին տեղեկագրում հայտարարության

հրապարակման օրվանից: Այդ դեպքում Մասնակիցները պարտավոր են երկարաձգել իրենց ներկայացրած հայտի ապահովման գործողության ժամկետը կամ ներկայացնել հայտի նոր ապահովում:

3.6 Սույն բաժնի համաձայն կատարվող գործողությունների և դրանց արդյունքների մասին կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը:

#### **4. Հայտը ներկայացնելու կարգը**

4.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար Մասնակիցը Պատվիրատուին է ներկայացնում ընթացակարգի հայտ:

Ընթացակարգի հայտը սույն հրավերի հիման վրա մասնակցի կողմից ներկայացվող առաջարկն է:

Ընթացակարգի հայտերը ներկայացվում են մինչև դրա համար սույն հրավերով սահմանված ժամկետի ավարտը:

Ընթացակարգի հայտերի պատրաստման կարգը նկարագրված է սույն հրավերի II մասում՝ Պարզեցված ընթացակարգի հայտերը պատրաստելու հրահանգում:

4.2 Ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել Պատվիրատուին ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հայտարարությունը և հրավերը տեղեկագրում հրապարակվելու պահից հաշված «10»րդ օրվա ժամը «11<sup>00</sup>»-ն, ք. **Երևան ՀՀ կառավարության 3 շենք ՀՀ առողջապահության նախարարության 003 սենյակ** հասցեով: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Հ. Պողոսյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Մասնակցի պահանջով Պատվիրատուն տրամադրում է հայտի ընդունման մասին տեղեկանք: Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո ներկայացված հայտերը գրանցամատյանում չեն գրանցվում և դրանք՝ ստանալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարի կողմից վերադարձվում են:

##### **4.3 Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝**

**ա. սույն հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը /ներառյալ որակավորման չափանիշները հավաստող սույն հրավերով պահանջվող փաստաթղթերը /**

**բ. գնային առաջարկ,**

**գ. հայտի ապահովում,**

**դ. էլեկտրոնային փոստի հասցեն,**

**ե. հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):**

#### **5. Հայտի գործողության ժամկետը, հայտերում փոփոխություն կատարելու**

##### **և դրանք հետ վերցնելու կարգը**

5.1 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ հայտը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

5.2 Օրենքի 28-րդ հոդվածի համաձայն՝ Մասնակիցը, մինչև սույն հրավերի 4.2 կետում նշված՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետը, կարող է փոփոխել կամ հետ վերցնել իր հայտը:

5.3 Փաստաթղթային ձևով հայտ ներկայացնելու դեպքում հայտի փոփոխման մասին ծանուցումն ուղարկվում է սույն հրավերի II մասի՝ «Պարզեցված ընթացակարգի հայտը պատրաստելու» հրահանգի 5.1 կետի պահանջներին համապատասխան կազմված ծրարով՝ դրա վրա ավելացնելով «փոփոխում» բառը: Հայտը հետ վերցնելու դեպքում Մասնակիցը, մինչև հայտերի բացելը, ներկայացնում է այդ մասին գրավոր ծանուցում:

#### **6. Հայտի ապահովումը**

6.1 Մասնակիցը հայտով՝ սույն հրավերով սահմանված կարգով, ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվող գնի երկու տոկոսից:

Հայտի ապահովումը ներկայացվում է Մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 7 *հավելվածով*:

6.2 Հայտի ապահովումը՝ տուժանքը, վճարում է մասնակիցը, եթե նա՝

1) հայտարարվել է ընտրված Մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագրի կնքելու իրավունքից:

2) խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

3) հայտերի բացումից հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

6.3 Հայտի ապահովման գործողության ժամկետը վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

## **7. Հայտերի բացումը**

7.1 Հայտերի բացումը կկատարվի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ հանձնաժողով) բացման նիստում՝ սույն ընթացակարգի հայտարարությունը տեղեկագրում հրապարակվելու պահից հաշված «10»-րդ օրվա ժամը «11:00»-ին, ՀՀ կառավարության 3 շենք ՀՀ առողջապահության նախարարության 003 սենյակ հասցեում:

7.2 Օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ հայտերի բացման նիստում հրապարակվում են հայտ ներկայացրած յուրաքանչյուր Մասնակցի անվանումը (անունը), տեղեկություններ՝ հայտեր պարունակող ծրարների կազմման և ներկայացման՝ սույն հրավերի պահանջներին համապատասխանության վերաբերյալ, տեղեկություններ՝ բացված յուրաքանչյուր ծրարում սույն հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ, տեղեկություններ՝ յուրաքանչյուր Մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխանելու մասին, յուրաքանչյուր Մասնակցի առաջարկած գինը՝ տառերով և թվերով արտահայտված, տեղեկություններ՝ հայտերի հետևանքման կամ փոփոխությունների մասին:

7.2.1 Հայտերը բացվելուց հետո կազմվում է արձանագրություն: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

Եթե հանձնաժողովի անդամը և (կամ) Մասնակիցը հայտերի բացման վերաբերյալ ցանկանում է արտահայտել հայտերի բացման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է սույն կետում նշված արձանագրությանը:

7.2.2 Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում հայտերի և դրանց գնահատման թերթիկների երկուական օրինակները փոխանցում է հանձնաժողովի անդամներին: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ՝

1) գնահատում է ներկայացված հայտերը:

2) գնահատման արդյունքներն արտացոլում է գնահատման թերթիկում:

7.2.3 Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը:

7.2.4 Ընտրված մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով: Ընդ որում, հանձնաժողովի կողմից ընտրված մասնակիցներին որոշելիս՝ գնային առաջարկների համեմատումն իրականացվում է առանց սույն հրավերի 2-րդ մասի 4.2 կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

7.2.5 Եթե հայտում անհամապատասխանություն է տեղ գտել տառերով և թվերով գրված գումարների միջև, ապա հիմք է ընդունվում տառերով գրված գումարը: Եթե առաջարկվող գները ներկայացված են երկու կամ ավելի արժույթներով, ապա դրանք համեմատվում են Հայաստանի Հանրապետության դրամով՝ տվյալ օրվա Կենտրոնական Բանկի սահմանած փոխարժեքով:

7.2.6 Հանձնաժողովի, Պատվիրատուի և Մասնակիցների միջև բանակցություններն արգելվում են, բառությամբ՝

1) երբ ընթացակարգին մասնակցել է մեկ մասնակից, որի ներկայացրած հայտը համապատասխանում է հրավերի պահանջներին կամ հայտերի գնահատման արդյունքում հրավերի պահանջներին համապատասխան է գնահատվել միայն մեկ մասնակցի հայտ: Սույն կետի համաձայն վարվող բանակցությունները կարող են հանգեցնել միայն առաջարկված գնի նվազեցմանը և (կամ) վճարման պայմանների փոփոխությանը:

2) Օրենքով նախատեսված այլ դեպքերի:

7.2.7 Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե հրավերին համապատասխանող հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային

առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները՝

1) առաջին և հաջորդաբար տեղերն զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր Մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները)։

2) հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր Մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, ընդ որում՝ սույն կետի համաձայն էլեկտրոնային եղանակով ծանուցման դեպքում պարտադիր է Մասնակցի կողմից ծանուցման ստացման ավտոմատ եղանակով հետ հաստատումը, իսկ գրավոր տարբերակով ծանուցման դեպքում ծանուցումն ուղարկվում է պատվիրված նամակով՝ հետադարձ ծանուցմամբ, կամ Մասնակցին հանձնվում է առձեռն՝ նշելով վերջինիս կողմից դրա ստացման ամսաթիվը։ Տեղեկությունների (փաստաթղթերի) էլեկտրոնային եղանակով փոխանակման դեպքում դրանք ուղարկողը տեղեկությունները (փաստաթղթերը) հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ կամ տեղեկությունները (փաստաթղթերը) ուղարկում է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով։

3) բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երրորդ աշխատանքային օրը։

4) յուրաքանչյուր Մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար, նախատեսված վերջնաժամկետի ավարտը Մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը։

5) բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ Մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, որոշվում և հայտարարվում են առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները։

6) բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե մասնակիցների ներկայացրած գները դեռևս գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած, և պայմանագիր չի կնքվում։

7.3 Գնումները համակարգողը երեք աշխատանքային օրվա ընթացքում ամփոփում է հանձնաժողովի անդամների ներկայացրած գնահատման թերթիկները և կազմում հայտերի գնահատման արձանագրություն, որն ստորագրում են հանձնաժողովի անդամները։

7.4. Պայմանագրերը կարող են իրականացվել գործակալության պայմանագրեր կնքելու միջոցով։

7.4.1 Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ սույն ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված Մասնակիցը։ Եթե գործակալության միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է նաև գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի՝ սույն հրավերով նախատեսված փաստաթղթերը (տվյալները)։

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ գործակալության պայմանագրի կողմ հանդիսացող անձի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության չափով հրավերով սահմանված որակավորման պահանջներին։

3) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխությունն իրականացվում է Պատվիրատուի համաձայնությամբ։ Պատվիրատուն իր համաձայնությունը տալու համար իրավունք ունի մասնակցից պահանջելու նոր գործակալի կամ ենթակապալառուի վերաբերյալ փաստաթղթեր՝ վերջինիս համապատասխանությունը պայմանագրով նախատեսված գործունեությանը ճշտելու նպատակով։ Պատվիրատուի անհամաձայնության դեպքում վերջինս երկու աշխատանքային օրվա ընթացքում ծանուցում է մասնակցին և գործակալի կամ ենթակապալառուի փոփոխություն չի կատարվում, կամ պայմանագիրը լուծվում է։

4) Մասնակիցն է պատասխանատվություն կրում գործակալի պարտավորությունների համար:

7.4.2 Մասնակիցները կարող են սույն ընթացակարգին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի է առնվում, որ համատեղ գործունեության պայմանագրի յուրաքանչյուր անդամի որակավորումը պետք է համապատասխանի սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված պայմանագրով տվյալ անդամի ստանձնած պարտավորության չափով սույն հրավերով սահմանված որակավորման պահանջներին.

3) Մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն.

4) կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում կոնսորցիումի հետ Պատվիրատուի կնքած պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.5 Մասնակիցները և նրանց ներկայացուցիչները կարող են ներկա գտնվել հանձնաժողովի նիստերին: Նրանք կարող են պահանջել հանձնաժողովի նիստերի արձանագրությունների պատճենները, որոնք տրամադրվում են մեկ օրացուցային օրվա ընթացքում:

## **8. Հայտերի գնահատումը, համեմատումը և արդյունքների ամփոփումը**

8.1 Որակավորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում՝ հանձնաժողովի կողմից անհամապատասխանություն արձանագրվելու (հայտնաբերվելու) դեպքում՝ գնումները համակարգողը երեք աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է Մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկվելու դեպքում Մասնակցի հայտը գնահատվում է բավարար.

2) չշտկվելու դեպքում, հանձնաժողովի որոշմամբ, տվյալ Մասնակցի հայտը մերժվում է:

Ընդ որում գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվում են 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշների վերաբերյալ փաստաթղթերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և համապատասխանության դեպքում 1-ին տեղը զբաղեցրած մասնակիցը համարվում է ընտրված մասնակից, որին էլ ներկայացվում է պայմանագիր կնքելու առաջարկ: Հակառակ դեպքում 1-ին տեղը զբաղեցրած մասնակցին սույն հրավերով սահմանված կարգով տրվում է որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունը շտկելու հնարավորություն: Սահմանված ժամկետներում նշված անհամապատասխանությունները շտկվելու դեպքում մասնակցին սահմանված կարգով ներկայացվում է պայմանագիր կնքելու առաջարկ: Նշված անհամապատասխանությունները 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից չշտկվելու դեպքում գնահատող հանձնաժողովը գնահատում է 2-րդ տեղը զբաղեցրած մասնակցի ներկայացրած որակավորման չափանիշների վերաբերյալ փաստաթղթերը: Գնման գործընթացը շարունակվում է նույն կարգով, և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցների կողմից որակավորման փաստաթղթերում առկա անհամապատասխանությունները սահմանված կարգով չշտկվելու դեպքում ընթացակարգը հայտարարվում է չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով:

8.2. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հարվերի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները:

8.3 Մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն հարվերի ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված պահանջները:

8.4 Հայտերի գնահատման արդյունքներով կազմվում է հայտերի գնահատման նիստի արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8.5 Մասնակիցը, իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր:

Գնումների համակարգողը և (կամ) հանձնաժողովը կարող են ստուգել Մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Եթե Մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) սույն գնման գործընթացին տվյալ Մասնակցի մասնակցությունը դադարեցվում է, այդ թվում՝ այդ Մասնակցի հետ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում կնքված բոլոր պայմանագրերը պատվիրատուների կողմից միակողմանիորեն լուծվում են:

2) Մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները Պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

3) ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները Պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

8.6. Սույն հրավերի 8.5 կետի կիրառման նպատակով հրավիրվում է հանձնաժողովի արտահերթ նիստ:

8.7. Պայմանագիր կնքվելու, իսկ սույն ընթացակարգի արդյունքում պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը հրավիրվում է արդյունքների ամփոփման նիստ, որի ընթացքում հայտարարվում են ընթացակարգի արդյունքները:

8.8 Մինչև պայմանագիր կնքելը, Պատվիրատուն հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին: Այդ մասին կարող է հայտարարվել՝

1) արդյունքների ամփոփման նիստում՝ հանրային իրազեկման միջոցով, որին հրավիրվել են գնումների գործընթացի բոլոր Մասնակիցները:

2) նման հայտարարությունը էլեկտրոնային ձևով կամ ֆաքսով կամ փոստով՝ պատվիրված նամակով, կարող է ուղարկվել գնումների գործընթացի բոլոր Մասնակիցներին:

3) նման հայտարարությունը տեղադրվում է լիազորված մարմնի, իսկ հնարավորության դեպքում՝ նաև Պատվիրատուի ինտերնետային կայքում:

8.9 Անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և Պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

**\*Անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում «5» օրացուցային օր է: Անգործության ժամկետը կիրառելի չէ, եթե հայտ է ներկայացրել միայն մեկ Մասնակից, որի հետ կնքվում է պայմանագիր:**

Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե սույն կետով նախատեսված անգործության ժամկետում որևէ Մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը: Մինչև անգործության ժամկետը լրանալը կնքած պայմանագիրն առոչինչ է:

8.10 Ամփոփման նիստի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը կցվում է գնման ընթացակարգի արձանագրությանը: Արձանագրությունն ստորագրում են հանձնաժողովի նիստին ներկա անդամները:

8.11 Եթե հանձնաժողովի անդամը և (կամ) Մասնակիցը ամփոփման նիստի վերաբերյալ ցանկանում է արտահայտել ամփոփման նիստի արձանագրության մեջ չներառված կարծիք (հատուկ կարծիք), ապա դա ներկայացնում է գրավոր՝ նիստի ընթացքում, որը կցվում է սույն մասի 8.10 կետում նշված արձանագրությանը:

## 9. Պայմանագրի կնքումը

9.1 Պայմանագիր կնքվում է հանձնաժողովի որոշման հիման վրա՝ Պատվիրատուի կողմից: Պայմանագիրը կնքվում է գրավոր՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով:

9.2 Ընտրված Մասնակիցը հայտարարվելուն հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում Պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը և պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջը:

9.3 Եթե ընտրված Մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց հետո սույն հրավերի 8.9 կետով նախատեսված անգործության ժամկետի ավարտից 5 օրացուցային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և սույն հրավերի 10.1 կետով նախատեսված ժամկետում Պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի, \*\*իսկ պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում նաև կանխավճարի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Հայտի ապահովումը՝ տուժանքը, վճարում է մասնակիցը, եթե նա հայտարարվել է ընտրված Մասնակից, սակայն հրաժարվում կամ զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

9.4 Մինչև սույն հրավերի 9.3 կետով նախատեսված ժամկետի ավարտը, կողմերի համաձայնությամբ, կարող են պայմանագրի նախագիծն կատարվել փոփոխություններ, սակայն դրանք

չեն կարող հանգեցնել գնման առարկայի բնութագրերի փոփոխմանը, ներառյալ ընտրված մասնակցի առաջարկած գնի ավելացմանը:

**9.5 ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի միջոցով ազատել սույն գործարքի հասույթն ԱԱՀ-ից:**

## **10. Պայմանագրի ապահովումը**

10.1 Պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հինգ օրացուցային օրվա ընթացքում, ընտրված Մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված Մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

10.2 Պայմանագրի կատարման ապահովման չափը կազմում է պայմանագրի գնի տասը տոկոսը: Պայմանագրի ապահովումը ներկայացվում է ընտրված Մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով (Հավելված N 8):

10.3 \*\*\*Պայմանագրով Պատվիրատուի կողմից կանխավճար հատկացվելու պայման նախատեսվելու դեպքում ընտրված Մասնակիցը նախապես Պատվիրատուին է ներկայացնում կանխավճարի ապահովում՝ կանխավճարի չափով, երաշխիքի ձևով (օրինակելի ձևը ըստ Հավելված N 9-ի), ընդ որում՝ պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում կանխավճարի ապահովումը հիմնավորող փաստաթղթում որպես բենեֆիցիար պետք է նշվի Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը: Կանխավճարի մարման կարգը սահմանված է պայմանագրի նախագծով:

10.4 Եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով, ապա պայմանագրի և (կամ) կանխավճարի ապահովումը վերադարձվում է այն ներկայացնողին պայմանագրի կատարման ավարտից հետո ոչ ուշ, քան հինգ օրացուցային օրվա ընթացքում:

\*\*\* Եթե պայմանագրով նախատեսվում է կանխավճար

## **11. Ընթացակարգը չկայացած հայտարարելը**

11.1 Օրենքի 35-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովը սույն ընթացակարգը չկայացած է հայտարարում, եթե՝

- 1) հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին.
- 2) դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը.
- 3) ոչ մի հայտ չի ներկայացվել.
- 4) պայմանագիր չի կնքվում:

11.2. Ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո արգելվում է բացել չբացված հայտերը, որոնք վերադարձվում են Մասնակիցներին:

11.3 Տեղեկագրում հրապարակելու նպատակով, գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելուց հետո հինգ օրացուցային օրվա ընթացքում, Պատվիրատուն լիազորված մարմին է ներկայացնում հայտարարություն, որում նշվում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու հիմնավորումը:

## **12. Գնման գործընթացի հետ կապված գործողությունները և (կամ) ընդունված որոշումները բողոքարկելու մասնակցի իրավունքը և կարգը**

12.1 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու Պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

12.1.1 Յուրաքանչյուր անձ, ով գտնում է, որ պատվիրատուի և (կամ) գնահատող հանձնաժողովի գործողությունների հետևանքով խախտվել են իր իրավունքները, կամ կրել է, կամ կարող է կրել վնասներ, իրավունք ունի ահազանգելու գնումների աջակցման կենտրոնի թեժ գծին:

12.1.2 Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման վերաբերյալ գնումների աջակցման կենտրոնի թեժ գծին ահազանգ ստանալու դեպքում՝

1) գնումների աջակցման կենտրոնն ստացված ահազանգի վերաբերյալ կազմում է արձանագրություն, եթե առկա են հետևյալ տեղեկությունները՝

ա. պատվիրատուի անվանումը,

բ. գնման ընթացակարգի ծածկագիրը և (կամ) առարկան,

գ. գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտման առարկան:

Արձանագրությունը ներառում է նաև ահազանգողի անունը (անվանումը), եթե այն հայտնի է.

2) գնումների աջակցման կենտրոնի պետի հանձնարարականով գնումների աջակցման կենտրոնի համապատասխան ստորաբաժանման ղեկավարը կամ գնումների աջակցման կենտրոնի պետի կողմից լիազորված գնումների աջակցման կենտրոնի այլ պաշտոնատար անձը մեկ աշխատանքային օրվա ընթացքում հեռախոսակապ է հաստատում տվյալ ընթացակարգի գնումների համակարգողի, իսկ անհնարինության դեպքում՝ պատվիրատուի ղեկավարի և (կամ) աշխատակազմի ղեկավարի հետ և վերջինիս տեղեկացնում է ստացված ահազանգի վերաբերյալ: Գնումների աջակցման կենտրոնն ստացված ահազանգի վերաբերյալ ծանուցում է նաև էլեկտրոնային փոստով՝ պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային հասցեի առկայության դեպքում.

3) պատվիրատուն մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնումների աջակցման կենտրոնին է տրամադրում ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները, ինչպես նաև ստացված ահազանգի վերաբերյալ պատվիրատուի գրավոր կարծիքը.

4) եթե պատվիրատուի կողմից ընդունվում է կատարված խախտումը, և պատվիրատուն համաձայնում է անմիջապես վերացնել արձանագրված խախտումը, ապա արձանագրված խախտման և դրա վերացման մասին տեղեկատվությունը պատվիրատուն մեկ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների աջակցման կենտրոնին.

5) եթե պատվիրատուն գտնում է, որ ահազանգված խախտումն առկա չէ, ապա՝

ա. մեկ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն գնումների աջակցման կենտրոն է ներկայացնում հավաստում խախտման բացակայության մասին, ինչպես նաև՝ տվյալ գնման ընթացակարգին վերաբերող բոլոր փաստաթղթերը.

բ. պահանջվող տեղեկատվությունն ստանալուց հետո գնումների աջակցման կենտրոնում հրավիրվում է քննարկում, որին կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ կողմերը.

գ. հրավիրված քննարկման վերաբերյալ կազմվում է արձանագրություն.

դ. քննարկման արդյունքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտում արձանագրվելու դեպքում, գնումների աջակցման կենտրոնի պետի հանձնարարականով, գնումների աջակցման կենտրոնը բողոքարկման գործընթաց է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում.

ե. գնումների աջակցման կենտրոնի կողմից բողոքարկման խորհուրդ բողոքը ներկայացվում է գրավոր՝ գնումների աջակցման կենտրոնի պետի կողմից, որում ներառվում են պատվիրատուի անվանումը և գտնվելու վայրը, բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան, գնումների աջակցման կենտրոնի կողմից արձանագրված խախտման առարկան և պահանջը, ահազանգող անձի պահանջը (եթե նման պահանջ առկա է), բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները, այլ անհրաժեշտ տեղեկություններ.

6) գնումների աջակցման կենտրոնի կողմից բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքը քննվում է գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և գնումների բողոքարկման խորհրդի գործունեության կարգով սահմանված ընթացակարգով:

12.2 Գնումների, այդ թվում բողոքարկումների հետ կապված հարաբերությունները վարչական հարաբերություններ չեն և դրանք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիաիրավական հարաբերությունները կարգավորող օրենսդրությամբ:

12.3 Յուրաքանչյուր անձ իրավունք ունի Օրենքի համաձայն՝

1) նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու Պատվիրատուի և հանձնաժողովի որոշումները գնումների բողոքարկման խորհրդին՝ դիմում ներկայացնելով՝ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին աշխատանքային օրերին և ժամերին, ք. Երևան, Կոմիտասի 54/բ, 115 սենյակ հասցեով,

2) դատական կարգով բողոքարկելու գնումների բողոքարկման խորհրդի, Պատվիրատուի և հանձնաժողովի որոշումները:

12.4 Խորհրդին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝

1) բողոքը ներկայացրած անձի անունը (անվանումը) և հասցեն.

2) Պատվիրատուի անվանումը և հասցեն.

3) բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան.

4) վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

6) բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը, ընդ որում՝ բողոքարկման վճարի չափը կազմում է երեսուն հազար դրամ, որը պետք է փոխանցվի «Հայէկոնոմբանկի Արաբկիրի» մ/ճ, Հ/Հ 163058100971 «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի հաշվեհամարին: Լիազոր մարմնի և գնումների աջակցման կենտրոնի կողմից գնումների բողոքարկման խորհրդում բողոքարկման գործընթաց նախաձեռնվելու դեպքում բողոքարկման համար վճար չի կատարվում.

7) այլ անհրաժեշտ տեղեկություններ:

12.5 Եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը կարող է ներկայացվել միայն սույն մասի 8.9 կետով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

12.6 Եթե բողոքը չի բավարարում Օրենքի 48-րդ հոդվածի պահանջներին, ապա գնումների աջակցման կենտրոնը խորհրդի անունից այդ մասին տեղեկացնում է բողոքը ներկայացրած անձին՝ նրան տալով արձանագրված թերությունները վերացնելու հնգօրյա ժամկետ:

12.7 Բողոքի վերաբերյալ որոշումները կայացվում են այնպիսի ընթացակարգով, որի համաձայն բողոքը ներկայացրած անձը, Պատվիրատուն և ներգրավված բոլոր կողմերն իրավունք ունենան ներկա գտնվելու խորհրդի նիստերին և ներկայացնելու իրենց տեսակետները:

12.7.1 Բողոքի վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացներում գնումների բողոքարկման խորհրդի նիստերին խորհրդակցական ծայնի իրավունքով կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի ներկայացուցիչը:

12.8 Բողոքի վերաբերյալ գրավոր որոշումը, որը ներառում է նաև որոշման հիմնավորումը, ընդունվում և հրապարակվում է բողոքը ստանալու օրվանից ոչ ուշ, քան քսան օրացուցային օրվա ընթացքում: Խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

12.9 Խորհուրդն իրավունք ունի ընդունել հետևյալ որոշումները՝

1) որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառելու ժամանակավոր միջոցներ, որոնք ուղղված են ներկայացված խախտման վերացմանը կամ առնչվող շահերին հասցվելիք հետագա վնասների կանխմանը, այդ թվում՝ գնումների ընթացակարգը կամ Պատվիրատուի, հանձնաժողովի կայացրած որևէ որոշման իրականացումը կասեցնելուն ուղղված միջոցներ.

2) դադարեցնելու գնումների ընթացակարգի ընթացքում Պատվիրատուի կամ հանձնաժողովի կայացրած առանձին որոշումներ, այդ թվում՝ սույն մասի 8.9 կետով նախատեսված անգործության ժամանակահատվածում պայմանագիր կնքելու մասին որոշումը.

3) չեղյալ հայտարարելու կնքված պայմանագիրը՝

ա. եթե Պատվիրատուն պայմանագիրը կնքել է առանց Օրենքի պահանջների համաձայն պայմանագրի մասին ծանուցում հրապարակելու,

բ. Օրենքի 9-րդ հոդվածի կամ սույն մասի 12.17 կետի պահանջները խախտելու դեպքում, եթե նման խախտումը զրկել է շահագրգիռ մասնակցին նախքան պայմանագրի կնքումն իրավական պաշտպանության միջոցների դիմելու հնարավորությունից, և եթե նման խախտումը համադրված է պետական գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ պահանջների խախտման հետ, և եթե վերջին խախտումն ազդել է պայմանագրի կնքելու շահագրգիռ մասնակցի հնարավորությունների վրա.

4) եթե, սույն մասի 12.6 կետի պահանջներին հակառակ, հանձնաժողովը բոլոր համապատասխան փաստերը քննելուց հետո գտնում է, որ ընդհանուր գերակա շահերը պահանջում են ուժի մեջ թողնել պայմանագիրը, ապա կիրառում է այլընտրանքային պատժամիջոցներ՝

ա. պայմանագրի կատարման սահմանափակումը՝ դրա կատարման ժամկետը կրճատելու միջոցով, և (կամ)

բ. Պատվիրատուի հանդեպ պայմանագրի գնի առավելագույնը 10 տոկոսի չափով տուժանքի կիրառում.

5) բոլոր այն դեպքերում, երբ սույն մասի 3-րդ ենթակետով նախատեսված չեղյալ հայտարարելու պատժամիջոցը չի կարող ունենալ հետադարձ ուժ (քանի որ անհնար է վերացնել կատարված պայմանագրային պարտավորությունները), հանձնաժողովը, ի հավելումն, կիրառում է սույն մասի կետի 4-րդ ենթակետի «ա» մասով նախատեսված պատժամիջոցը.

6) հայտարարելու Պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո: Նման որոշումը հիմք է հանդիսանում դատական կարգով ներկայացվելիք վնասի փոխհատուցման հայցի համար.

7) որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին:

12.10 Գնումների բողոքարկման խորհրդի կողմից բողոքը բավարարվելու դեպքում Պատվիրատուն պատասխանատվություն է կրում բողոքը ներկայացրած անձին պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասի հատուցման համար:

12.11 Բողոքի բանավոր քննությունը բաց է հանրության համար և բողոքը ստանալու օրվան հաջորդող երեք օրացուցային օրվա ընթացքում այդ մասին հայտարարություն է հրապարակվում տեղեկագրում:

12.12 Յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացնելով համանման բողոք: Օրենքի 48-րդ հոդվածի համաձայն բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների բողոքարկման խորհուրդ համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

12.13 Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն այն կայացնելու օրվանից՝ 5 օրացուցային օրվա ընթացքում, հրապարակվում է տեղեկագրում և ուղարկվում է Պատվիրատուին, լիազորված մարմին ու բողոքարկման ընթացակարգում ներգրավված կողմերին:

12.14 Յուրաքանչյուր անձ, որը շահագրգռված է կոնկրետ գործարքի կնքման հարցում, և որը վնասներ է կրել Պատվիրատուի, հանձնաժողովի կամ գնումների բողոքարկման խորհրդի կողմից կատարած խախտման հետևանքով, իրավունք ունի դատական կարգով պահանջելու վնասների փոխհատուցում:

12.15 Խորհուրդը կայացնում է բողոքը ներկայացրած անձի պահանջած ժամանակավոր միջոցը կիրառելու մասին որոշում, եթե նման միջոցը պատշաճ և անհրաժեշտ է ակնկալվող վնասը մինչև բողոքի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը կանխելու համար:

12.16 Խորհուրդը հաշվի է առնում ժամանակավոր միջոցի հնարավոր հետևանքները բոլոր այն շահերի, այդ թվում՝ հանրային շահի համար, որոնք կրելու են վնասներ, և կարող է կայացնել նման միջոց չկիրառելու մասին որոշում, եթե դրա բացասական հետևանքները կարող են գերազանցել օգուտը: Ժամանակավոր միջոց չկիրառելու մասին որոշումը չի կարող ազդել նման միջոցի դիմած անձի որևէ այլ հայցի վրա:

12.17 Բողոքը ինքնաբերաբար չի կասեցնում պայմանագրի կնքման ընթացակարգը, սակայն մինչև խորհրդի կողմից սույն հրավերի 12.15-րդ կամ 12.16-րդ կետերով նախատեսված որոշման ընդունումը Պատվիրատուն իրավունք չունի պայմանագիր կնքելու:

### 1. Ընդհանուր դրույթներ

1.1 Սույն հրահանգը նպատակ ունի օժանդակել Մասնակիցներին հայտը պատրաստելիս:

1.2 Նպատակահարմարության դեպքում Մասնակիցը պահանջվող տեղեկությունները կարող է ներկայացնել սույն հրահանգով առաջարկվող ձևերից տարբերվող՝ այլ ձևերով՝ պահպանելով պահանջվող վավերապայմանները:

1.3 Հայտերը (ներառվող բոլոր փաստաթղթերը, բացառությամբ սույն հրահանգի 3.2 կետում նշված դեպքերի) պետք է կազմված լինեն հայերեն:

### 2. Ընթացակարգի հայտը

2.1 Սույն ընթացակարգին մասնակցելու համար անհրաժեշտ է Պատվիրատուին ներկայացնել հայտ:

Հայտը սույն հրավերով նախատեսված կարգով սույն ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող անձի կողմից նախապատրաստված և Պատվիրատուին ներկայացված գնման առարկայի վերաբերյալ առաջարկն է, որը ներկայացվում է ընթացակարգին մասնակցելու դիմումով՝ (Հավելված N 1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն:

2.2 Մասնակիցները հայտով ներկայացնում են՝

2.2.1 «Մասնակցության իրավունքը» չափանիշի՝ սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության, մասին հայտարարություն իր իսկ կողմից հաստատված՝ ստորագրված և կնքված այն մասին, որ Մասնակիցը՝

1) դատական կարգով սնանկ ճանաչված չէ,

2) չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,

3) որի գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4) ներառված չի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

5) չունի գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

Նշված հայտարարության առաջարկվող ձևը և դրա նկատմամբ առաջադրվող պահանջները ներկայացված են սույն հրավերի N 2 հավելվածում:

Եթե մասնակիցը հայտով ներկայացրել է սույն հրավերի 2.2.1 կետով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին գրավոր հայտարարություն, ապա տվյալ մասնակիցն իրավունք է ստանում մասնակցելու գնման ընթացակարգին: Բացի հայտարարությունից, 2.2.1 կետով նախատեսված պահանջների հիմնավորման նպատակով մասնակցից, այդ թվում՝ ընտրված մասնակցից այլ փաստաթղթեր չեն կարող պահանջվել:

Եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապացուցվել է մասնակցի՝ գնումների գործընթացում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման դրսևորման փաստը, ապա տվյալ մասնակիցը ներառվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

2.2.2 Հրավերով նախատեսված որակավորման պահանջներին իրենց համապատասխանության մասին իր իսկ կողմից հաստատված՝ ստորագրված և կնքված հայտարարություն (Հավելված N 3), որ ունի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը,

2) մասնագիտական փորձառություն,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ

և պարտավորվում է սույն հրավերով սահմանված կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները),

2.2.3 Հավելված N 3.1-ով պահանջվող տեղեկությունները և հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման ծառայությունների մատուցման գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր: Գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են սույն հրավերով նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը հետևյալն է՝ նմանատիպ են համարվում՝ **Նմանատիպ են համարվում ISA միջազգային աուդիտորական ստանդարտներով աուդիտորական ծառայությունների մատուցումը:**

Հրավերով սահմանված՝ համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության դեպքում առկա տարբերությունը մեկնաբանվում է ի օգուտ մասնակցի:

Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

2.2.4 Հայտարարություն՝ մասնագիտական փորձառության մասին (Հավելված N 3.2), որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր՝ կցելով նախկինում կատարած պայմանագրի (կամ պայմանագրերի) պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետներում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը: Ընդ որում՝ նախկինում կատարված պայմանագիրը /կամ պայմանագրերը/ գնահատվում է /կամ գնահատվում են/ նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

2.2.5 Չձևափոխված /դրական/ աուդիտորական եզրակացություն՝ այն մասնակիցների դեպքում որոնց համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված է պարտադիր աուդիտի ենթարկվելու պահանջ:

Այն ընկերությունների դեպքում, որոնց համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված է պարտադիր աուդիտի ենթարկվելու պահանջ՝ Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե աուդիտորական եզրակացությունը տրված է ՀՀ կառավարության 29/11/2011թ. N 1931-Ն որոշմամբ նախատեսված «Աուդիտի միջազգային ստանդարտ 700-ի» պահանջներին համապատասխան:

2.2.6 Հայտարարություն (Հավելված N 3.4) պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսների առկայության մասին, տեղեկանք՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար Մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին (Հավելված N 5.3): Ընդ որում աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար Մասնակցից ներկայացնում է առաջադրված աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատած **գրավոր համաձայնությունների՝** իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները: Մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

2.2.7 Գնային առաջարկ, որը ներկայացվում է արժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում (Հավելված N 4),

2.2.8. հայտի ապահովում՝ տուժանքի ձևով (Հավելված N 7),

2.2.9 Պայմանագրերը գործակալության պայմանագրեր կնքելու միջոցով իրականացվելու դեպքում, անհրաժեշտ է հայտով ներկայացնել սույն հրավերի 1-ին մասի 7.4.1 և 7.4.2 կետերով սահմանված փաստաթղթերը:

### **3. Մասնակցի կողմից ներկայացվող փաստաթղթերի կազմմանը ներկայացվող պահանջները**

3.1 Հայտում ներառված բոլոր կնքված փաստաթղթերը պետք է ստորագրված լինեն կնքողի կողմից:

3.2 Հայտում ներառվող՝ դիպլոմների պատճենները, տրանսպորտային միջոցների, տեխնիկական միջոցների, սարքերի, սարքավորումների վերաբերյալ փաստաթղթերը, որոնք տրամադրվել են խորհրդային ժամանակաշրջանում կամ հետխորհրդային ժամանակաշրջանում՝ Հայաստանի Հանրապետության պետական մարմինների կողմից, կարող են կազմված լինել ռուսերեն լեզվով, եթե դրանք ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ուժը կորցրած չեն ճանաչվել (համարվել):

3.3 Հայտում ներառվող բնօրինակ փաստաթղթերի փոխարեն կարող են ներկայացվել դրանց նոտարական կարգով վավերացված օրինակները:

3.4 Սույն հրահանգի բոլոր այն փաստաթղթերը, որոնք ստորագրվում և(կամ) կնքվում են Մասնակցի կողմից, ինչպես նաև այն փաստաթղթերը, որոնք պահանջվել են ստորագրված և(կամ) կնքված լինեն տրամադրողի կողմից՝ պետք է ստորագրված և(կամ) կնքված լինեն բնօրինակով:

### **4. Հայտի գնային առաջարկը**

4.1 Առաջարկվող գինը ծառայությունների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, որի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

4.2 Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա մասնակցի ներկայացրած գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է տվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի չափը: Ընդ որում, բացառությամբ Հայաստանի Հանրապետության անունից կնքված համաձայնագրերով (պայմանագրերով) նախատեսված դեպքերի մասնակցի (մասնակիցների) գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարի հաշվարկման:

4.3 Գնահատող հանձնաժողովի կողմից ստուգվում են ոչ գնային պայմաններին համապատասխանող հայտերում ներառված գնային առաջարկների, իսկ շինարարական աշխատանքների դեպքում՝ նաև ծավալաթերթ-նախահաշիվների թվաքանակային ճշտությունը: Թվաքանակային սխալների հայտնաբերման դեպքում գնահատող հանձնաժողովը կատարում է սխալների ուղղում հետևյալ կարգով.

1) եթե առկա է անհամապատասխանություն գումարների թվային և բառային արտահայտությունների միջև, ապա հիմք է ընդունվում բառային արտահայտությունը:

2) եթե հայտնաբերված սխալը միավորի համար մասնակցի կողմից սահմանված միավորի գնի և տվյալ (առանձին) ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ընդհանուր քանակի սխալ բազմապատկման արդյունք է, ապա ուղղումը կատարվում է միավորի համար առաջարկված գնի պահպանմամբ՝ փոխելով ապրանքի, աշխատանքի կամ ծառայության համար առաջարկված ընդհանուր գինը:

3) եթե հայտնաբերված սխալը միավորի համար մասնակցի կողմից սահմանված միավորի գնի տասնորդական գրառման մեջ ստորակետի ոչ ճիշտ տեղում դնելու կամ սխալ կլորացման արդյունք է, ապա ճշտումը կատարվում է տվյալ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության համար առաջարկված ընդհանուր գնի պահպանմամբ՝ ճշտելով միավորի գինը:

4) գնահատող հանձնաժողովը կատարված ուղղումների արդյունքների մասին երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին: Եթե մասնակիցը ծանուցումն ստանալու պահից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով չի հայտնում իր համաձայնությունը ճշգրտված գնային առաջարկի մասին, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

### **5. Հայտերը պատրաստելու կարգը**

5.1 Մասնակիցը հայտը ներկայացնում է սույն հրավերով սահմանված կարգով:

Հայտը փաստաթղթային ձևով ներկայացնելու դեպքում մասնակցի առաջարկները, դրանց վերաբերող փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում է այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից: Փաստաթղթերի փաթեթների վրա համապատասխանաբար գրվում են «բնօրինակ» և «պատճեն»:

բառերը: Ծրարը և հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմված փաստաթղթերը ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորված անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

5.2 Սույն հրահանգի 5.1 կետում նշված ծրարի վրա հայտը կազմելու լեզվով նշվում են՝

ա) Պատվիրատուի անվանումը և հայտի ներկայացման վայրը (հասցեն).

բ) պարզեցված ընթացակարգի ծածկագիրը.

գ) «չբացել մինչև հայտերի բացման նիստը» բառերը.

դ) մասնակցի անվանումը (անունը), գտնվելու վայրը և հեռախոսահամարը:

5.3 Սույն հրահանգի 5.1 և 5.2 կետերի պահանջներին չհամապատասխանող հայտերը հանձնաժողովը հայտերի բացման նիստում մերժում է և նույնությամբ վերադարձնում ներկայացնողին:

**Դ Ի Մ ՈՒ Մ**

**Պ ա Ր զ Ե ց Վ ա ծ   ը ն   թ ա ց ա կ ա Ր գ ի ն   մ ա ս ն ա կ ց Ե լ ու**

\_\_\_\_\_ հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու  
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

ՀՀ առողջապահության նախարարության կողմից «ԳՀ ՊԸԾՁԲ-14/2» ծածկագրով հայտարարված  
պարզեցված ընթացակարգի ..... չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի  
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

\_\_\_\_\_ -ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից  
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող  
կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է,  
բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

\_\_\_\_\_ -ի էլեկտրոնայանին փոստի հասցեն է՝ «Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե»:  
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

\_\_\_\_\_ Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

\_\_\_\_\_ (ստորագրությունը)

Կ. Տ.

\_\_\_\_\_ 20 թ.  
(ամսաթիվը, ամիսը)

**Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

**Պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի  
պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին**

\_\_\_\_\_ -ն հայտնում և հավաստում է, որ.

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

1) դատական կարգով սնանկ ճանաչված չէ,

2) չունի ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր  
սոցիալական ապահովության վճարների գծով,

3) «\_\_\_\_\_»-ի գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված չի եղել տնտեսական գործունեության  
կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի,  
երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,

4)» \_\_\_\_\_ «-ն ներառված չի գնումների գործընթացին մասնակցելու

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում,

5) բացակայում է գերիշխող դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն,

\_\_\_\_\_ (մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

\_\_\_\_\_ (ստորագրությունը)

Կ. Տ.

20 թ.

\_\_\_\_\_ (ամսաթիվը, ամիսը)

**Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

**Պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման  
պահանջներին  
համապատասխանության մասին**

է, որ.

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

ունի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով  
պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված  
գործունեությանը,

2) մասնագիտական փորձառություն,

3) ֆինանսական միջոցներ,

4) աշխատանքային ռեսուրսներ:

—ն պարտավորվում է «Գնումների մասին» ՀՀ

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել սույն հայտարարությունը հիմնավորող՝  
հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

20 թ.

(ամսաթիվը, ամիսը)

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք****Մասնագիտական գործունեության՝ պայմանագրով նախատեսված  
գործունեությանը համապատասխանությունը մասին**

| Նախկինում կատարված պայմանագրերի |                                                    |                                                   |
|---------------------------------|----------------------------------------------------|---------------------------------------------------|
| առարկան                         | ծավալը՝ գումարային<br>արտահայտությամբ<br>(ՀՀ դրամ) | պատվիրատուի և նրա հետ կապ հաստատելու<br>տվյալները |
| 1                               | 2                                                  | 3                                                 |
| Տարեթիվը՝ ..... թվական          |                                                    |                                                   |
| 1.                              |                                                    |                                                   |
| 2.                              |                                                    |                                                   |
| ..                              |                                                    |                                                   |
| Տարեթիվը՝ ..... թվական          |                                                    |                                                   |
| 1.                              |                                                    |                                                   |
| 2.                              |                                                    |                                                   |
| ..                              |                                                    |                                                   |
| Տարեթիվը՝ ..... թվական          |                                                    |                                                   |
| 1.                              |                                                    |                                                   |
| 2.                              |                                                    |                                                   |
| ..                              |                                                    |                                                   |

Սույնով \_\_\_\_\_-ն հայտնում և հավաստում է, որ հայտը  
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում վերջինս պատշաճ ձևով  
իրականացրել է գնման առարկա հանդիսացող կամ համանման ծառայությունների մատուցման  
գործարքներ՝ նախկինում կատարված պայմանագրեր:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

20 թ.

(ամսաթիվը, ամիսը)

**Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն**  
**Մասնագիտական փորձառության մասին**

Սույնով \_\_\_\_\_-ն հայտնում և հավաստում է, որ  
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

պարզեցված ընթացակարգի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների  
ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է \_\_\_\_\_որի ընդհանուր  
(\*համանման (նմանատիպ) պայմանագրի(երի) անվանումը(ները))

արժեքը կազմել է ----- ՀՀ դրամ:

\*Ընդ որում դրա (դրանց) շրջանակներում մատուցված ծառայությունների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝  
գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային  
առաջարկի հիսուն տոկոսից:

\_\_\_\_\_  
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

Կ. Տ.

\_\_\_\_\_  
(ամսաթիվը, ամիսը) 20 թ.

**Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**  
**Աշխատանքային ռեսուրսների մասին**

Սույնով \_\_\_\_\_-ն հայտարարում և հավաստում է, որ  
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կազմակերպությունն ունի կնքվելիք պայմանագրի կատարման համար անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսներ և այդ աշխատանքային ռեսուրսներով հնարավոր է ապահովել կնքվելիք գործարքով նախատեսված պարտավորությունների պատշաճ կատարումը:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

20 թ.

(ամսաթիվը, ամիսը)

## Գ ն ի առաջարկ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված «ԳՀ ՊԸԾՁԲ-14/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,

\_\_\_\_\_ -ն առաջարկում է պայմանագիրը կատարել

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հետևյալ գներով.

(ՀՀ դրամ)

| Չափա-<br>բաժինների<br>համարներ<br>ը | Ծառայության անվանումը                                                                                                                                                        | Արժեք* | ԱԱՀ** | Առաջարկված գինը<br>/տառերով և թվերով/ |
|-------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------|-------|---------------------------------------|
| 1                                   | 2                                                                                                                                                                            | 3      | 4     | 5=3+4                                 |
| 1                                   | Ծրագրի անվանում՝ «Առողջապահական համակարգի հզորացում»՝ 01.01.2013-31.12.2013                                                                                                  |        |       |                                       |
| 2                                   | Ծրագրի անվանում՝ «Առողջապահական համակարգի հզորացում»՝ 01.01.2014 -31.12.2014;<br>01.01.2015-31.03.2015                                                                       |        |       |                                       |
| 3                                   | Ծրագրի անվանում՝ «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»՝ 01.01.2013-31.12.2013                                                  |        |       |                                       |
| 4                                   | Ծրագրի անվանում՝ «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»՝ 01.01.2014 -31.12.2014                                                 |        |       |                                       |
| 5                                   | Ծրագրի անվանում՝ «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում»՝ 01.01.2013-31.12.2013  |        |       |                                       |
| 6                                   | Ծրագրի անվանում՝ «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում»՝ 01.01.2014 -31.12.2014 |        |       |                                       |

\*3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:

\*\*Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունյակում:

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

20 թ.

(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 5

«ԳՀ ՊԸԾՁԲ-14/2» ծածկագրով

պարզեցված ընթացակարգի հրավերի

«ԳՀ ՊԸԾՁԲ-14/2» ծածկագրով

պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

«ՀՀ առողջապահության նախարարություն»-ին

Կից Ձեզ եմ ներկայացնում \_\_\_\_\_-ի՝ «ԳՀ ՊԸԾՁԲ-14/2» ծածկագրով

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

պարզեցված ընթացակարգին մասնակցելու հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին  
համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված  
փաստաթղթերը(տեղեկությունները)։

\_\_\_\_\_  
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

Կ. Տ.

20 թ.

\_\_\_\_\_  
(ամսաթիվը, ամիսը)

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Կնքվելիք պայմանագրի կատարման համար Մասնակցի կողմից առաջարկվող  
հիմնական աշխատակազմի մասին

| N  | Հիմնական աշխատակազմում ներառված մասնագետների |              |                    |                                           |                                              |
|----|----------------------------------------------|--------------|--------------------|-------------------------------------------|----------------------------------------------|
|    | Անուն Ազգանունը                              | Որակավորումը | Աշխատանքային փորձը |                                           | Գործատուն և նրա հետ կապ հաստատելու տվյալները |
|    |                                              |              | Ժամանակահատվածը    | Գործունեության ոլորտը և կատարած աշխատանքը |                                              |
| 1  | 2                                            | 3            | 4                  | 5                                         | 6                                            |
| 1. |                                              |              |                    |                                           |                                              |
| 2. |                                              |              |                    |                                           |                                              |
| 3. |                                              |              |                    |                                           |                                              |
| .. |                                              |              |                    |                                           |                                              |
| .. |                                              |              |                    |                                           |                                              |

Կից ներկայացնում ենք \_\_\_\_\_

(հիմնական աշխատակազմում ներգրավված մասնագետների հաստատված գրավոր համաձայնությունները՝ իրականացվելիք աշխատանքներում վերջիններիս ներգրավվելու մասին, ինչպես նաև մասնագետների անձնագրերի և որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները:)

---

 Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

---

 (ստորագրությունը)

Կ. Տ.

20 թ.

(ամսաթիվը, ամիսը)

# ՑԱՆԿ

## «ԳՀ ՊԸԾՁԲ-14/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվող փաստաթղթերի

| N<br>ը/կ                | Փաստաթղթի անվանումը                                                                                                                                                                        | Հրավերի<br>համապատասխան<br>հավելվածը | Նշումներ |
|-------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------|----------|
| 1                       | Պարզեցված ընթացակարգին մասնակցելու դիմում                                                                                                                                                  | Հավելված 1                           |          |
| 2                       | Գործակալության առկայության դեպքում՝ գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տվյալները)                                              |                                      |          |
| 3                       | Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում՝ համատեղ գործունեության պայմանագիր                                                                                       |                                      |          |
| 4                       | Հայտարարություն՝ պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին                                                        | Հավելված 2                           |          |
| 5                       | Հայտարարություն՝ պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման պահանջներին համապատասխանության մասին                                                                                | Հավելված 3                           |          |
| 5.1                     | Տեղեկանք՝ Մասնագիտական գործունեության համապատասխանությունը պայմանագրով նախատեսված գործունեության մասին                                                                                     | Հավելված 3.1                         |          |
| 5.2                     | Հայտարարություն՝ Մասնագիտական փորձառության մասին                                                                                                                                           | Հավելված 3.2                         |          |
| 5.4                     | Հայտարարություն՝ Աշխատանքային ռեսուրսների մասին                                                                                                                                            | Հավելված 3.4                         |          |
| 6                       | Գնի առաջարկ                                                                                                                                                                                | Հավելված 4                           |          |
| 8                       | Տուժանքի մասին համաձայնություն                                                                                                                                                             | Հավելված 7                           |          |
| 9                       | Գրություն՝ պարզեցված ընթացակարգին մասնակցելու իրավունքի և հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի(տեղեկությունների) | Հավելված N 5                         |          |
| 10.1                    | Կից ներկայացվող համապատասխան փաստաթղթեր                                                                                                                                                    |                                      |          |
| 11                      | Տեղեկանք՝ կնքվելիք պայմանագրի կատարման համար Մասնակցի կողմից առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին                                                                                         | Հավելված N 5.3                       |          |
| 11.1                    | Կից ներկայացվող համապատասխան փաստաթղթեր                                                                                                                                                    |                                      |          |
| 12                      | Գործակալության առկայության դեպքում՝ հրավերով պահանջված համապատասխան փաստաթղթերը                                                                                                            |                                      |          |
| 13                      | Համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցելու դեպքում՝ համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները                                             |                                      |          |
| <b>Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը՝</b> |                                                                                                                                                                                            |                                      |          |

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

20 թ.

(ամսաթիվը, ամիսը)

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՐՏԱՔԻՆ ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N «ԳՀ ՊԸԾՁԲ-14/2»**

ք. Երևան

\_\_\_\_\_ 2014 թ.

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս աշխատակազմի ղեկավար Ս.Քրմոյանի, որը գործում է Պատվիրատուի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «\_\_\_\_\_» \_\_\_\_\_-ն (այսուհետ՝ Կատարող), ի դեմս \_\_\_\_\_ի, որը գործում է \_\_\_\_\_ հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է արտաքին անկախ աուդիտորական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջներին համապատասխան, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել Ծառայության համար:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է Պայմանագրի Հավելված N 1-ում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը Պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց, պահանջել Կատարողից վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջներին,

բ) խախտվել է Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3 Ապահովել սույն գործարքի ազատումն ավելացված արժեքի հարկից՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի միջոցով:

### 2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի Հավելված N 1-ով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ (Հավելված N 2), հաշիվ-ապրանքագրի 2 (երկու) օրինակ, ինչպես նաև Պայմանագրի Հավելված 1-ով պահանջվող հաշվետվությունները:

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության և հաշիվ-ապրանքագրի մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, և \_\_\_\_\_ (\_\_\_\_\_) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով (**հաստատվելու է Պայմանագրի 7.1 կետում նշված լրացուցիչ համաձայնագրով**) նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014 թ. դեկտեմբերի 25-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման որակի և Պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի Հավելված N 1-ում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## **6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում **համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո լրացուցիչ համաձայնագրի կնքման պահից** և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) Պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես

համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

7.4 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.6 Պայմանագիրը կազմված է \_\_\_\_\_ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Պայմանագրի N 1 և N 2 հավելվածները հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

## **8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**Պ ա տ վ ի ր ա տ ու**

**Կ ա տ ա ր ո ղ**

\_\_\_\_\_  
(ստորագրություն)

Կ.Տ.

\_\_\_\_\_  
(ստորագրություն)

Կ.Տ.

## **ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

**Հիմնական ստացող (ՀՍ)՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն**

**Դրամաշնորհի համար՝ ARM-809-G04-S**

**Ծրագրի անվանում՝ «Առողջապահական համակարգի հզորացում»**

**Աուդիտի ենթակա ժամանակահատված՝**

**Չափաբաժին 1----- 01.01.2013-31.12.2013,**

**Չափաբաժին 2----- 01.01.2014 -31.12.2014, 01.01.2015-31.03.2015**

### **Տեխնիկական բնութագիր**

#### **1. Ծրագրի նկարագիր, աուդիտի կառուցվածք և կազմակերպությունների նկարագիր**

##### **1.1 Ծրագրի նկարագիր:**

«ԶԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամ» շահույթ չհետապնդող հիմնադրամի, որը ստեղծվել է Շվեյցարիայի օրենքներով (այսուհետ՝ Գլոբալ հիմնադրամ) և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության (այսուհետ՝ Հիմնական Ստացող) միջև կնքված համաձայնագրի շրջանակներում Գլոբալ հիմնադրամը ֆինանսավորում է Հիմնական Ստացողին «Առողջապահական համակարգի հզորացում» ծրագիրն իրականացնելու նպատակով:

Լինելով հետխորհրդային երկիր՝ Հայաստանը ժառանգել է տարածաշրջանի առողջապահական համակարգերին բնորոշ խնդիրներից շատերը: Երկիրը աշխատանքներ է իրականացնում իր առողջապահական համակարգի բարեփոխման ուղղությամբ՝ այն կողմնորոշելով դեպի առողջության առաջնային պահպանումը և համայնքային մոտեցումը: Ստանալով այս դրամաշնորհը՝ Հայաստանը դարձավ տարածաշրջանի առաջին երկիրը, որն ուղղակի աջակցություն ստացավ իր առողջապահական համակարգը բարելավելու նպատակով: Բարեփոխման նպատակների թվում են առողջապահական ոլորտի աշխատուժի հզորացումն և զարգացումը, պալիատիվ խնամքի համակարգի ներդրումը առողջապահական համակարգում և արյան անվտանգության ազգային ռազմավարության իրականացումը, ՏԲ և ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի բուժման և ախտորոշման համար դեղերի և բժշկական պարագաների գնման և մատակարարման ներուժի զարգացումը, առողջապահության ոլորտի ազգային ռազմավարությունների մշակումն ու իրականացումը:

Ծրագրի երկրորդ փուլի համար դրամաշնորհի ընդհանուր գումարը կազմում է 700,173 եվրո 2012 թվականի ապրիլից մինչ 2015 թվականի մարտն ընկած ժամանակահատվածի համար (Դրամաշնորհի համար ARM-809-G04-S կնքված 2012թվականի դեկտեմբերին): Այս դրամաշնորհի հիմնական ստացող է հանդիսանում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, որը

ծրագրային աշխատանքներն իրականացնում է ենթաստացողների՝ պալիատիվ խնամքի զարգացման մասով «Պացիենտների իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ-ի, ինչպես նաև Առողջապահության ազգային ինստիտուտի, Արյունաբանական հանրապետական կենտրոնի և Դեղերի ու բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոնի միջոցով:

## 1.2 Ծրագիրն իրականացնող կազմակերպություններ

Առդիտն իրականացվելու է հետևյալ կազմակերպություններում.

| Կազմակերպության տվյալները                                                                                                                                                                                                                                 | Նկարագիր                                                                                                                                   | Յուրաքանչյուր հաստատությունում առդիտի իրականացման ժամանակահատվածը                   |
|-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------|
| ՀՀ առողջապահության նախարարություն                                                                                                                                                                                                                         | Հիմնական ստացող                                                                                                                            | 1. 01.01.2013 -31.12.2013<br>2. 01.01.2014 -31.12.2014<br>3. 01.01.2015 -31.03.2015 |
| «Պացիենտների իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ<br>Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նոր Նորք 0076, Հովհաննիսյան փող. 14, բն. 41<br>հեռ.՝ (+374 91) 312516,<br>էլ.փոստ՝<br>pkhachatryan@yahoo.com<br>(տնօրեն Պ. Խաչատրյան)                                         | Ենթաստացող, որը պատասխանատու է պալիատիվ խնամքի իրականացման համար                                                                           | 1. 01.01.2013 -31.12.2013<br>2. 01.01.2014 -31.12.2014                              |
| «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ<br>Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պող. 49/4, հեռ՝ +37410 237134, էլ.փոստ՝ director@nih.am, <a href="mailto:zelveian@hotmail.com">zelveian@hotmail.com</a><br>(տնօրեն Պ. Զելվեյան) | Ենթաստացող, որը պատասխանատու է Ազգային առողջապահական տեղեկատվական համակարգի հզորացման և Ազգային առողջապահական ռազմավարության մշակման համար | 1. 01.01.2013 -31.12.2013<br>2. 01.01.2014 -31.12.2014                              |
| «Պրոֆեսոր Ռ.Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ<br>Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Հ. Ներսիսյան փող. 7<br>հեռ.՝(+374 10) 283800,<br>էլ.փոստ՝<br>armhaem@arminco.com<br>(տնօրեն Ս. Դադբաշյան)                                                                | Ենթաստացող, որը պատասխանատու է արյան անվտանգության ազգային ռազմավարության իրականացման համար                                                | 1. 01.01.2013 -31.12.2013<br>2. 01.01.2014 -31.12.2014<br>3. 01.01.2015 -31.03.2015 |
| «Դեղերի ու բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ<br>Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պող. 49/4, հեռ.՝(+374 10) 231682, էլ.փոստ՝admin@pharm.am<br>(տնօրեն՝ Հ. Թովիչյան)                                                                           | Ենթաստացող, որը պատասխանատու է առաջնային հիվանդությունների համար դեղերի և բժշկական պարագաների գնման և մատակարարման ներուժի զարգացման համար | 1. 01.01.2013-31.12.2013                                                            |

Գլոբալ հիմնադրամի դրամաշնորհի բյուջեն և ծախսերը (յուրաքանչյուր կազմակերպության ամփոփ բյուջեն և ծախսերը եվրոյով) ներկայացված են ծրագրի օրացուցային տարիների համար (01.01.2013-ից մինչ 31.12.2013: 01.01.2014-ից մինչ 31.12.2014 և 01.01.2015-ից մինչ 31.03.2015):

#### Չափաբաժին 1

| Կազմակերպություն                                                         | 01.01.2013-<br>31.12.2013<br>բյուջե<br>(Եվրո) | 01.01.2013-<br>31.12.2013<br>Փաստացի<br>ծախսեր (Եվրո) |
|--------------------------------------------------------------------------|-----------------------------------------------|-------------------------------------------------------|
| ՀՀ առողջապահության նախարարություն                                        | 153,452                                       | 110,757                                               |
| «Պացիենտների իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ                      | 64,218                                        | 52,824                                                |
| «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ | 14,967                                        | 53,331                                                |
| Պրոֆեսոր Ռ.Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն ՓԲԸ                   | 8,175                                         | 33,632                                                |
| Դեղերի ու բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն ՓԲԸ               | 2,873                                         | 17,455                                                |
| <b>Ընդամենը</b>                                                          | <b>243,685</b>                                | <b>267,999</b>                                        |

#### Չափաբաժին 2

| Կազմակերպություն                                                         | 01.01.2014-<br>31.12.2014<br>բյուջե<br>(Եվրո) | 01.01.2014-<br>31.12.2014<br>Փաստացի<br>ծախսեր (Եվրո)<br>(նախատեսված) |
|--------------------------------------------------------------------------|-----------------------------------------------|-----------------------------------------------------------------------|
| ՀՀ առողջապահության նախարարություն                                        | 80,572                                        | 107,633                                                               |
| «Պացիենտների իրավունքների պաշտպանության կենտրոն» ՀԿ                      | 19,513                                        | 19,513                                                                |
| «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ | 3,900                                         | 22,497                                                                |
| «Պրոֆեսոր Ռ.Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ                 | 5,703                                         | 5,703                                                                 |
| <b>Ընդամենը</b>                                                          | <b>109,688</b>                                | <b>155,346</b>                                                        |

#### Չափաբաժին 2

| Կազմակերպություն                                         | 01.01.2015-<br>31.03.2015<br>բյուջե<br>(Եվրո) | 01.01.2015-<br>31.03.2015<br>Փաստացի<br>ծախսեր (Եվրո)<br>(նախատեսված) |
|----------------------------------------------------------|-----------------------------------------------|-----------------------------------------------------------------------|
| ՀՀ առողջապահության նախարարություն                        | 7,649                                         | 7,649                                                                 |
| «Պրոֆեսոր Ռ.Հ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ | 700                                           | 700                                                                   |
| <b>Ընդամենը</b>                                          | <b>8,349</b>                                  | <b>8,349</b>                                                          |

## 2. ՀՀ ԱՆ Գլոբալ հիմնադրամի ծրագրերը համակարգող խմբի (ԾՀԽ) պատասխանատու անձանց տվյալներ.

ԾՀԽ ղեկավար  
Հեռախոսահամար  
Էլ. փոստ

Հասմիկ Հարությունյան  
+374 10 54 36 50  
h.harutyunyan@moh.am

ԾՀԽ ֆինանսական ղեկավար  
Հեռախոսահամար  
Էլ. Փոստ

Էլեն Գալաջյան  
+374 10 54 36 50  
[e.galajyan@moh.am](mailto:e.galajyan@moh.am)

ԾՀԽ ԱՀՀ ծրագրի համակարգող  
Հեռախոսահամար  
Էլ. Փոստ

Մայա Սիմոնյան  
+374 10 54 36 51  
[m.simonyan@moh.am](mailto:m.simonyan@moh.am)

Հաշվապահ  
Հեռախոսահամար  
Էլ. փոստ

Ռաֆայել Վարդանյան  
+374 10 54 36 51  
[r.vardanyan@moh.am](mailto:r.vardanyan@moh.am)

### 3. Պահանջվող փաստաթղթեր

Աուդիտի իրականացման ժամանակահատվածի ընթացքում ՀՍ պետք է աուդիտորին տրամադրի վերջինիս կողմից պահանջվող՝ դրամաշնորհի հետ կապված բոլոր գրանցամատյանները և փաստաթղթերը, ներառյալ՝ ՀՍ և ԵՍ բոլոր հիմնական փաստաթղթերի և գրանցամատյանների ցանկը՝ նշելով նրանց գտնվելու վայրը՝ ԱՆ կամ ԵՍ գրասենյակներ: Աուդիտորի կողմից պահանջվող փաստաթղթերի ցանկը ներառում է.

- Դրամաշնորհային ծրագրի ֆինանսական քաղվածքները,
- Դրամաշնորհային և ենթադրամաշնորհային համաձայնագրերը,
- Եկամուտների և ծախսերի, ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական միջոցների հետ կապված հիմնական ֆինանսական փաստաթղթերը,
- Դրամաշնորհային ծրագրի գործունեության հետ կապված ամսական կամ եռամսյակային հաշվետվությունները (ծրագրային և ֆինանսական),
- Շրջանառու մնացորդային հաշվեկշիռը, դրամարկղային գիրքը, այլ կարևոր մատյաններ և փաստաթղթեր, որոնք հիմնված են Client Treasury և այլ հաշվապահական համակարգերի վրա,
- Բոլոր ծախսերի հետ կապված փաստաթղթերի բնօրինակները (հաշիվ-ապրանքագրերը, բժշկական ապրանքների ձեռքբերում կամ մրցույթների անցկացում պահանջող այլ գնումների հիմքերը, աշխատավարձերը, վաուչերները և այլն),
- Բանկային քաղվածքները;
- ԳՀ և ՀՍ, ԳՀ և ԵՍ-ների միջև դրամաշնորհի իրականացման հետ կապված հարցերի վերաբերյալ կարևոր նամակագրությունը,
- Դրամաշնորհային ծրագրերի գործառնական ձեռնարկը,
- Ներքին աուդիտի և ցանկացած այլ հաշվետվություններ, որոնք արտացոլում են դրամաշնորհային ծրագրի ծախսերը, դրամաշնորհների հետ կապված կառավարչական և այլ հարցեր:

### 4. Աուդիտի նպատակներ

4.1 Աուդիտի նպատակն է ստանալ աուդիտորի մասնագիտական եզրակացությունը դրամաշնորհային ծրագրի ֆինանսական կարգավիճակի վերաբերյալ՝ հաշվետու

Ժամանակահատվածի վերջի դրությամբ, ինչպես նաև հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ստացված միջոցների և կատարված ծախսերի վերաբերյալ՝ ինչպես ներկայացված է ՀՍ [և ԵՍ-ների] կողմից, և մասնավորապես հաստատել, որ ներկայացված ծախսերն ամբողջովին համապատասխանում են դրամաշնորհային համաձայնագրի դրույթներին և հավելվածներին՝ համաձայն ծրագրի իրականացման վերաբերյալ գրությունների և աուդիտի շրջանակների համար կիրառելի ցանկացած ուղեցույցների՝ պատշաճ ուշադրություն դարձնելով միջոցների տնտեսմանը և օգտագործման արդյունավետությանը:

4.2 Հաստատել ֆինանսական փաստաթղթերի համապատասխանությունը ծրագրային հաշիվներին (հաշվապահական գրքեր), որոնք հիմք են հանդիսանում ֆինանսական փաստաթղթեր մշակելու համար և նպատակ են հետապնդում ներկայացնել ծրագիրն իրականացնող կազմակերպությունների կողմից ծախսերի շրջանակներում կատարված ֆինանսական գործարքները:

4.3 Հաստատել, որ ֆինանսական փաստաթղթերը համապատասխանում կամ համաձայնեցված են ԳՀ-ին ներկայացված տեղեկատվության (ծրագրային և ֆինանսական հաշվետվություններ) հետ:

## **5. Դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների (ԴԾՖՀ) մշակման պատասխանատվությունը**

5.1 Աուդիտորի միասնական ֆինանսական հաշվետվության մեջ ներառվող առանձին հաստատությունների ԴԾՖՀ մշակման պատասխանատվությունն ընկած է ՀՍ և համախառնախմբի ենթաստացողների վրա՝ ըստ վերջիններիս կողմից իրականացվող ենթադրամաշնորհային ծրագրերի:

5.2 ՀՍ կազմում է ԴԾՖՀ-ները ԳՀ պահանջներին համաձայն: Տեղական իշխանություններին ներկայացվող հաշվետվությունների համար ՀՍ կիրառում է աճողական հաշվապահական մեթոդները՝ ազգային հաշվապահական ստանդարտներին համաձայն: Նույն մեթոդները կիրառվում են նաև ԳՀ հաշվետվությունների համար (ՀՍ ծախսերի հաշվետվություններ), իսկ ԵՍ հաշվետվությունների համար կիրառվում է դրամարկղային մեթոդը: ՀՍ հաշվետվություններ է ներկայացնում ԳՀ-ին հիմք ընդունելով նորացված դրամարկղային մեթոդը:

Բացի այդ անհրաժեշտ է նշել հետևյալ երկու կետերը.

- ԵՍ դրամաշնորհների փոխանցումները գրանցված են որպես ծախսեր
- Գործարքների համար օգտագործվում է հաշվետու ժամանակահատվածի համար կիրառվող փոխարժեքների FIFO մեթոդը:

5.3 ՀՍ պետք է ապահովի, որ ԳՀ դրամաշնորհային գումարների բոլոր ստացողներն ունենան արդյունավետ ֆինանսական կառավարման համակարգեր, որոնց օգնությամբ հնարավոր է մշակել/ստանալ անհրաժեշտ ձևաչափով ճշգրիտ ֆինանսական փաստաթղթեր:

## **6 Դրամաշնորհային ծրագրի ֆինանսական փաստաթղթեր (հաշվետվություններ)**

ա. Ծրագիրն իրականացնող կազմակերպության ֆինանսական միջոցների աղբյուրների և օգտագործման կամ եկամուտների ու ծախսերի հաշվետվություններ,

որտեղ ներկայացված են ԳՀ-ից ստացված գումարները և բոլոր այլ եկամուտները, ինչպես նաև բոլոր դրամաշնորհային ծախսերը՝ ԳՀ ծախսային կատեգորիաներով<sup>1</sup>:

բ. Ծրագիրն իրականացնող կազմակերպության հաշվեկշիռը կամ ֆինանսական միջոցների հաշվետվությունը, որտեղ հստակ երևում են դրամաշնորհային ծրագրի ակտիվները և պարտավորությունները:

գ. Ծրագիրն իրականացնող հաստատության ֆինանսական միջոցների հոսքի վերաբերյալ հաշվետվություն:

դ. Ծրագիրն իրականացնող հաստատության բյուջեի և փաստացի ծախսերի ներկայացում՝ նախընտրելի է ԳՀ ծախսային կատեգորիաներով: Այս փաստաթուղթը պետք է համատեղելի լինի Գլոբալ Հիմնադրամին ներկայացվող Ընդլայնված ֆինանսական հաշվետվության հետ:<sup>2</sup>

ե. Ֆինանսական փաստաթղթերին վերաբերող նշումներ, որոնցում բացատրվում են կիրառված հաշվապահական սկզբունքները և իրականացվում է հիմնական թվերի մանրամասն վերլուծությունը:

զ. Նշում, տեղեկանք կամ հավելված, որը ցույց է տալիս ԵՍ կանխավճարները և ՀՍ-ից ԵՍ-ին կանխավճար տրվող ընդհանուր գումարի համաձայնեցումը ԵՍ ծախսերի և ԵՍ հաշվեկշռի հետ հաշվետու ժամանակահատվածի վերջում:

է. Նշում, տեղեկանք կամ հավելված, որը ներկայացնում է գնված բոլոր հիմնական միջոցների ցանկը, ներառելով գնման ժամանակահատվածը, գինը և վիճակը և բոլոր հիմնական բժշկական ապրանքների պահեստավորման վայրը հաշվետու ժամանակահատվածում:

## 7 Աուդիտի գործունեության շրջանակները

7.1

Աուդ

իտն իրականացվելու է Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան (ISA) և ներառելու է այն թեստերը և վերահսկման մեթոդները, որոնք անհրաժեշտ կհամարվեն աուդիտորի կողմից՝ ելնելով իրավիճակից:

7.2

Խա

**խտումներ և կոռուպցիա.** Ըստ ISA 240, ISSAI (Աուդիտորի պատասխանատվությունը կապված ֆինանսական փաստաթղթերի աուդիտի խախտումների հետ) կամ կիրառելի ազգային աուդիտորական ստանդարտների՝ աուդիտորը պետք է ներկայացնի և գնահատի խախտումների հետ կապված բոլոր ռիսկերը, ստանա կամ ներկայացնի այդ ռիսկերի վերլուծության պատշաճ ապացույցներ և պատշաճ կերպով գնահատի սահմանված կամ կասկածվող ռիսկերը:

7.3

Օրե

**նքներ և կանոնակարգեր.** Աուդիտի մոտեցման մշակման և աուդիտի ընթացակարգերն իրականացնելու ընթացքում աուդիտորը պետք է գնահատի ՀՍ-ի, և որտեղ կիրառելի է նաև ԵՍ-ների համապատասխանությունը այն օրենքների և կանոնակարգերի դրույթներին, որոնք կարող են էապես ներազդել ԴԾՖՀ վրա՝ ISA 250, ISSAI 1250-ով (ֆինանսական փաստաթղթերի աուդիտի ժամանակ օրենքների

<sup>1</sup> ՀՍ համար նախընտրելի է օգտագործել ԳՀ ծախսային կատեգորիաները, սակայն այն կարող է օգտագործել նաև իր կատեգորիաները այն պայմանով, որ դրանք կարող են համադրվել դրամաշնորհային համաձայնագրի բյուջեի հետ:  
<sup>2</sup> ՀՖՀ ամենամյա պահանջ է, որը ներկայացնում է բյուջեի հաշվետվությունը և փաստացի ծախսերն ըստ ծախսային կատեգորիաների, ծառայությունների մատուցման ոլորտը և իրականացնող կազմակերպությունը դիտարկվող ժամանակահատվածում և դրամաշնորհի սկզբից:

և կանոնակարգերի դիտարկում) կամ ազգային աուդիտորական ստանդարտներով պահանջվող կարգով:

7.4

**Կառ**

**ավարում.** Հաղորդակցում ՀՍ ղեկավարության հետ, որը պատասխանատու է ծրագրի կառավարման համար, կառավարման հետ կապված աուդիտի լուրջ խնդիրների վերաբերյալ՝ ISA 260, ISSAI 1260 (Կառավարման համար պատասխանատուների հետ հաղորդակցում) կամ կիրառելի ազգային աուդիտորական ստանդարտների համաձայն:

7.5

**Ռիս**

**կեր.** Նպատակ հետապնդելով նվազեցնել աուդիտի ռիսկերը մինչև ընդունելի մակարդակները՝ աուդիտորը պետք է կիրառի աուդիտի ընթացակարգեր և հասցեագրի բոլոր շեղումները/ռիսկերը, որոնք հայտնաբերվում են գնահատման ընթացքում՝ ISA 330, ISSAI 1330 (Աուդիտորի արձագանքը գնահատված ռիսկերին) կամ կիրառելի ազգային աուդիտորական ստանդարտներին համաձայն:

7.6

**Հար**

**ակից կողմ.** ISA 550, ISSAI 1550 (Հարակից կողմեր) կամ կիրառելի ազգային աուդիտորական ստանդարտներին համաձայն՝ աուդիտորը պետք է սահմանի և գնահատի հարակից կողմի ռիսկերը և դրանց վերահսկման պատշաճությունը:

7.7

**Փոր**

**ձագետների ներգրավում.** Որոշ գործողությունների բարդությունից ելնելով Աուդիտորը կարող է տեխնիկական փորձագետներ ներգրավել իր թիմի կազմում: Նման դեպքերում Աուդիտորը պետք է հետևի ISA 620: (Աուդիտորական փորձագետների աշխատանքի օգտագործում), INTOSAI's ISSAI 1620 (Աուդիտորական փորձագետների աշխատանքի օգտագործման վերաբերյալ) պահանջներին կամ կիրառելի ազգային աուդիտորական ստանդարտներին: Փորձագետի ներգրավման անհրաժեշտությունը պետք է ներկայացվի ՀՍ-ին և ԳՀ-ին՝ գործողությունների շրջանակների և ծախսերի վերաբերյալ համաձայնության գալու նպատակով:

7.8 Աուդիտն իրականացնելիս անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հետևյալ կետերին.

ա. **Համապատասխանությունը կիրառելի օրենսդրությանը** – Հաստատել, որ ֆինանսական փաստաթղթերը լիովին համապատասխանում են կիրառելի օրենսդրության պահանջներին:

բ. **Դրամաշնորհային ծախսեր** – Ծրագրի կողմից հատկացումների արդյունքում ստացված<sup>3</sup> կամ ծրագրային միջոցներից<sup>4</sup> գոյացած գումարները ծախսվել են հաստատված բյուջեին և աշխատանքային ծրագրին համաձայն, որոնք գործում էին ծախսն իրականացնելու պահին, և համապատասխանում են դրամաշնորհային համաձայնագրի դրույթներին, ներառյալ ցանկացած դրամաշնորհային պայմանները (որոնք փոփոխվել են ծրագրի իրականացման նամակների միջոցով)՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսման և արդյունավետության վրա և օգտագործվելով բացառապես այն նպատակներով, որոնց համար հատկացվել էին միջոցները: Սակայն, կախված աուդիտորի կողմից ռիսկերի գնահատման արդյունքներից ԳՀ քաջալերում է աուդիտորին դիտարկել դրամաշնորհային ծախսերի զգալի մասնաբաժինը՝ բացահայտելու համար պոտենցիալ

3 Ներառյալ երրորդ կողմին կատարվող ուղղակի հատկացումները ապրանքների և ծառայությունների տեսքով:

4 Ստացված տոկոսներից, եկամուտներից, փոխարժեքի տարբերություններից, ԱԱՀ ազատումից, ծրագրով չնախատեսված ծախսերի վերադարձ, և այլն:

չնախատեսված ծախսերը և համապատասխանեցնել (կամ վերանայել համապատասխանեցումը) ներկայացված ծախսերը ԳՀ-ին ներկայացված այլ հաշվետվությունների ծախսերի հետ, օր՝ Ծրագրի հաշվետվություն և Ընդլայնված ֆինանսական հաշվետվություն:

գ. **Ներքին վերահսկման համակարգ** – Հաշվապահական հաշվառման և ընդհանուր ներքին վերահսկման համակարգի արդյունավետության բազմակողմանի գնահատում՝ վերահսկելու համար ծրագրի բոլոր մակարդակներում կատարված ծախսերը և այլ ֆինանսական գործարքները՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանխիկ գործարքների պատշաճության և արդյունավետության վրա:

դ. **Նախորդ աուդիտների հաշվետվությունների դիտարկումների հասցեագրում** – Աուդիտորը պետք է հասցեագրի նախորդ աուդիտների դիտարկումները, ներառյալ արտաքին աուդիտը, համապատասխան ներքին աուդիտները և ԳՀ տնտեսական անվտանգության գրասենյակի կողմից իրականացված աուդիտները:

ե. **Գույքի պահպանություն** – Հաստատել, որ ՀՍ կիրառում է դրամաշնորհային միջոցներով գնված գույքի վերահսկման և պահպանության մեխանիզմներ, և որ այդ գույքն օգտագործվում է բացառապես նախատեսված նպատակներով: Հաստատել ծրագրի հիմնական միջոցների ռեգիստրի առկայությունը, նրա պահպանությունը դրամաշնորհային համաձայնագրի պահանջներին համաձայն և այն, որ սեփականության և այլ ստացողների իրավունքները սահմանվում են դրամաշնորհի պայմաններին համաձայն:

զ. **Ապրանքներ և ծառայություններ** – Գնումներն իրականացվել են թափանցիկ, մրցակցային կարգով համապատասխան կիրառելի գնումների ընթացակարգերով:

է. **Դեղերի և բժշկական ապրանքների գնման համակարգեր** – Հաստատել, որ գնման և գույքագրման համակարգերը համապատասխանում են դեղերի և բժշկական պարագաների արդյունավետ ձեռքբերմանը, պահեստավորմանը, մատակարարմանը և բաշխմանը՝ համաձայն ծրագրային նպատակներին:

ը. **Դրամական միջոցների հատկացումը ԵՍ-ներին** – Հաստատել, որ ՀՍ կողմից ԵՍ-ներին կատարվող հատկացումները համապատասխանում են ԵՍ-ների ենթադրամաշնորհային համաձայնագրերին, հաստատված աշխատանքային ծրագրին և բյուջեին: Հաստատել, որ ՀՍ հետևում է ԵՍ-ների կողմից ներկայացված ծախսերի հաշվետվությունների վավերացման (վալիդացման) անհրաժեշտ ընթացակարգերին:

թ. **Տվյալների պահպանում և հիմնավորող փաստաթղթեր** – Բոլոր անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը, գրանցումները և հաշիվները պահպանվում են Դրամաշնորհային համաձայնագրի դրույթներին համաձայն: Առկա են էլեկտրոնային տվյալների (արխիվացման համակարգերի և ընթացակարգերի և այլն) պահպանման և կառավարման ընթացակարգեր:

ժ. **Գործընկերների ֆինանսավորում**<sup>5</sup> – Այն դեպքերում, երբ ԳՀ քաղաքականությամբ պահանջվում է գործընկերների ֆինանսավորում, աուդիտորը պետք է օգտագործի տեղեկատվության առկա աղբյուրները՝ գնահատելու համար պահանջների ապահովումը:

<sup>5</sup>Տես գործընկերների ֆինանսավորման քաղաքականությունը՝  
[http://www.theglobalfund.org/documents/board/23/BM23\\_14PICPSCJEligibilityAttachment1\\_Policy\\_en/](http://www.theglobalfund.org/documents/board/23/BM23_14PICPSCJEligibilityAttachment1_Policy_en/)

## 8 Աուդիտորի կարծիք

8.1

Աուդ

իտի հաշվետվությունը նախապատրաստելիս ընտրված աուդիտորական կազմակերպությունը պետք է ներկայացնի աուդիտորի կարծիքը՝ ISA 700-ի և ISSAI1700-ի (Կարծիքի ձևավորում և ֆինանսական փաստաթղթերի վերաբերյալ հաշվետվության ներկայացում) համաձայն:

8.2 Աուդիտորի կարծիքի ակնկալվող բովանդակությունը պետք է ներառի առնվազն հետևյալ կետերը.

ա. Կարծիք այն մասին, թե արդյոք ԴԾՖՀ ճշգրիտ կերպով ներկայացնում են դրամաշնորհային ծրագրի բոլոր գործարքները դիտարկվող ժամանակահատվածի համար և ֆինանսական դրությունն այդ ժամանակահատվածի ավարտին, և արդյոք միջոցներն օգտագործվել են դրամաշնորհային համաձայնագրով սահմանված նպատակներով (ներառյալ ծրագրի իրականացման գրությունները, որոնցով փոփոխություններ են կատարվում դրամաշնորհներում)՝ հատուկ ուշադրություն դարձնելով միջոցների տնտեսմանը և դրանց օգտագործման արդյունավետությանը:

բ. Կարծիք այն մասին թե արդյոք ԴԾՖՀ մշակված է համաձայնեցված աշխատանքների շրջանակներում: Հաշվետվությունը պետք է հաստատի աուդիտի կարծիքի մեջ ընդգրկված կազմակերպությունները և աուդիտի կարծիքը միասնական, կամ է յուրաքանչյուր կազմակերպության համար առանձին լինելը,

գ. Ժամանակահատվածը, որի համար ներկայացված է կարծիքը:

դ. Հաշվապահական հաշվառման ստանդարտների և կիրառվող սկզբունքների համապատասխանության հաստատում կամ այդ ստանդարտներից և սկզբունքներից ունեցած շեղումների ազդեցությունների ներկայացում:

ե. Իրականացված աուդիտի ISA, ISSAI կամ համապատասխան ազգային աուդիտորական ստանդարտների պահանջներին համապատասխանության հաստատում:

զ. Հաստատում առ այն, որ ստացվել են բոլոր ապացույցները, որոնք անհրաժեշտ են ԴԾՖՀ հավաստիությունը երաշխավորելու համար:

## 9 Նամակ ղեկավարությանը

9.1

Աուդ

իտի հաշվետվությունից բացի աուդիտորները պետք է ներկայացնեն նամակ ղեկավարությանը, որը ներառում է.

ա. Մեկնաբանություն աուդիտորի կարծիքում չներառված «ոչ նյութական» հարցերի վերաբերյալ՝ արտացոլելով դրամաշնորհային համաձայնագրին և ենթադրամաշնորհների հատկացման պայմանագրերին ՀՍ-ի և ԵՍ-ների համապատասխանության աստիճանը:

բ. Մեկնաբանություն աուդիտորի կարծիքում չներառված «ոչ նյութական» հարցերի վերաբերյալ՝ արտացոլելով կատարված ծախսերի համապատասխանությունը համաձայնագրի դրույթներին: Դրամաշնորհային համաձայնագրին անհամապատասխան ծախսերի դեպքում անհրաժեշտ է ղեկավարության նամակում ներառել դրանց բոլոր մանրամասները:

գ. Մեկնաբանություններ և դիտարկումներ կատարել հաշվապահական փաստաթղթերի, ընթացակարգերի, համակարգերի և վերահսկման մեխանիզմների վերաբերյալ, որոնք ուսումնասիրվել են աուդիտի ընթացքում:

դ. Սահմանել համակարգերի և վերահսկողության թերությունները և թույլ կողմերը և առաջարկություններ կատարել դրանց բարելավման ուղղությամբ:

ե. Ներկայացնել դրամաշնորհային համաձայնագրի ֆինանսական յուրաքանչյուր պարտավորության հետ համապատասխանության մակարդակը և անհրաժեշտության դեպքում մեկնաբանել այդ համապատասխանության վրա ազդեցություն ունեցող բոլոր ներքին և արտաքին գործոնները:

զ. Ներկայացնել նախորդ աուդիտի հաշվետվությունների, ներառյալ ԳՀ վերահսկիչ վարչության հաշվետվությունների մեջ ներառված առաջարկությունների իրականացման կարգավիճակը:

է. Ներկայացնել այն խնդիրները, որոնք ուշադրության են արժանացել աուդիտի իրականացման ընթացքում և որոնք կարող են լուրջ ազդեցություն ունենալ դրամաշնորհային ծրագրի իրականացման և շարունակականության վրա:

ը. ՀՍ ուշադրությունը հրավիրել աուդիտորի կողմից կարևոր համարվող ցանկացած այլ հարցին:

թ. Ղեկավարության նամակում պետք է ներառված լինեն նաև ՀՍ կողմից տրված պատասխանները աուդիտի առաջարկություններին՝ համաձայնեցված առաջարկությունների իրականացման ժամկետների հետ համատեղ: Այն դեպքերում, երբ ՀՍ համար ընդունելի չեն աուդիտի դիտարկումները, ղեկավարության հաշվետվության մեջ արտացոլված կլինի նշված անհամաձայնությունը: Բոլոր դիտարկումները և առաջարկությունները պետք է քննարկվեն ՀՍ ղեկավարության հետ՝ նախքան նամակի վերջնականացումը:

9.2

Ղեկ

ավարտության նամակի տիտղոսաթերթին անհրաժեշտ է հստակորեն նշել, որ այն հանդիսանում է գաղտնի փաստաթուղթ, որի նկատմամբ անհրաժեշտ է կիրառել ԳՀ համապատասխան քաղաքականությունը:

9.3

Ղեկ

ավարտության նամակում անհրաժեշտ է նշել, որ աուդիտորը գիտակցում և համաձայնում է, որ Ղեկավարության նամակը պետք է ներկայացվի ԳՀ-ին և Տեղային գործակալին՝ գաղտնիության պահպանման պայմանով:

9.4

Ղեկ

ավարտության նամակում անհրաժեշտ է օգտագործել գնահատման միավորների համակարգ, որը համապատասխանում է ՀՍ-ների և ԵՍ-ների ֆինանսական փաստաթղթերի տարեկան աուդիտների իրականացման ուղեցույցներում բերված առաջարկություններին:

9.5

Ղեկավարության նամակը պետք կազմված լինի առանձին բաժիններից՝ հիմնական ստացողի և յուրաքանչյուր ենթաստացողի համար:

## 10 Ընդհանուր տեղեկատվություն

10.1 Աուդիտի հաշվետվությունը և դրան ուղեկցող ղեկավարության նամակը, ներառյալ ՀՍ-ի պատասխանները պետք է մշակվեն աուդիտն սկսելուց հետո առավելագույնը **երեք ամիս** հետո (Ըստ Գլոբալ հիմնադրամի ընթացակարգերի աուդիտի հաշվետվությունը Գլոբալ հիմնադրամին պետք է ներկայացվի դիտարկվող հաշվետու ժամանակահատվածի ավարտից հետո **վեց (6) ամիսների** ընթացքում):

- 10.2 Ընտրված աուդիտորական կազմակերպությունը ժամանակավորապես կունենա ֆինանսական կառավարման համակարգի, հաշվապահական փաստաթղթերի, գույքի, սեփականության և անձնակազմի հետ կապված բոլոր փաստաթղթերն ստանալու ամբողջական և չսահմանափակված իրավունք, որը կարող օգտակար լինել աուդիտի հետ կապված ցանկացած հարցերի պարզաբանման համար:
- 10.3 Աուդիտորական կազմակերպությանն աուդիտի պլանավորման մեջ օժանդակելու նպատակով ՀՍ պետք է ապահովի առնվազն ստորև ներկայացված փաստաթղթերի և տեղեկատվության հասանելիությունը: Դրամաշնորհառուի գործունեության բնույթը հասկանալու համար որպես աուդիտի պահանջների մի մաս առաջարկվում է, որ աուդիտորները ծանոթանան հետևյալ փաստաթղթերի հետ.
- ա. ԳՀ ուղեցույցները ՀՍ-ների և ԵՍ-ների ֆինանսական փաստաթղթերի տարեկան աուդիտի վերաբերյալ - [\*Guidelines and Tools - The Global Fund to Fight AIDS, Tuberculosis and Malaria\*](#);
  - բ. ՀՍ և ԳՀ միջև կնքված դրամաշնորհային համաձայնագրերը և ԵՍ-ների հետ կնքված ենթադրամաշնորհային համաձայնագրերը: ԳՀ հետ ունեցած ցանկացած նամակագրություն, որով հաստատվում է դիտարկվող տարվա ընթացքում բյուջեում կատարված ցանկացած փոփոխություն:
  - գ. Ծրագրի հաշվետվություններ (PU/DRs) և կառավարչական նամակներ: Անհրաժեշտ է ստանալ նաև հատկացված և Գլոբալ հիմնադրամի կողմից դեռևս չվճարված գումարների վերաբերյալ տեղեկատվություն:
  - դ. Ընդլայնված ֆինանսական հաշվետվություններ:
  - ե. ԳՀ ծրագրերի բյուջեների մշակման ուղեցույցները՝ [\*Operational Policies, Guidelines and Tools - The Global Fund to Fight AIDS, Tuberculosis and Malaria\*](#);
  - զ. Գնումների, ֆինանսական և ԳՀ կողմից հաստատված այլ ձեռնարկներ:
  - է. Խորհուրդ է տրվում նաև ծանոթանալ դրամաշնորհի առաջարկի հետ, որի շրջանակներում իրականացվում է ծրագիրը: Առաջարկները կարելի է ձեռք բերել հետևյալ աղբյուրից՝ [\*Grant Portfolio - The Global Fund to Fight AIDS, Tuberculosis and Malaria\*](#), որտեղ անհրաժեշտ է անցնել համապատասխան երկրի էջը:
- 10.4 Աուդիտորներին քաջալերվում է կապվել Տեղային գործակալի հետ նախքան աուդիտի պլանը մշակելը՝ հնարավորություն տալով Տեղային գործակալին մատնանշել հիմնական թույլ կողմերը և մտահոգություն առաջացնող ուղղությունները: Աուդիտի ընթացքում աուդիտորներին կոչ է արվում կապվել Տեղային գործակալի հետ և անհրաժեշտության դեպքում ստանալ լրացուցիչ տեղեկատվություն/պարզաբանումներ:

## 11. Աուդիտորի որակավորումները

Աուդիտորը պետք է լինի լիովին անկախ՝ աուդիտ իրականացվող կազմակերպության, նրա իրականացման/վերահսկման գործակալության կամ

ուղղակիորեն կապված հաստատությունների կառավարման և ֆինանսական շահերի առումներով: Աուդիտի ենթարկվող ժամանակահատվածի ընթացքում և աուդիտի իրականացման ընթացքում աուդիտորը չպետք է հանդիսանա աշխատող, հանդես գա որպես տնօրեն, կամ ունենա ցանկացած ֆինանսական կամ մտերիմ աշխատանքային հարաբերություններ հաստատության ղեկավարության ցանկացած բարձրաստիճան ներկայացուցչի հետ: Աուդիտորը պետք է հայտնի իր անկախությունը սահմանափակող ցանկացած հարաբերության մասին:

Աուդիտորը պետք է ունենա վերջին 3 տարիների ընթացքում ISA աուդիտորական ստանդարտների կիրառման փորձ: Աուդիտորը պետք է ունենա համապատասխան աշխատակազմ անհրաժեշտ մասնագիտական որակավորումներով և ISA ստանդարտներով աշխատանքի փորձով, ներառյալ ԳՀ Հիմնական ստացողի և Ենթաստացողների չափի և բարդության հետ համեմատելի կազմակերպությունների աուդիտի իրականացման փորձը:

Աուդիտորական կազմակերպության ղեկավարը պետք է Պատվիրատուին ներկայացնի աուդիտորի կարծիքը ստորագրող աուդիտորների ինքնակենսագրականները (CVs), ինչպես նաև որպես աուդիտորական թիմի ներկայացուցիչներ առաջադրված կառավարիչների, ղեկավարների և այլ հիմնական աշխատակիցների ինքնակենսագրականները (CVs):

Աուդիտորական թիմի անդամները պետք է ունենան հետևյալ նվազագույն որակավորումները.

- Առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ տվյալ ոլորտում համարժեք չափի նմանատիպ ծրագրերի աուդիտի իրականացմամբ՝ Միջազգային աուդիտորական ստանդարտների համաձայն:
- Թիմում առնվազն 5 աշխատակիցների առկայություն, որոնք ունեն համարժեք որակի և բարդության ծրագրերի աուդիտի իրականացման փորձ: Հաշվապահական համապատասխան մասնագիտական ասոցիացիաներին անդամակցությունը ցանկալի է:
- Աուդիտի թիմի ղեկավարի համար առնվազն 7 տարվա աշխատանքային փորձ տվյալ ոլորտում համարժեք չափի նմանատիպ ծրագրերի աուդիտի իրականացմամբ՝ Միջազգային աուդիտորական ստանդարտների համաձայն:

Ինքնակենսագրականները (CVs) պետք է ներառեն իրականացված աուդիտների տվյալները, ներառյալ ընթացիկ առաջադրանքները՝ նշելով աուդիտ իրականացնելու համար անհրաժեշտ կարողությունները և ներուժը:

**Ըստ Գլոբալ հիմնադրամի ընթացակարգերի Հիմնական Ստացողի կողմից մրցութային գործընթացի արդյունքում աուդիտորական կազմակերպության ընտրությունը պետք է հավանության արժանանա/հաստատվի Գլոբալ հիմնադրամի քարտուղարության կողմից (գրավոր):**

## 12. Աուդիտի ժամանակացույցը և վերջնաժամկետները

| Գործողություն                                                      | Ամսաթիվ                                                  |
|--------------------------------------------------------------------|----------------------------------------------------------|
| ՀՍ-ի և ԵՍ-ների աուդիտի իրականացում                                 | Առաջադրանքն սկսելուց (պայմանագիրը կնքելուց) 1.5 ամիս անց |
| Աուդիտի հաշվետվության և ղեկավարության նամակի նախագծերի ներկայացում | Առաջադրանքն սկսելուց (պայմանագիրը կնքելուց) 2.0 ամիս անց |
| Վերջնական հաշվետվությունների ներկայացում                           | Առաջադրանքն սկսելուց (պայմանագիրը կնքելուց) 2.5 ամիս անց |
| Ղեկավարության նամակի ներկայացում                                   | Առաջադրանքն սկսելուց (պայմանագիրը կնքելուց) 3.0 ամիս անց |

## **Դրամաշնորհի համար՝ ARM-202-G05-H-00**

**Ծրագրի անվանում՝ «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն»**

### **Աուդիտի ենթակա ժամանակահատված՝**

**Չափաբաժին 3----- 01.01.2013-31.12.2013,**

**Չափաբաժին 4----- 01.01.2014 -31.12.2014**

## **Տեխնիկական բնութագիր**

### **2. Ծրագրի նկարագիր, աուդիտի կառուցվածք և կազմակերպությունների նկարագիր**

#### **1.1 Ծրագրի նկարագիր**

Հայաստանում վերջին վեց տարիների ընթացքում գրանցվել է ՄԻԱՎ դեպքերի հայտնաբերման զգալի աճ, որի հիմքում մասամբ ընկած է ինչպես բուժաշխատողների կողմից խթանված, այնպես էլ կամավոր խորհրդատվության և թեստավորման մակարդակների բարձրացումը: Առողջապահության նախարարության կողմից իրականացվող ծրագիրը նպատակ է հետապնդում նպաստել հանրապետությունում ՄԻԱՎ համաճարակի նվազեցմանը՝ հակառետրովիրուսային բուժում տրամադրելով բոլոր նրանց, ովքեր ունեն վերջինիս կարիքը, հղի կանանց և ընդհանուր բնակչության համար ապահովելով խորհրդատվության և թեստավորման հասանելիությունը, իրականացնելով ՄԻԱՎ-ի կանխարգելման միջոցառումներ դատապարտյալների և տեղաշարժվող բնակչության շրջանում, իրականացնելով մեթադոնային փոխարինող բուժում, բուժաշխատողներին կրթելով ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարբեր ասպեկտների վերաբերյալ՝ խարանի նվազեցման նպատակով, զարգացնելով ազգային ներուժը, հզորացնելով ազգային ռազմավարական տեղեկատվությունը, մոնիթորինգի և գնահատման, ինչպես նաև հիվանդության լաբորատոր ախտորոշման համակարգը:

Ծրագրի 2-րդ փուլի համար դրամաշնորհի գումարը կազմում է 3,893,375 Եվրո 2012 թվականի հոկտեմբերից մինչ 2015 թվականի սեպտեմբեր ընկած ժամանակահատվածի համար (Դրամաշնորհ թիվ ARM-202-G05-H-00 կնքված դեկտեմբերի 12, 2012թ.): Այս դրամաշնորհի հիմնական ստացող է հանդիսանում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, որը ծրագրային աշխատանքներն իրականացնում է հիմնական ենթաստացողի՝ ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի միջոցով, ինչպես նաև մեթադոնային փոխարինող բուժման մասով Երևանի և շահառու մարզերի հոգեբուժական-նարկոլոգիական կլինիկաների, բուժաշխատողների կրթման մասով ՀՀ առողջապահության նախարարության Առողջապահության ազգային ինստիտուտի, նաև Հայաստանի երիտասարդական հիմնադրամի (միգրանտների շրջանում առողջապահական կրթման աշխատանքներ) և Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության (դատապարտյալների շրջանում վնասի նվազեցման աշխատանքներ) աշխատակիցների միջոցով:

Այս տեխնիկական բնութագիրը նախատեսված է 2013 և 2014 ֆիսկալ տարիների դրամաշնորհային ծրագրի հաշվեքննության համար:

## 1.2 Ծրագիրն իրականացնող կազմակերպություններ

Առդիտն իրականացվելու է հետևյալ կազմակերպություններում.

| Կազմակերպության տվյալները                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                | Նկարագիր                                                                                                                                                          | Յուրաքանչյուր կազմակերպությունում առդիտի իրականացման ժամանակահատվածը |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------------------|
| ՀՀ առողջապահության նախարարություն                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                        | Հիմնական ստացող                                                                                                                                                   | 1. 01.01.2013-31.12.2013<br>2. 01.01.2014-31.12.2014                 |
| «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ<br>Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի պող. 49/4, հեռ՝ +37410 237134, էլ.փոստ՝ <a href="mailto:zelveian@hotmail.com">zelveian@hotmail.com</a> (տնօրեն Պ. Զելվեյան)                                                                                                                                                                                                                                    | Ենթաստացող, որը պատասխանատու է բուժաշխատողներին ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերով կրթելու համար                                                                                | 1.01.01.2013-31.12.2013<br>2.01.01.2014-31.12.2014                   |
| «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ,<br>Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Աճառյան 2, հեռ: +37410 610730, էլ.փոստ՝ <a href="mailto:armaids@armaids.am">armaids@armaids.am</a> (տնօրեն Ս. Գրիգորյան)                                                                                                                                                                                                                                                                        | Ենթաստացող, որը պատասխանատու է ՀՌՎ և ՕՎ բուժման և կանխարգելման, ՄևԳ հզորացման, մասնագետների ներուժի զարգացման, ԿԽԹ, Կենսաբանական վարքագծային հետազոտություն (BBS) | 1. 01.01.2013-31.12.2013<br>2. 01.01.2014-31.12.2014                 |
| «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ<br>Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նուբարաշենի 1/3, Տնօրեն Ա.Ղուկասյան, հեռ՝ +37410 616689, 617090, էլ.փոստ՝ <a href="mailto:petrossemerjyan@gmail.com">petrossemerjyan@gmail.com</a>                                                                                                                                                                                                                                                           | Ենթաստացող, որը պատասխանատու է Երևանում ՄՓԲ տրամադրման համար                                                                                                      | 1. 01.01.2013-31.12.2013<br>2. 01.01.2014-31.12.2014                 |
| «Հայաստանի երիտասարդական հիմնադրամի» և «Հայաստանի բժշկական ուսանողների գիտական ասոցիացիա» ՀԿ-ի կոնսորցիում<br>Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տերյան փող. 74, հեռ.՝ +37410 567922, էլ.փոստ՝ <a href="mailto:info@heh.am">info@heh.am</a> , <a href="mailto:info@yfarmeria.org">info@yfarmeria.org</a><br>Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կորյունի փող. 2, Նախագահ Մ. Ղազարյան, հեռ.՝ +37410 547446, էլ.փոստ՝ <a href="mailto:samsa@arminco.am">samsa@arminco.am</a> (տնօրեն Ա. Տեր-Հովակիմյան) | Ենթաստացող, որը պատասխանատու է միգրանտների/ընտանիքի անդամների շրջանում ՄԻԱՎ կանխարգելման միջոցառումների իրականացման համար                                         | 01.01.2013-31.12.2013                                                |
| «Գյումրի քաղաքի հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ<br>Հասցե՝ ՀՀ, ք. Գյումրի, Ղարսի մայրուղի 2ա, հեռ՝ +374 312 50428, էլ.փոստ՝ <a href="mailto:hakgyumri@mail.ru">hakgyumri@mail.ru</a> (տնօրեն Ն. Վարդանյան)                                                                                                                                                                                                                                                                      | Ենթաստացող, որը պատասխանատու է Շիրակի մարզում ՄՓԲ իրականացման համար                                                                                               | 01.01.2014-31.12.2014                                                |

|                                                                                                                                                                                                                                                              |                                                                                                               |                                                      |
|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------|
| «Լոռու մարզային հոգեբուժական-նյարդաբանական դիսպանսեր» ՓԲԸ<br>Հասցե՝ ՀՀ, ք. Վանաձոր, 57 Գ. Նժդեհի փող.,<br>հեռ՝ +374 322 20188, էլ.փոստ՝ <a href="mailto:lorirpnd@gmail.com">lorirpnd@gmail.com</a><br>(տնօրեն Գ. Քալանթարյան)                                | Ենթաստացող, որը պատասխանատու է Լոռու մարզում ՄՓԲ իրականացման համար                                            | 1. 01.01.2013-31.12.2013<br>2. 01.01.2014-31.12.2014 |
| «Սյունիքի մարզային հոգեբուժական-նյարդաբանական դիսպանսեր» ՓԲԸ<br>Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Կապան, Բաղաբերդի փող. 28,<br>հեռ՝ +374 285 54445, էլ.փոստ՝ <a href="mailto:info.syunikpsdisp@yahoo.com">info.syunikpsdisp@yahoo.com</a><br>(տնօրեն Ա. Վարդանյան) | Ենթաստացող, որը պատասխանատու է Սյունիքի մարզում ՄՓԲ իրականացման համար                                         | 01.01.2014-31.12.2014                                |
| Արդարադատության նախարարության ՔԿՎ<br>Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց փող. 63,<br>Ծրագրի ղեկավար Ա. Հովհաննիսյան, հեռ՝ +374 10 443480, էլ.փոստ՝ <a href="mailto:aivanich@mail.ru">aivanich@mail.ru</a>                                                       | Ենթաստացող, որը պատասխանատու է քրեակատարողական հիմնարկներում վնասի նվազեցման և ՄՓԲ ծրագրերի իրականացման համար | 1. 01.01.2013-31.12.2013<br>2. 01.01.2014-31.12.2014 |

Գլխավոր հիմնադրամի դրամաշնորհի բյուջեն և ծախսերը (յուրաքանչյուր կազմակերպության ամփոփ բյուջեն և ծախսերը եվրոյով) ներկայացված են ծրագրի օրացուցային տարիների համար (**Տարի 2** /01.01.2013 - 31.12.2013/ և **Տարի 3** /01.01.2014 - 31.12.2014/):

#### Չափաբաժին 3

| Կազմակերպություն                                                                                           | 2-րդ տարվա բյուջե (Եվրո) | 2-րդ տարվա փաստացի ծախսեր (Եվրո) |
|------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------|----------------------------------|
| ՀՀ առողջապահության նախարարություն                                                                          | 970,510                  | 1,046,551                        |
| «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ                                   | 20,309                   | 22,182                           |
| «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ                                                            | 139,938                  | 118,431                          |
| «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ                                                                        | 59,698                   | 59,212                           |
| «Հայաստանի երիտասարդական հիմնադրամի» և «Հայաստանի բժշկական ուսանողների գիտական ասոցիացիա» ՀԿ-ի կոնսորցիում | 0                        | 0                                |
| «Լոռու մարզային հոգեբուժական-նյարդաբանական դիսպանսեր» ՓԲԸ                                                  | 18,168                   | 8,971                            |
| Արդարադատության նախարարության ՔԿՎ                                                                          | 27,576                   | 20,726                           |
| <b>Ընդամենը</b>                                                                                            | <b>1,236,199</b>         | <b>1,276,073</b>                 |

#### Չափաբաժին 4

| Կազմակերպություն                                                         | 3-րդ տարվա բյուջե (Եվրո) | 3-րդ տարվա փաստացի ծախսեր (Եվրո) /նախատեսված/ |
|--------------------------------------------------------------------------|--------------------------|-----------------------------------------------|
| ՀՀ առողջապահության նախարարություն                                        | 643,162                  | 1,016,568                                     |
| «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ | 22,634                   | 25,912                                        |

|                                                                 |                |                  |
|-----------------------------------------------------------------|----------------|------------------|
| «ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն»<br>ՊՈԱԿ              | 211,999        | 217,160          |
| «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ                             | 59,713         | 67,589           |
| «Գյումրի քաղաքի հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ                       | 0              | 9,476            |
| «Լոռու մարզային հոգեբուժական-նյարդաբանական<br>դիսպանսեր» ՓԲԸ    | 18,168         | 12,105           |
| «Սյունիքի մարզային հոգեբուժական-նյարդաբանական<br>դիսպանսեր» ՓԲԸ | 0              | 2,746            |
| Արդարադատության նախարարության ՔԿՎ                               | 27,576         | 23,510           |
| <b>Ընդամենը</b>                                                 | <b>983,252</b> | <b>1,375,066</b> |

## 2. ՀՀ ԱՆ Գլխավոր հիմնադրամի ծրագրերը համակարգող խմբի (ԾՀԽ) պատասխանատու անձանց տվյալներ.

ԾՀԽ ղեկավար  
Հեռախոսահամար  
Էլ. փոստ

Հասմիկ Հարությունյան  
+374 10 54 36 50  
h.harutyunyan@moh.am

ԾՀԽ ֆինանսական ղեկավար  
Հեռախոսահամար  
Էլ. Փոստ

Էլեն Գալաջյան  
+374 10 54 36 50  
[e.galajyan@moh.am](mailto:e.galajyan@moh.am)

ԾՀԽ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի ծրագրի  
համակարգող  
Հեռախոսահամար  
Էլ. Փոստ

Մարինա Տիրոյան  
+374 10 54 36 51  
[m.tiroyan@moh.am](mailto:m.tiroyan@moh.am)

Ֆինանսիստ  
Հեռախոսահամար  
Էլ. փոստ

Ալեքսանդր Էքսյուզյան  
+374 10 54 36 51  
[a.eksyuzyan@moh.am](mailto:a.eksyuzyan@moh.am)

Հաշվապահ  
Հեռախոսահամար  
Էլ. փոստ

Ռաֆայել Վարդանյան  
+374 10 54 36 51  
[r.vardanyan@moh.am](mailto:r.vardanyan@moh.am)

## 3. Պահանջվող փաստաթղթեր

Աուդիտի իրականացման ժամանակահատվածի ընթացքում ՀՍ պետք է աուդիտորին տրամադրի վերջինիս կողմից պահանջվող՝ դրամաշնորհի հետ կապված բոլոր գրանցամատյանները և փաստաթղթերը, ներառյալ՝ ՀՍ և ԵՍ բոլոր հիմնական փաստաթղթերի և գրանցամատյանների ցանկը՝ նշելով նրանց գտնվելու վայրը՝ ԱՆ կամ ԵՍ գրասենյակներ: Աուդիտորի կողմից պահանջվող փաստաթղթերի ցանկը ներառում է.

- Դրամաշնորհային ծրագրի ֆինանսական քաղվածքները,
- Դրամաշնորհային և ենթադրամաշնորհային համաձայնագրերը,

- Եկամուտների և ծախսերի, ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական միջոցների հետ կապված հիմնական ֆինանսական փաստաթղթերը,
- Դրամաշնորհային ծրագրի գործունեության հետ կապված ամսական կամ եռամսյակային հաշվետվությունները (ծրագրային և ֆինանսական),
- Շրջանառու մնացորդային հաշվեկշիռը, դրամարկղային գիրքը, այլ կարևոր մատյաններ և փաստաթղթեր, որոնք հիմնված են Client Treasury և այլ հաշվապահական համակարգերի վրա,
- Բոլոր ծախսերի հետ կապված փաստաթղթերի բնօրինակները (հաշիվ-ապրանքագրերը, բժշկական ապրանքների ձեռքբերում կամ մրցույթների անցկացում պահանջող այլ գնումների հիմքերը, աշխատավարձերը, վաուչերները և այլն),
- Բանկային քաղվածքները;
- ԳՀ և ՀՍ, ԳՀ և ԵՍ-ների միջև դրամաշնորհի իրականացման հետ կապված հարցերի վերաբերյալ կարևոր նամակագրությունը,
- Դրամաշնորհային ծրագրերի գործառնական ձեռնարկը,
- Ներքին աուդիտի և ցանկացած այլ հաշվետվություններ, որոնք արտացոլում են դրամաշնորհային ծրագրի ծախսերը, դրամաշնորհների հետ կապված կառավարչական և այլ հարցեր:

#### **4. Աուդիտի նպատակներ**

- 4.4 Աուդիտի նպատակն է ստանալ աուդիտորի մասնագիտական եզրակացությունը դրամաշնորհային ծրագրի ֆինանսական կարգավիճակի վերաբերյալ՝ հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ, ինչպես նաև հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ստացված միջոցների և կատարված ծախսերի վերաբերյալ՝ ինչպես ներկայացված է ՀՍ [և ԵՍ-ների] կողմից, և մասնավորապես հաստատել, որ ներկայացված ծախսերն ամբողջովին համապատասխանում են դրամաշնորհային համաձայնագրի դրույթներին և հավելվածներին՝ համաձայն ծրագրի իրականացման վերաբերյալ գրությունների և աուդիտի շրջանակների համար կիրառելի ցանկացած ուղեցույցների՝ պատշաճ ուշադրություն դարձնելով միջոցների տնտեսմանը և օգտագործման արդյունավետությանը:
- 4.5 Հաստատել ֆինանսական փաստաթղթերի համապատասխանությունը ծրագրային հաշիվներին (հաշվապահական գրքեր), որոնք հիմք են հանդիսանում ֆինանսական փաստաթղթեր մշակելու համար և նպատակ են հետապնդում ներկայացնել ծրագիրն իրականացնող կազմակերպությունների կողմից ծրագրի շրջանակներում կատարված ֆինանսական գործարքները:
- 4.6 Հաստատել, որ ֆինանսական փաստաթղթերը համապատասխանում կամ համաձայնեցված են ԳՀ-ին ներկայացված տեղեկատվության (ծրագրային և ֆինանսական հաշվետվություններ) հետ:

#### **5. Դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների (ԴԾՖՀ) մշակման պատասխանատվությունը**

- 10.2 Աուդիտորի միասնական ֆինանսական հաշվետվության մեջ ներառվող առանձին հաստատությունների ԴԾՖՀ մշակման պատասխանատվությունն ընկած

է ՀՍ և համախառնասխան ենթաստացողների վրա՝ ըստ վերջիններիս կողմից իրականացվող ենթադրամաշնորհային ծրագրերի:

10.3 ՀՍ կազմում է ԴԾՖՀ-ները ԳՀ պահանջներին համաձայն: Տեղական իշխանություններին ներկայացվող հաշվետվությունների համար ՀՍ կիրառում է աճողական հաշվապահական մեթոդները՝ ազգային հաշվապահական ստանդարտներին համաձայն: Նույն մեթոդները կիրառվում են նաև ԳՀ հաշվետվությունների համար (ՀՍ ծախսերի հաշվետվություններ), իսկ ԵՍ հաշվետվությունների համար կիրառվում է դրամարկղային մեթոդը: ՀՍ հաշվետվություններ է ներկայացնում ԳՀ-ին հիմք ընդունելով նորացված դրամարկղային մեթոդը:

Բացի այդ անհրաժեշտ է նշել հետևյալ երկու կետերը.

- ԵՍ դրամաշնորհների փոխանցումները գրանցված են որպես ծախսեր
- Գործարքների համար օգտագործվում է հաշվետու ժամանակահատվածի համար կիրառվող փոխարժեքների FIFO մեթոդը:

10.4 ՀՍ պետք է ապահովի, որ ԳՀ դրամաշնորհային գումարների բոլոր ստացողներն ունենան արդյունավետ ֆինանսական կառավարման համակարգեր, որոնց օգնությամբ հնարավոր է մշակել/ստանալ անհրաժեշտ ձևաչափով ճշգրիտ ֆինանսական փաստաթղթեր:

## **11 Դրամաշնորհային ծրագրի ֆինանսական փաստաթղթեր (հաշվետվություններ)**

ա. Ծրագիրն իրականացնող կազմակերպության ֆինանսական միջոցների աղբյուրների և օգտագործման կամ եկամուտների ու ծախսերի հաշվետվություններ, որտեղ ներկայացված են ԳՀ-ից ստացված գումարները և բոլոր այլ եկամուտները, ինչպես նաև բոլոր դրամաշնորհային ծախսերը՝ ԳՀ ծախսային կատեգորիաներով<sup>6</sup>:

բ. Ծրագիրն իրականացնող կազմակերպության հաշվեկշիռը կամ ֆինանսական միջոցների հաշվետվությունը, որտեղ հստակ երևում են դրամաշնորհային ծրագրի ակտիվները և պարտավորությունները:

գ. Ծրագիրն իրականացնող հաստատության ֆինանսական միջոցների հոսքի վերաբերյալ հաշվետվություն:

դ. Ծրագիրն իրականացնող հաստատության բյուջեի և փաստացի ծախսերի ներկայացում՝ նախընտրելի է ԳՀ ծախսային կատեգորիաներով: Այս փաստաթուղթը պետք է համատեղելի լինի Գլոբալ Հիմնադրամին ներկայացվող Ընդլայնված ֆինանսական հաշվետվության հետ:<sup>7</sup>

ե. Ֆինանսական փաստաթղթերին վերաբերող նշումներ, որոնցում բացատրվում են կիրառված հաշվապահական սկզբունքները և իրականացվում է հիմնական թվերի մանրամասն վերլուծությունը:

զ. Նշում, տեղեկանք կամ հավելված, որը ցույց է տալիս ԵՍ կանխավճարները և ՀՍ-ից ԵՍ-ին կանխավճար տրվող ընդհանուր գումարի համաձայնեցումը ԵՍ ծախսերի և ԵՍ հաշվեկշռի հետ հաշվետու ժամանակահատվածի վերջում:

6 ՀՍ համար նախընտրելի է օգտագործել ԳՀ ծախսային կատեգորիաները, սակայն այն կարող է օգտագործել նաև իր կատեգորիաները այն պայմանով, որ դրանք կարող են համադրվել դրամաշնորհային համաձայնագրի բյուջեի հետ:  
7 ԸՖՀ ամենամյա պահանջ է, որը ներկայացնում է բյուջեի հաշվետվությունը և փաստացի ծախսերն ըստ ծախսային կատեգորիաների, ծառայությունների մատուցման ոլորտը և իրականացնող կազմակերպությունը դիտարկվող ժամանակահատվածում և դրամաշնորհի սկզբից:

է. Նշում, տեղեկանք կամ հավելված, որը ներկայացնում է գնված բոլոր հիմնական միջոցների ցանկը, ներառելով գնման ժամանակահատվածը, գինը և վիճակը և բոլոր հիմնական բժշկական ապրանքների պահեստավորման վայրը հաշվետու ժամանակահատվածում:

## 12 Աուդիտի գործունեության շրջանակները

12.1 Աուդ  
իտն իրականացվելու է Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան (ISA) և ներառելու է այն թեստերը և վերահսկման մեթոդները, որոնք անհրաժեշտ կհամարվեն աուդիտորի կողմից՝ ելնելով իրավիճակից:

12.2 Խա  
**խտումներ և կոռուպցիա.** Ըստ ISA 240, ISSAI (Աուդիտորի պատասխանատվությունը կապված ֆինանսական փաստաթղթերի աուդիտի խախտումների հետ) կամ կիրառելի ազգային աուդիտորական ստանդարտների՝ աուդիտորը պետք է ներկայացնի և գնահատի խախտումների հետ կապված բոլոր ռիսկերը, ստանա կամ ներկայացնի այդ ռիսկերի վերլուծության պատշաճ ապացույցներ և պատշաճ կերպով գնահատի սահմանված կամ կասկածվող ռիսկերը:

12.3 Օրե  
**նքներ և կանոնակարգեր.** Աուդիտի մոտեցման մշակման և աուդիտի ընթացակարգերն իրականացնելու ընթացքում աուդիտորը պետք է գնահատի ՀՍ-ի, և որտեղ կիրառելի է նաև ԵՍ-ների համապատասխանությունը այն օրենքների և կանոնակարգերի դրույթներին, որոնք կարող են էապես ներառվել ԴԾՖՀ վրա՝ ISA 250, ISSAI 1250-ով (Ֆինանսական փաստաթղթերի աուդիտի ժամանակ օրենքների և կանոնակարգերի դիտարկում) կամ ազգային աուդիտորական ստանդարտներով պահանջվող կարգով:

12.4 Կառ  
**ավարում.** Հաղորդակցում ՀՍ ղեկավարության հետ, որը պատասխանատու է ծրագրի կառավարման համար, կառավարման հետ կապված աուդիտի լուրջ խնդիրների վերաբերյալ՝ ISA 260, ISSAI 1260 (Կառավարման համար պատասխանատուների հետ հաղորդակցում) կամ կիրառելի ազգային աուդիտորական ստանդարտներին համաձայն:

12.5 Ռիս  
**կեր.** Նպատակ հետապնդելով նվազեցնել աուդիտի ռիսկերը մինչև ընդունելի մակարդակները՝ աուդիտորը պետք է կիրառի աուդիտի ընթացակարգեր և հասցեագրի բոլոր շեղումները/ռիսկերը, որոնք հայտնաբերվում են գնահատման ընթացքում՝ ISA 330, ISSAI 1330 (Աուդիտորի արձագանքը գնահատված ռիսկերին) կամ կիրառելի ազգային աուդիտորական ստանդարտներին համաձայն:

12.6 Հար  
**ակից կողմ.** ISA 550, ISSAI 1550 (Հարակից կողմեր) կամ կիրառելի ազգային աուդիտորական ստանդարտներին համաձայն՝ աուդիտորը պետք է սահմանի և գնահատի հարակից կողմի ռիսկերը և դրանց վերահսկման պատշաճությունը:

12.7 Փոր  
**ծագետների ներգրավում.** Որոշ գործողությունների բարդությունից ելնելով Աուդիտորը կարող է տեխնիկական փորձագետներ ներգրավել իր թիմի կազմում: Նման դեպքերում Աուդիտորը պետք է հետևի ISA 620: (Աուդիտորական փորձագետների աշխատանքի օգտագործում), INTOSAI's ISSAI 1620

(Աուդիտորական փորձագետների աշխատանքի օգտագործման վերաբերյալ) պահանջներին կամ կիրառելի ազգային աուդիտորական ստանդարտներին: Փորձագետի ներգրավման անհրաժեշտությունը պետք է ներկայացվի ՀՍ-ին և ԳՀ-ին՝ գործողությունների շրջանակների և ծախսերի վերաբերյալ համաձայնության գալու նպատակով:

12.8 Աուդիտն իրականացնելիս անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հետևյալ կետերին.

ա. **Համապատասխանությունը կիրառելի օրենսդրությանը** – Հաստատել, որ ֆինանսական փաստաթղթերը լիովին համապատասխանում են կիրառելի օրենսդրության պահանջներին:

բ. **Դրամաշնորհային ծախսեր** – Ծրագրի կողմից հատկացումների արդյունքում ստացված<sup>8</sup> կամ ծրագրային միջոցներից<sup>9</sup> գոյացած գումարները ծախսվել են հաստատված բյուջեին և աշխատանքային ծրագրին համաձայն, որոնք գործում էին ծախսն իրականացնելու պահին, և համապատասխանում են դրամաշնորհային համաձայնագրի դրույթներին, ներառյալ ցանկացած դրամաշնորհային պայմանները (որոնք փոփոխվել են ծրագրի իրականացման նամակների միջոցով)՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսման և արդյունավետության վրա և օգտագործվելով բացառապես այն նպատակներով, որոնց համար հատկացվել էին միջոցները: Սակայն, կախված աուդիտորի կողմից ռիսկերի գնահատման արդյունքներից ԳՀ քաջալերում է աուդիտորին դիտարկել դրամաշնորհային ծախսերի զգալի մասնաբաժինը՝ բացահայտելու համար պոտենցիալ չնախատեսված ծախսերը և համապատասխանեցնել (կամ վերանայել համապատասխանեցումը) ներկայացված ծախսերը ԳՀ-ին ներկայացված այլ հաշվետվությունների ծախսերի հետ, օր՝ Ծրագրի հաշվետվություն և Ընդլայնված ֆինանսական հաշվետվություն:

գ. **Ներքին վերահսկման համակարգ** – Հաշվապահական հաշվառման և ընդհանուր ներքին վերահսկման համակարգի արդյունավետության բազմակողմանի գնահատում՝ վերահսկելու համար ծրագրի բոլոր մակարդակներում կատարված ծախսերը և այլ ֆինանսական գործարքները՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանխիկ գործարքների պատշաճության և արդյունավետության վրա:

դ. **Նախորդ աուդիտների հաշվետվությունների դիտարկումների հասցեագրում** – Աուդիտորը պետք է հասցեագրի նախորդ աուդիտների դիտարկումները, ներառյալ արտաքին աուդիտը, համապատասխան ներքին աուդիտները և ԳՀ տնտեսական անվտանգության գրասենյակի կողմից իրականացված աուդիտները:

ե. **Գույքի պահպանություն** – Հաստատել, որ ՀՍ կիրառում է դրամաշնորհային միջոցներով գնված գույքի վերահսկման և պահպանության մեխանիզմներ, և որ այդ գույքն օգտագործվում է բացառապես նախատեսված նպատակներով: Հաստատել ծրագրի հիմնական միջոցների ռեգիստրի առկայությունը, նրա պահպանությունը դրամաշնորհային համաձայնագրի պահանջներին համաձայն և այն, որ սեփականության և այլ ստացողների իրավունքները սահմանվում են դրամաշնորհի պայմաններին համաձայն:

զ. **Ապրանքներ և ծառայություններ** – Գնումներն իրականացվել են թափանցիկ, մրցակցային կարգով համապատասխան կիրառելի գնումների ընթացակարգերով:

<sup>8</sup> Ներառյալ երրորդ կողմին կատարվող ուղղակի հատկացումները ապրանքների և ծառայությունների տեսքով:

<sup>9</sup> Ստացված տոկոսներից, եկամուտներից, փոխարժեքի տարբերություններից, ԱԱՀ ազատումից, ծրագրով չնախատեսված ծախսերի վերադարձ, և այլն:

է. **Դեղերի և բժշկական ապրանքների գնման համակարգեր** – Հաստատել, որ գնման և գույքագրման համակարգերը համապատասխանում են դեղերի և բժշկական պարագաների արդյունավետ ձեռքբերմանը, պահեստավորմանը, մատակարարմանը և բաշխմանը՝ համաձայն ծրագրային նպատակներին:

ը. **Դրամական միջոցների հատկացումը ԵՍ-ներին** – Հաստատել, որ ՀՍ կողմից ԵՍ-ներին կատարվող հատկացումները համապատասխանում են ԵՍ-ների ենթադրամաշնորհային համաձայնագրերին, հաստատված աշխատանքային ծրագրին և բյուջեին: Հաստատել, որ ՀՍ հետևում է ԵՍ-ների կողմից ներկայացված ծախսերի հաշվետվությունների վավերացման (վալիդացման) անհրաժեշտ ընթացակարգերին:

թ. **Տվյալների պահպանում և հիմնավորող փաստաթղթեր** – Բոլոր անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը, գրանցումները և հաշիվները պահպանվում են Դրամաշնորհային համաձայնագրի դրույթներին համաձայն: Առկա են էլեկտրոնային տվյալների (արխիվացման համակարգերի և ընթացակարգերի և այլն) պահպանման և կառավարման ընթացակարգերը:

ժ. **Գործընկերների ֆինանսավորում**<sup>10</sup> – Այն դեպքերում, երբ ԳՀ քաղաքականությամբ պահանջվում է գործընկերների ֆինանսավորում, աուդիտորիը պետք է օգտագործի տեղեկատվության առկա աղբյուրները՝ գնահատելու համար պահանջների ապահովումը:

### 13 Աուդիտորի կարծիք

13.1

Աուդ.

իտի հաշվետվությունը նախապատրաստելիս ընտրված աուդիտորական կազմակերպությունը պետք է ներկայացնի աուդիտորի կարծիքը՝ ISA 700-ի և ISSAI1700-ի (Կարծիքի ձևավորում և ֆինանսական փաստաթղթերի վերաբերյալ հաշվետվության ներկայացում) համաձայն:

13.2 Աուդիտորի կարծիքի ակնկալվող բովանդակությունը պետք է ներառի առնվազն հետևյալ կետերը.

ա. Կարծիք այն մասին, թե արդյոք ԴԾՖՀ ճշգրիտ կերպով ներկայացնում են դրամաշնորհային ծրագրի բոլոր գործարքները դիտարկվող ժամանակահատվածի համար և ֆինանսական դրությունն այդ ժամանակահատվածի ավարտին, և արդյոք միջոցներն օգտագործվել են դրամաշնորհային համաձայնագրով սահմանված նպատակներով (ներառյալ ծրագրի իրականացման գրությունները, որոնցով փոփոխություններ են կատարվում դրամաշնորհներում)՝ հատուկ ուշադրություն դարձնելով միջոցների տնտեսմանը և դրանց օգտագործման արդյունավետությանը:

բ. Կարծիք այն մասին թե արդյոք ԴԾՖՀ մշակված է համաձայնեցված աշխատանքների շրջանակներում: Հաշվետվությունը պետք է հաստատի աուդիտի կարծիքի մեջ ընդգրկված կազմակերպությունները և աուդիտի կարծիքը միասնական, կամ էլ յուրաքանչյուր կազմակերպության համար առանձին լինելը,

գ. Ժամանակահատվածը, որի համար ներկայացված է կարծիքը:

<sup>10</sup>Տես գործընկերների ֆինանսավորման քաղաքականությունը՝  
[http://www.theglobalfund.org/documents/board/23/BM23\\_14PICPSCJEligibilityAttachment1\\_Policy\\_en/](http://www.theglobalfund.org/documents/board/23/BM23_14PICPSCJEligibilityAttachment1_Policy_en/)

- դ. Հաշվապահական հաշվառման ստանդարտների և կիրառվող սկզբունքների համապատասխանության հաստատում կամ այդ ստանդարտներից և սկզբունքներից ունեցած շեղումների ազդեցությունների ներկայացում:
- ե. Իրականացված աուդիտի ISA, ISSAI կամ համապատասխան ազգային աուդիտորական ստանդարտների պահանջներին համապատասխանության հաստատում:
- զ. Հաստատում առ այն, որ ստացվել են բոլոր ապացույցները, որոնք անհրաժեշտ են ԴԾՖՀ հավաստիությունը երաշխավորելու համար:

## 14 Նամակ ղեկավարությանը

14.1

Աուդ

իտի հաշվետվությունից բացի աուդիտորները պետք է ներկայացնեն նամակ ղեկավարությանը, որը ներառում է.

- ա. Մեկնաբանություն աուդիտորի կարծիքում չներառված «ոչ նյութական» հարցերի վերաբերյալ՝ արտացոլելով դրամաշնորհային համաձայնագրին և ենթադրամաշնորհների հատկացման պայմանագրերին ՀՍ-ի և ԵՍ-ների համապատասխանության աստիճանը:
- բ. Մեկնաբանություն աուդիտորի կարծիքում չներառված «ոչ նյութական» հարցերի վերաբերյալ՝ արտացոլելով կատարված ծախսերի համապատասխանությունը համաձայնագրի դրույթներին: Դրամաշնորհային համաձայնագրին անհամապատասխան ծախսերի դեպքում անհրաժեշտ է ղեկավարության նամակում ներառել դրանց բոլոր մանրամասները:
- գ. Մեկնաբանություններ և դիտարկումներ կատարել հաշվապահական փաստաթղթերի, ընթացակարգերի, համակարգերի և վերահսկման մեխանիզմների վերաբերյալ, որոնք ուսումնասիրվել են աուդիտի ընթացքում:
- դ. Սահմանել համակարգերի և վերահսկողության թերությունները և թույլ կողմերը և առաջարկություններ կատարել դրանց բարելավման ուղղությամբ:
- ե. Ներկայացնել դրամաշնորհային համաձայնագրի ֆինանսական յուրաքանչյուր պարտավորության հետ համապատասխանության մակարդակը և անհրաժեշտության դեպքում մեկնաբանել այդ համապատասխանության վրա ազդեցություն ունեցող բոլոր ներքին և արտաքին գործոնները:
- զ. Ներկայացնել նախորդ աուդիտի հաշվետվությունների, ներառյալ ԳՀ վերահսկիչ վարչության հաշվետվությունների մեջ ներառված առաջարկությունների իրականացման կարգավիճակը:
- է. Ներկայացնել այն խնդիրները, որոնք ուշադրության են արժանացել աուդիտի իրականացման ընթացքում և որոնք կարող են լուրջ ազդեցություն ունենալ դրամաշնորհային ծրագրի իրականացման և շարունակականության վրա:

ը. ՀՍ ուշադրությունը հրավիրել աուդիտորի կողմից կարևոր համարվող ցանկացած այլ հարցին:

թ. Ղեկավարության նամակում պետք է ներառված լինեն նաև ՀՍ կողմից տրված պատասխանները աուդիտի առաջարկություններին՝ համաձայնեցված առաջարկությունների իրականացման ժամկետների հետ համատեղ: Այն դեպքերում, երբ ՀՍ համար ընդունելի չեն աուդիտի դիտարկումները, ղեկավարության հաշվետվության մեջ արտացոլված կլինի նշված անհամաձայնությունը: Բոլոր դիտարկումները և առաջարկությունները պետք է քննարկվեն ՀՍ ղեկավարության հետ՝ նախքան նամակի վերջնականացումը:

14.2

Ղեկ

ավարտության նամակի տիտղոսաթերթին անհրաժեշտ է հստակորեն նշել, որ այն հանդիսանում է գաղտնի փաստաթուղթ, որի նկատմամբ անհրաժեշտ է կիրառել ԳՀ համապատասխան քաղաքականությունը:

14.3

Ղեկ

ավարտության նամակում անհրաժեշտ է նշել, որ աուդիտորը գիտակցում և համաձայնում է, որ Ղեկավարության նամակը պետք է ներկայացվի ԳՀ-ին և Տեղային գործակալին՝ գաղտնիության պահպանման պայմանով:

14.4

Ղեկ

ավարտության նամակում անհրաժեշտ է օգտագործել գնահատման միավորների համակարգ, որը համապատասխանում է ՀՄ-ների և ԵՄ-ների ֆինանսական փաստաթղթերի տարեկան աուդիտների իրականացման ուղեցույցներում բերված առաջարկություններին:

14.5 Ղեկավարության նամակը պետք կազմված լինի առանձին բաժիններից՝ հիմնական ստացողի և յուրաքանչյուր ենթաստացողի համար:

## 15 Ընդհանուր տեղեկատվություն

15.1 Աուդիտի հաշվետվությունը և դրան ուղեկցող ղեկավարության նամակը, ներառյալ ՀՄ-ի պատասխանները պետք է մշակվեն աուդիտն սկսելուց հետո առավելագույնը **երեք ու կես ամիս** հետո: (Ըստ Գլոբալ հիմնադրամի ընթացակարգերի աուդիտի հաշվետվությունը Գլոբալ հիմնադրամին պետք է ներկայացվի դիտարկվող հաշվետու ժամանակահատվածի ավարտից հետո վեց (6) ամիսների ընթացքում):

10.2 Ընտրված աուդիտորական կազմակերպությունը ժամանակավորապես կունենա ֆինանսական կառավարման համակարգի, հաշվապահական փաստաթղթերի, գույքի, սեփականության և անձնակազմի հետ կապված բոլոր փաստաթղթերն ստանալու ամբողջական և չսահմանափակված իրավունք, որը կարող օգտակար լինել աուդիտի հետ կապված ցանկացած հարցերի պարզաբանման համար:

10.3 Աուդիտորական կազմակերպությանն աուդիտի պլանավորման մեջ օժանդակելու նպատակով ՀՄ պետք է ապահովի առնվազն ստորև ներկայացված փաստաթղթերի և տեղեկատվության հասանելիությունը: Դրամաշնորհառուի գործունեության բնույթը հասկանալու համար որպես աուդիտի պահանջների մի մաս առաջարկվում է, որ աուդիտորները ծանոթանան հետևյալ փաստաթղթերի հետ.

ա. ԳՀ ուղեցույցները ՀՄ-ների և ԵՄ-ների ֆինանսական փաստաթղթերի տարեկան աուդիտի վերաբերյալ - [Guidelines and Tools - The Global Fund to Fight AIDS, Tuberculosis and Malaria](#);

բ. ՀՄ և ԳՀ միջև կնքված դրամաշնորհային համաձայնագրերը և ԵՄ-ների հետ կնքված ենթադրամաշնորհային համաձայնագրերը: ԳՀ հետ ունեցած ցանկացած նամակագրություն, որով հաստատվում է դիտարկվող տարվա ընթացքում բյուջեում կատարված ցանկացած փոփոխություն:

գ. Ծրագրի հաշվետվություններ (PU/DRs) և կառավարչական նամակներ: Անհրաժեշտ է ստանալ նաև հատկացված և Գլոբալ հիմնադրամի կողմից դեռևս չվճարված գումարների վերաբերյալ տեղեկատվություն:

դ. Ընդլայնված ֆինանսական հաշվետվություններ:

ե. ԳՀ ծրագրերի բյուջեների մշակման ուղեցույցները՝ [\*Operational Policies, Guidelines and Tools - The Global Fund to Fight AIDS, Tuberculosis and Malaria\*](#);

զ. Գնումների, ֆինանսական և ԳՀ կողմից հաստատված այլ ձեռնարկներ:

է. *Խորհուրդ է տրվում նաև ծանոթանալ դրամաշնորհի առաջարկի հետ, որի շրջանակներում իրականացվում է ծրագիրը: Առաջարկները կարելի է ձեռք բերել հետևյալ աղբյուրից՝ [\*Grant Portfolio - The Global Fund to Fight AIDS, Tuberculosis and Malaria\*](#), որտեղ անհրաժեշտ է անցնել համապատասխան երկրի էջը:*

10.4 Աուդիտորներին քաջալերվում է կապվել Տեղային գործակալի հետ նախքան աուդիտի պլանը մշակելը՝ հնարավորություն տալով Տեղային գործակալին մատնանշել հիմնական թույլ կողմերը և մտահոգություն առաջացնող ուղղությունները: Աուդիտի ընթացքում աուդիտորներին կոչ է արվում կապվել Տեղային գործակալի հետ և անհրաժեշտության դեպքում ստանալ լրացուցիչ տեղեկատվություն/պարզաբանումներ:

### 13. Աուդիտորի որակավորումները

Աուդիտորը պետք է լինի լիովին անկախ՝ աուդիտ իրականացվող կազմակերպության, նրա իրականացման/վերահսկման գործակալության կամ ուղղակիորեն կապված հաստատությունների կառավարման և ֆինանսական շահերի առումներով: Աուդիտի ենթարկվող ժամանակահատվածի ընթացքում և աուդիտի իրականացման ընթացքում աուդիտորը չպետք է հանդիսանա աշխատող, հանդես գա որպես տնօրեն, կամ ունենա ցանկացած ֆինանսական կամ մտերիմ աշխատանքային հարաբերություններ հաստատության ղեկավարության ցանկացած բարձրաստիճան ներկայացուցչի հետ: Աուդիտորը պետք է հայտնի իր անկախությունը սահմանափակող ցանկացած հարաբերության մասին:

Աուդիտորը պետք է ունենա վերջին 3 տարիների ընթացքում ISA աուդիտորական ստանդարտների կիրառման փորձ: Աուդիտորը պետք է ունենա համապատասխան աշխատակազմ անհրաժեշտ մասնագիտական որակավորումներով և ISA ստանդարտներով աշխատանքի փորձով, ներառյալ ԳՀ Հիմնական ստացողի և Ենթաստացողների չափի և բարդության հետ համեմատելի կազմակերպությունների աուդիտի իրականացման փորձը:

Աուդիտորական կազմակերպության ղեկավարը պետք է Պատվիրատուին ներկայացնի աուդիտորի կարծիքը ստորագրող աուդիտորների ինքնակենսագրականները (CVs), ինչպես նաև որպես աուդիտորական թիմի ներկայացուցիչներ առաջադրված կառավարիչների, ղեկավարների և այլ հիմնական աշխատակիցների ինքնակենսագրականները (CVs):

Աուդիտորական թիմի անդամները պետք է ունենան հետևյալ նվազագույն որակավորումները.

- Առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ տվյալ ոլորտում համարժեք չափի նմանատիպ ծրագրերի աուդիտի իրականացմամբ՝ Միջազգային աուդիտորական ստանդարտների համաձայն:

- Թիմում առնվազն 5 աշխատակիցների առկայություն, որոնք ունեն համարժեք որակի և բարդության ծրագրերի աուդիտի իրականացման փորձ: Հաշվապահական համապատասխան մասնագիտական ասոցիացիաներին անդամակցությունը ցանկալի է:
- Աուդիտի թիմի ղեկավարի համար առնվազն 7 տարվա աշխատանքային փորձ տվյալ ոլորտում համարժեք չափի նմանատիպ ծրագրերի աուդիտի իրականացմամբ՝ Միջազգային աուդիտորական ստանդարտների համաձայն:

Ինքնակենսագրականները (CVs) պետք է ներառեն իրականացված աուդիտների տվյալները, ներառյալ ընթացիկ առաջադրանքները՝ նշելով աուդիտ իրականացնելու համար անհրաժեշտ կարողությունները և ներուժը:

**Ըստ Գլոբալ հիմնադրամի ընթացակարգերի Հիմնական Ստացողի կողմից մրցութային գործընթացի արդյունքում աուդիտորական կազմակերպության ընտրությունը պետք է հավանության արժանանա/հաստատվի Գլոբալ հիմնադրամի քարտուղարության կողմից (գրավոր):**

#### 14. Աուդիտի ժամանակացույցը և վերջնաժամկետները

| Գործողություն                                                      | Ամսաթիվ                                                  |
|--------------------------------------------------------------------|----------------------------------------------------------|
| Նախնական հանդիպումներ                                              | Աուդիտի առաջին շաբաթվա ընթացքում:                        |
| ՀՍ-ի և ԵՍ-ների աուդիտի իրականացում                                 | Առաջադրանքն սկսելուց (պայմանագիրը կնքելուց) 2.0 ամիս անց |
| Աուդիտի հաշվետվության և ղեկավարության նամակի նախագծերի ներկայացում | Առաջադրանքն սկսելուց (պայմանագիրը կնքելուց) 2.5 ամիս անց |
| Վերջնական հաշվետվությունների ներկայացում                           | Առաջադրանքն սկսելուց (պայմանագիրը կնքելուց) 3.0 ամիս անց |
| Ղեկավարության նամակի ներկայացում                                   | Առաջադրանքն սկսելուց (պայմանագիրը կնքելուց) 3.5 ամիս անց |

# **Դրամաշնորհի համար՝ ARM-T-MOH**

**Ծրագրի անվանում՝** «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում»

**Աուդիտի ենթակա ժամանակահատված՝**

**Չափաբաժին 5-----** 01.01.2013-31.12.2013,

**Չափաբաժին 6-----** 01.01.2014 -31.12.2014

## **Տեխնիկական բնութագիր**

### **1. Ծրագրի նկարագիր, աուդիտի կառուցվածք և իրականացնող կազմակերպությունների նկարագիր**

**1.1 Ծրագրի նկարագիր:** «ԶԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամ» շահույթ չհետապնդող հիմնադրամի, որը ստեղծվել է Շվեյցարիայի օրենքներով (այսուհետ՝ Գլոբալ հիմնադրամ) և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության (այսուհետ՝ Հիմնական Ստացող) միջև կնքված համաձայնագրի շրջանակներում Գլոբալ հիմնադրամը ֆինանսավորում է հատկացնում Հիմնական Ստացողին «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում» ծրագիրն իրականացնելու նպատակով:

Տուբերկուլոզը (ՏԲ) որպես կարևոր առողջապահական խնդիր առաջ է եկել Հայաստանում 1991 թվականին Խորհրդային Միությունից անկախանալուց հետո, և մինչ օրս հիվանդացության մակարդակը շարունակում է բարձր մնալ: Հակատուբերկուլոզային դեղերի նկատմամբ կայունությունը լուրջ խոչընդոտներ է առաջացնում Հայաստանում ՏԲ համաճարակի վերահսկման համար:

ԶԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության միջև «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում» միահույս ֆինանսավորման դրամաշնորհային ծրագրի համաձայնագիրը (ARM-T-MOH) գործում է 2012թ. հունվարի 1-ից մինչ 2014թ. դեկտեմբերի 31-ը: Ծրագրի իրականացման երեք տարիների համար նախատեսված դրամաշնորհի գումարը կազմում է 7,911,011 եվրո: Միահույս ֆինանսավորման նշյալ դրամաշնորհն իր մեջ ներառում է ՏԲ 8-րդ շրջանի դրամաշնորհի երկրորդ փուլը և 10-րդ շրջանի ՏԲ դրամաշնորհը:

Ծրագիրն ունի երկու հիմնական նպատակ՝ Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլոզի դեմ պայքարի **ազգային ծրագրի ուժեղացում**՝ առավել լավ ախտորոշում և բուժում տրամադրելու համար և **դեղակայուն տուբերկուլոզի (ԴԿ ՏԲ) կառավարման ընդլայնում**՝ ինչպես քաղաքացիական բնակչության, այնպես էլ դատապարտյալների շրջանում, և հիվանդների սոցիալական աջակցություն՝ ՏԲ արդյունավետ վերահսկման նպատակով: Ծրագրի շրջանակներում իրականացվում են գործառնություններ գնումների և մատակարարման ներուժի, մարդկային ռեսուրսների զարգացման, ԲԴԿ ՏԲ և ՏԲ ախտորոշման և բուժման, ՏԲ հիվանդներին սոցիալական աջակցության, ՏԲ/ՄԻԱՎ համավարակի դեմ պայքարի, վարակի վերահսկման, մոնիտորինգի և գնահատման համակարգի բարելավման, հանրության իրազեկման

ոլորտներում՝ տուբերկուլոզի տարածվածության և մահացության մակարդակները իջեցնելու և դեղակայուն տուբերկուլոզի հետագա զարգացումը կանխելու նպատակով:

Սույն դրամաշնորհային ծրագրի հիմնական ստացող է հանդիսանում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, որը ծրագրային գործողություններն իրականացնում է երկու ենթաստացողների՝ Առողջապահության նախարարության Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային գրասենյակի և Հայկական կարմիր խաչի ընկերության միջոցով: Վերջինս սոցիալական աջակցություն է ցուցաբերում տուբերկուլոզով հիվանդներին և իրականացնում կրթական աշխատանքներ վերջիններիս շրջանում:

Այս տեխնիկական բնութագիրը նախատեսված է 2013 և 2014 ֆիսկալ տարիների դրամաշնորհային ծրագրի աուդիտների համար:

## 1.2 Ծրագիրն իրականացնող կազմակերպություններ

Աուդիտն իրականացվելու է հետևյալ կազմակերպություններում.

| Կազմակերպության տվյալներ                                                                                                                                                              | Նկարագիր                                                                                       | Աուդիտի իրականացման ժամանակահատվածը                      |
|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------------------------------------------------------------------------------------|----------------------------------------------------------|
| ՀՀ առողջապահության նախարարություն<br>Կառավարության տուն 3,<br>Երևան, ՀՀ                                                                                                               | Հիմնական ստացող                                                                                | 3. 01.01.2013 - 31.12.2013<br>4. 01.01.2014 - 31.12.2014 |
| Հայկական Կարմիր Խաչի<br>Ընկերություն, ՀԿ<br>Պարոնյան 21/1, Երևան, ՀՀ<br>Տնօրեն՝ Ա. Եղիազարյան<br>Հեռ՝(+374 10) 583630, 538491;<br>Էլ.փոստ՝ redcross@redcross.am                       | Ենթաստացող, որը պատասխանատու է ՏԲ հիվանդներին սոցիալական օժանդակության տրամադրման ծրագրի համար | 6. 01.01.2013-31.12.2013<br>7. 01.01.2014 -31.12.2014    |
| Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի Պետական ոչ առևտրային կազմակերպություն<br>Մարգարյան 6/2, Երևան, ՀՀ<br>Տնօրեն՝ Ա. Հայրապետյան Հեռ՝ (+374 10) 394279<br>Էլ.փոստ՝ ntp-arm@ntp.am | Ենթաստացող, որը պատասխանատու է Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի իրականացման համար      | 1. 01.01.2013-31.12.2013<br>2. 01.01.2014 -31.12.2014    |

Գլխավ Կիմնադրամի դրամաշնորհի բյուջեն և ծախսերը (յուրաքանչյուր կազմակերպության ամփոփ բյուջեն և ծախսերը եվրոյով) ներկայացված են ծրագրի օրացուցային տարիների համար (**տարի 2** /01.01.2013 - 31.12.2013/ և **տարի 3** /01.01.2014 - 31.12.2014/):

### Չափաբաժին 5

| Կազմակերպություն                              | 2-րդ տարվա բյուջեն ըստ դրամաշնորհային համաձայնագրի (Եվրո) | 2-րդ տարվա փաստացի ծախսեր (Եվրո) |
|-----------------------------------------------|-----------------------------------------------------------|----------------------------------|
| ՀՀ առողջապահության նախարարություն             | 1,604,330                                                 | 1,353,018                        |
| Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն ՀԿ          | 727,132                                                   | 684,618                          |
| Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ՊՈԱԿ | 254,773                                                   | 396,659                          |
| Ընդամենը                                      | 2,586,235                                                 | 2,434,295                        |

## Չափաբաժին 6

| Կազմակերպություն                                        | 3-րդ տարվա<br>բյուջե ըստ<br>դրամաշնորհային<br>համաձայնագրի<br>(Եվրո) | 3-րդ տարվա<br>փաստացի ծախսեր<br>(Եվրո)<br>/նախատեսված/ |
|---------------------------------------------------------|----------------------------------------------------------------------|--------------------------------------------------------|
| Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն | 1,643,593                                                            | 2,391,985                                              |
| Հայկական Կարմիր Խաչի Ընկերություն ՀԿ                    | 740,132                                                              | 516,694                                                |
| Տուրերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագիր ՊՈԱԿ           | 219,076                                                              | 590,153                                                |
| Ընդամենը                                                | 2,602,801                                                            | 3,498,832                                              |

## 2. ՀՀ ԱՆ Գլոբալ հիմնադրամի ծրագրերը համակարգող խմբի (ԾՀԽ) պատասխանատու անձանց տվյալներ.

Ղեկավար  
Հեռախոսահամար  
Էլ. փոստ

Հասմիկ Հարությունյան  
+374 10 54 36 50  
h.harutyunyan@moh.am

Ֆինանսական ղեկավար  
Հեռախոսահամար  
Էլ. փոստ

Էլեն Գալաջյան  
+374 10 54 36 50  
e.galajyan@moh.am

ՏԲ ծրագրի համակարգող  
Հեռախոսահամար  
Էլ. փոստ

Դիանա Պետրոսյան  
+374 10 54 36 51  
d.petrosyan@moh.am

Ֆինանսիստ  
Հեռախոսահամար  
Էլ. փոստ

Քրիստինե Խաչատրյան  
+374 10 54 36 51  
k.khachatryan@moh.am

Հաշվապահ  
Հեռախոսահամար  
Էլ. փոստ

Ռաֆայել Վարդանյան  
+374 10 54 36 51  
[r.vardanyan@moh.am](mailto:r.vardanyan@moh.am)

## 3. Պահանջվող փաստաթղթեր

Աուդիտի իրականացման ժամանակահատվածի ընթացքում ՀՍ պետք է աուդիտորին տրամադրի վերջինիս կողմից պահանջվող՝ դրամաշնորհի հետ կապված բոլոր գրանցամատյանները և փաստաթղթերը, ներառյալ՝ ՀՍ և ԵՍ բոլոր հիմնական փաստաթղթերի և գրանցամատյանների ցանկը՝ նշելով նրանց գտնվելու վայրը՝ ԱՆ կամ ԵՍ գրասենյակներ: Աուդիտորի կողմից պահանջվող փաստաթղթերի ցանկը ներառում է.

- Դրամաշնորհային ծրագրի ֆինանսական քաղվածքները,

- Դրամաշնորհային և ենթադրամաշնորհային համաձայնագրերը,
- Եկամուտների և ծախսերի, ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական միջոցների հետ կապված հիմնական ֆինանսական փաստաթղթերը,
- Դրամաշնորհային ծրագրի գործունեության հետ կապված ամսական կամ եռամսյակային հաշվետվությունները (ծրագրային և ֆինանսական),
- Շրջանառու մնացորդային հաշվեկշիռը, դրամարկղային գիրքը, այլ կարևոր մատյաններ և փաստաթղթեր, որոնք հիմնված են Client Treasury և այլ հաշվապահական համակարգերի վրա,
- Բոլոր ծախսերի հետ կապված փաստաթղթերի բնօրինակները (հաշիվ-ապրանքագրերը, բժշկական ապրանքների ձեռքբերում կամ մրցույթների անցկացում պահանջող այլ գնումների հիմքերը, աշխատավարձերը, վաուչերները և այլն),
- Բանկային քաղվածքները;
- ԳՀ և ՀՍ, ԳՀ և ԵՍ-ների միջև դրամաշնորհի իրականացման հետ կապված հարցերի վերաբերյալ կարևոր նամակագրությունը,
- Դրամաշնորհային ծրագրերի գործառնական ձեռնարկը,
- Ներքին աուդիտի և ցանկացած այլ հաշվետվություններ, որոնք արտացոլում են դրամաշնորհային ծրագրի ծախսերը, դրամաշնորհների հետ կապված կառավարչական և այլ հարցեր:

#### **4. Աուդիտի նպատակներ**

- 4.1. Աուդիտի նպատակն է ստանալ աուդիտորի մասնագիտական եզրակացությունը դրամաշնորհային ծրագրի ֆինանսական կարգավիճակի վերաբերյալ՝ հաշվետու ժամանակահատվածի վերջի դրությամբ, ինչպես նաև հաշվետու ժամանակահատվածի ընթացքում ստացված միջոցների և կատարված ծախսերի վերաբերյալ՝ ինչպես ներկայացված է ՀՍ [և ԵՍ-ների] կողմից, և մասնավորապես հաստատել, որ ներկայացված ծախսերն ամբողջովին համապատասխանում են դրամաշնորհային համաձայնագրի դրույթներին և հավելվածներին՝ համաձայն ծրագրի իրականացման վերաբերյալ գրությունների և աուդիտի շրջանակների համար կիրառելի ցանկացած ուղեցույցների՝ պատշաճ ուշադրություն դարձնելով միջոցների տնտեսմանը և օգտագործման արդյունավետությանը:
- 4.2. Հաստատել ֆինանսական փաստաթղթերի համապատասխանությունը ծրագրային հաշիվներին (հաշվապահական գրքեր), որոնք հիմք են հանդիսանում ֆինանսական փաստաթղթեր մշակելու համար և նպատակ են հետապնդում ներկայացնել ծրագիրն իրականացնող կազմակերպությունների կողմից ծրագրի շրջանակներում կատարված ֆինանսական գործարքները:
- 4.3. Հաստատել, որ ֆինանսական փաստաթղթերը համապատասխանում կամ համաձայնեցված են ԳՀ-ին ներկայացված տեղեկատվության (ծրագրային և ֆինանսական հաշվետվություններ) հետ:

#### **5. Դրամաշնորհային ծրագրի ֆինանսական հաշվետվությունների (ԴԾՖՀ) մշակման պատասխանատվությունը**

- 5.1. Աուդիտորի միասնական ֆինանսական հաշվետվության մեջ ներառվող առանձին հաստատությունների ԴԾՖՀ մշակման պատասխանատվությունն

ընկած է ՀՍ և համախառնասխան ենթաստացողների վրա՝ ըստ վերջիններիս կողմից իրականացվող ենթադրամաշնորհային ծրագրերի:

5.2. ՀՍ կազմում է ԴԾՖՀ-ները ԳՀ պահանջներին համաձայն: Տեղական իշխանություններին ներկայացվող հաշվետվությունների համար ՀՍ կիրառում է աճողական հաշվապահական մեթոդները՝ ազգային հաշվապահական ստանդարտներին համաձայն: Նույն մեթոդները կիրառվում են նաև ԳՀ հաշվետվությունների համար (ՀՍ ծախսերի հաշվետվություններ), իսկ ԵՍ հաշվետվությունների համար կիրառվում է դրամարկղային մեթոդը: ՀՍ հաշվետվություններ է ներկայացնում ԳՀ-ին հիմք ընդունելով նորացված դրամարկղային մեթոդը:

Բացի այդ անհրաժեշտ է նշել հետևյալ երկու կետերը.

- ԵՍ դրամաշնորհների փոխանցումները գրանցված են որպես ծախսեր
- Գործարքների համար օգտագործվում է հաշվետու ժամանակահատվածի համար կիրառվող փոխարժեքների FIFO մեթոդը:

5.3. ՀՍ պետք է ապահովի, որ ԳՀ դրամաշնորհային գումարների բոլոր ստացողներն ունենան արդյունավետ ֆինանսական կառավարման համակարգեր, որոնց օգնությամբ հնարավոր է մշակել/ստանալ անհրաժեշտ ձևաչափով ճշգրիտ ֆինանսական փաստաթղթեր:

## **6. Դրամաշնորհային ծրագրի ֆինանսական փաստաթղթեր (հաշվետվություններ)**

ա. Ծրագիրն իրականացնող կազմակերպության ֆինանսական միջոցների աղբյուրների և օգտագործման կամ եկամուտների ու ծախսերի հաշվետվություններ, որտեղ ներկայացված են ԳՀ-ից ստացված գումարները և բոլոր այլ եկամուտները, ինչպես նաև բոլոր դրամաշնորհային ծախսերը՝ ԳՀ ծախսային կատեգորիաներով<sup>11</sup>:

բ. Ծրագիրն իրականացնող կազմակերպության հաշվեկշիռը կամ ֆինանսական միջոցների հաշվետվությունը, որտեղ հստակ երևում են դրամաշնորհային ծրագրի ակտիվները և պարտավորությունները:

գ. Ծրագիրն իրականացնող հաստատության ֆինանսական միջոցների հոսքի վերաբերյալ հաշվետվություն:

դ. Ծրագիրն իրականացնող հաստատության բյուջեի և փաստացի ծախսերի ներկայացում՝ նախընտրելի է ԳՀ ծախսային կատեգորիաներով: Այս փաստաթուղթը պետք է համատեղելի լինի Գլոբալ Հիմնադրամին ներկայացվող Ընդլայնված ֆինանսական հաշվետվության հետ:<sup>12</sup>

ե. Ֆինանսական փաստաթղթերին վերաբերող նշումներ, որոնցում բացատրվում են կիրառված հաշվապահական սկզբունքները և իրականացվում է հիմնական թվերի մանրամասն վերլուծությունը:

զ. Նշում, տեղեկանք կամ հավելված, որը ցույց է տալիս ԵՍ կանխավճարները և ՀՍ-ից ԵՍ-ին կանխավճար տրվող ընդհանուր գումարի համաձայնեցումը ԵՍ ծախսերի և ԵՍ հաշվեկշռի հետ հաշվետու ժամանակահատվածի վերջում:

<sup>11</sup> ՀՍ համար նախընտրելի է օգտագործել ԳՀ ծախսային կատեգորիաները, սակայն այն կարող է օգտագործել նաև իր կատեգորիաները այն պայմանով, որ դրանք կարող են համադրվել դրամաշնորհային համաձայնագրի բյուջեի հետ:

<sup>12</sup> ԸՖՀ ամենամյա պահանջ է, որը ներկայացնում է բյուջեի հաշվետվությունը և փաստացի ծախսերն ըստ ծախսային կատեգորիաների, ծառայությունների մատուցման ոլորտը և իրականացնող կազմակերպությունը դիտարկվող ժամանակահատվածում և դրամաշնորհի սկզբից:

է. Նշում, տեղեկանք կամ հավելված, որը ներկայացնում է գնված բոլոր հիմնական միջոցների ցանկը, ներառելով գնման ժամանակահատվածը, գինը և վիճակը և բոլոր հիմնական բժշկական ապրանքների պահեստավորման վայրը հաշվետու ժամանակահատվածում:

7.

**Աուդ**

### **Խտի գործունեության շրջանակները**

7.1

**Աուդ**

Խտն իրականացվելու է Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան (ISA) և ներառելու է այն թեստերը և վերահսկման մեթոդները, որոնք անհրաժեշտ կհամարվեն աուդիտորի կողմից՝ ելնելով իրավիճակից:

7.2

**Խա**

**Խտումներ և կոռուպցիա.** Ըստ ISA 240, ISSAI (Աուդիտորի պատասխանատվությունը կապված ֆինանսական փաստաթղթերի աուդիտի խախտումների հետ) կամ կիրառելի ազգային աուդիտորական ստանդարտների՝ աուդիտորը պետք է ներկայացնի և գնահատի խախտումների հետ կապված բոլոր ռիսկերը, ստանա կամ ներկայացնի այդ ռիսկերի վերլուծության պատշաճ ապացույցներ և պատշաճ կերպով գնահատի սահմանված կամ կասկածվող ռիսկերը:

7.3

**Օրե**

**Նքներ և կանոնակարգեր.** Աուդիտի մոտեցման մշակման և աուդիտի ընթացակարգերն իրականացնելու ընթացքում աուդիտորը պետք է գնահատի ՀՍ-ի, և որտեղ կիրառելի է նաև ԵՍ-ների համապատասխանությունը այն օրենքների և կանոնակարգերի դրույթներին, որոնք կարող են էապես ներազդել ԴԾՖՀ վրա՝ ISA 250, ISSAI 1250-ով (Ֆինանսական փաստաթղթերի աուդիտի ժամանակ օրենքների և կանոնակարգերի դիտարկում) կամ ազգային աուդիտորական ստանդարտներով պահանջվող կարգով:

7.4

**Կառ**

**ավարում.** Հաղորդակցում ՀՍ ղեկավարության հետ, որը պատասխանատու է ծրագրի կառավարման համար, կառավարման հետ կապված աուդիտի լուրջ խնդիրների վերաբերյալ՝ ISA 260, ISSAI 1260 (Կառավարման համար պատասխանատուների հետ հաղորդակցում) կամ կիրառելի ազգային աուդիտորական ստանդարտների համաձայն:

7.5

**Ռիս**

**կեր.** Նպատակ հետապնդելով նվազեցնել աուդիտի ռիսկերը մինչև ընդունելի մակարդակները՝ աուդիտորը պետք է կիրառի աուդիտի ընթացակարգեր և հասցեագրի բոլոր շեղումները/ռիսկերը, որոնք հայտնաբերվում են գնահատման ընթացքում՝ ISA 330, ISSAI 1330 (Աուդիտորի արձագանքը գնահատված ռիսկերին) կամ կիրառելի ազգային աուդիտորական ստանդարտներին համաձայն:

7.6

**Հար**

**ակից կողմ.** ISA 550, ISSAI 1550 (Հարակից կողմեր) կամ կիրառելի ազգային աուդիտորական ստանդարտներին համաձայն՝ աուդիտորը պետք է սահմանի և գնահատի հարակից կողմի ռիսկերը և դրանց վերահսկման պատշաճությունը:

7.7

**Փոր**

**ձագետների ներգրավում.** Որոշ գործողությունների բարդությունից ելնելով Աուդիտորը կարող է տեխնիկական փորձագետներ ներգրավել իր թիմի կազմում: Նման դեպքերում Աուդիտորը պետք է հետևի ISA 620: (Աուդիտորական

փորձագետների աշխատանքի օգտագործում), INTOSAI's ISSAI 1620 (Աուդիտորական փորձագետների աշխատանքի օգտագործման վերաբերյալ) պահանջներին կամ կիրառելի ազգային աուդիտորական ստանդարտներին: Փորձագետի ներգրավման անհրաժեշտությունը պետք է ներկայացվի ՀՍ-ին և ԳՀ-ին՝ գործողությունների շրջանակների և ծախսերի վերաբերյալ համաձայնության գալու նպատակով:

7.8

Աուդ

իտն իրականացնելիս անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել հետևյալ կետերին.

ա. **Համապատասխանությունը կիրառելի օրենսդրությանը** – Հաստատել, որ ֆինանսական փաստաթղթերը լիովին համապատասխանում են կիրառելի օրենսդրության պահանջներին:

բ. **Դրամաշնորհային ծախսեր** – Ծրագրի կողմից հատկացումների արդյունքում ստացված<sup>13</sup> կամ ծրագրային միջոցներից<sup>14</sup> գոյացած գումարները ծախսվել են հաստատված բյուջեին և աշխատանքային ծրագրին համաձայն, որոնք գործում էին ծախսն իրականացնելու պահին, և համապատասխանում են դրամաշնորհային համաձայնագրի դրույթներին, ներառյալ ցանկացած դրամաշնորհային պայմանները (որոնք փոփոխվել են ծրագրի իրականացման նամակների միջոցով)՝ պատշաճ ուշադրություն դարձնելով տնտեսման և արդյունավետության վրա և օգտագործվելով բացառապես այն նպատակներով, որոնց համար հատկացվել էին միջոցները: Սակայն, կախված աուդիտորի կողմից ռիսկերի գնահատման արդյունքներից ԳՀ քաջալերում է աուդիտորին դիտարկել դրամաշնորհային ծախսերի զգալի մասնաբաժինը՝ բացահայտելու համար պոտենցիալ չնախատեսված ծախսերը և համապատասխանեցնել (կամ վերանայել համապատասխանեցումը) ներկայացված ծախսերը ԳՀ-ին ներկայացված այլ հաշվետվությունների ծախսերի հետ, օր՝ Ծրագրի հաշվետվություն և Ընդլայնված ֆինանսական հաշվետվություն:

գ. **Ներքին վերահսկման համակարգ** – Հաշվապահական հաշվառման և ընդհանուր ներքին վերահսկման համակարգի արդյունավետության բազմակողմանի գնահատում՝ վերահսկելու համար ծրագրի բոլոր մակարդակներում կատարված ծախսերը և այլ ֆինանսական գործարքները՝ հատուկ ուշադրություն դարձնելով կանխիկ գործարքների պատշաճության և արդյունավետության վրա:

դ. **Նախորդ աուդիտների հաշվետվությունների դիտարկումների հասցեագրում** – Աուդիտորը պետք է հասցեագրի նախորդ աուդիտների դիտարկումները, ներառյալ արտաքին աուդիտը, համապատասխան ներքին աուդիտները և ԳՀ տնտեսական անվտանգության գրասենյակի կողմից իրականացված աուդիտները:

ե. **Գույքի պահպանություն** – Հաստատել, որ ՀՍ կիրառում է դրամաշնորհային միջոցներով գնված գույքի վերահսկման և պահպանության մեխանիզմներ, և որ այդ գույքն օգտագործվում է բացառապես նախատեսված նպատակներով: Հաստատել ծրագրի հիմնական միջոցների ռեգիստրի առկայությունը, նրա պահպանությունը դրամաշնորհային համաձայնագրի պահանջներին համաձայն և

<sup>13</sup> Ներառյալ երրորդ կողմին կատարվող ուղղակի հատկացումները ապրանքների և ծառայությունների տեսքով:

<sup>14</sup> Ստացված տոկոսներից, եկամուտներից, փոխարժեքի տարբերություններից, ԱԱՀ ազատումից, ծրագրով չնախատեսված ծախսերի վերադարձ, և այլն:

այն, որ սեփականության և այլ ստացողների իրավունքները սահմանվում են դրամաշնորհի պայմաններին համաձայն:

- զ. **Ապրանքներ և ծառայություններ** – Գնումներն իրականացվել են թափանցիկ, մրցակցային կարգով համապատասխան կիրառելի գնումների ընթացակարգերով:
- է. **Դեղերի և բժշկական ապրանքների գնման համակարգեր** – Հաստատել, որ գնման և գույքագրման համակարգերը համապատասխանում են դեղերի և բժշկական պարագաների արդյունավետ ձեռքբերմանը, պահեստավորմանը, մատակարարմանը և բաշխմանը՝ համաձայն ծրագրային նպատակներին:
- ը. **Դրամական միջոցների հատկացումը ԵՍ-ներին** – Հաստատել, որ ՀՍ կողմից ԵՍ-ներին կատարվող հատկացումները համապատասխանում են ԵՍ-ների ենթադրամաշնորհային համաձայնագրերին, հաստատված աշխատանքային ծրագրին և բյուջեին: Հաստատել, որ ՀՍ հետևում է ԵՍ-ների կողմից ներկայացված ծախսերի հաշվետվությունների վավերացման (վալիդացման) անհրաժեշտ ընթացակարգերին:
- թ. **Տվյալների պահպանում և հիմնավորող փաստաթղթեր** – Բոլոր անհրաժեշտ հիմնավորող փաստաթղթերը, գրանցումները և հաշիվները պահպանվում են Դրամաշնորհային համաձայնագրի դրույթներին համաձայն: Առկա են էլեկտրոնային տվյալների (արխիվացման համակարգերի և ընթացակարգերի և այլն) պահպանման և կառավարման ընթացակարգերը:
- ժ. **Գործընկերների ֆինանսավորում**<sup>15</sup> – Այն դեպքերում, երբ ԳՀ քաղաքականությամբ պահանջվում է գործընկերների ֆինանսավորում, աուդիտորիը պետք է օգտագործի տեղեկատվության առկա աղբյուրները՝ գնահատելու համար պահանջների ապահովումը:

## 8

## Աուդ

### Խտորի կարծիք

#### 8.1

#### Աուդ

Խտի հաշվետվությունը նախապատրաստելիս ընտրված աուդիտորական կազմակերպությունը պետք է ներկայացնի աուդիտորի կարծիքը՝ ISA 700-ի և ISSAI1700-ի (Կարծիքի ձևավորում և ֆինանսական փաստաթղթերի վերաբերյալ հաշվետվության ներկայացում) համաձայն:

#### 8.2

#### Աուդ

Խտորի կարծիքի ակնկալվող բովանդակությունը պետք է ներառի առնվազն հետևյալ կետերը.

ա. Կարծիք այն մասին, թե արդյոք ԴԾՖՀ ճշգրիտ կերպով ներկայացնում են դրամաշնորհային ծրագրի բոլոր գործարքները դիտարկվող ժամանակահատվածի համար և ֆինանսական դրությունն այդ ժամանակահատվածի ավարտին, և արդյոք միջոցներն օգտագործվել են դրամաշնորհային համաձայնագրով սահմանված նպատակներով (ներառյալ ծրագրի իրականացման գրությունները, որոնցով փոփոխություններ են կատարվում դրամաշնորհներում)՝ հատուկ ուշադրություն դարձնելով միջոցների տնտեսմանը և դրանց օգտագործման արդյունավետությանը:

<sup>15</sup>Տես գործընկերների ֆինանսավորման քաղաքականությունը՝  
[http://www.theglobalfund.org/documents/board/23/BM23\\_14PICPSCJEligibilityAttachment1\\_Policy\\_en/](http://www.theglobalfund.org/documents/board/23/BM23_14PICPSCJEligibilityAttachment1_Policy_en/)

բ. Կարծիք այն մասին թե արդյոք ԴԾՖՀ մշակված է համաձայնեցված աշխատանքների շրջանակներում: Հաշվետվությունը պետք է հաստատի աուդիտի կարծիքի մեջ ընդգրկված կազմակերպությունները և աուդիտի կարծիքը միասնական, կամ է յուրաքանչյուր կազմակերպության համար առանձին լինելը,

գ. Ժամանակահատվածը, որի համար ներկայացված է կարծիքը:

դ. Հաշվապահական հաշվառման ստանդարտների և կիրառվող սկզբունքների համապատասխանության հաստատում կամ այդ ստանդարտներից և սկզբունքներից ունեցած շեղումների ազդեցությունների ներկայացում:

ե. Իրականացված աուդիտի ISA, ISSAI կամ համապատասխան ազգային աուդիտորական ստանդարտների պահանջներին համապատասխանության հաստատում:

զ. Հաստատում առ այն, որ ստացվել են բոլոր ապացույցները, որոնք անհրաժեշտ են ԴԾՖՀ հավաստիությունը երաշխավորելու համար:

## 9.

## Նամ

### ակ ղեկավարությանը

#### 9.1

#### Աուդ

իտի հաշվետվությունից բացի աուդիտորները պետք է ներկայացնեն նամակ ղեկավարությանը, որը ներառում է.

ա. Մեկնաբանություն աուդիտորի կարծիքում չներառված «ոչ նյութական» հարցերի վերաբերյալ՝ արտացոլելով դրամաշնորհային համաձայնագրին և ենթադրամաշնորհների հատկացման պայմանագրերին ՀՍ-ի և ԵՍ-ների համապատասխանության աստիճանը:

բ. Մեկնաբանություն աուդիտորի կարծիքում չներառված «ոչ նյութական» հարցերի վերաբերյալ՝ արտացոլելով կատարված ծախսերի համապատասխանությունը համաձայնագրի դրույթներին: Դրամաշնորհային համաձայնագրին անհամապատասխան ծախսերի դեպքում անհրաժեշտ է ղեկավարության նամակում ներառել դրանց բոլոր մանրամասները:

գ. Մեկնաբանություններ և դիտարկումներ կատարել հաշվապահական փաստաթղթերի, ընթացակարգերի, համակարգերի և վերահսկման մեխանիզմների վերաբերյալ, որոնք ուսումնասիրվել են աուդիտի ընթացքում:

դ. Սահմանել համակարգերի և վերահսկողության թերությունները և թույլ կողմերը և առաջարկություններ կատարել դրանց բարելավման ուղղությամբ:

ե. Ներկայացնել դրամաշնորհային համաձայնագրի ֆինանսական յուրաքանչյուր պարտավորության հետ համապատասխանության մակարդակը և անհրաժեշտության դեպքում մեկնաբանել այդ համապատասխանության վրա ազդեցություն ունեցող բոլոր ներքին և արտաքին գործոնները:

զ. Ներկայացնել նախորդ աուդիտի հաշվետվությունների, ներառյալ ԳՀ վերահսկիչ վարչության հաշվետվությունների մեջ ներառված առաջարկությունների իրականացման կարգավիճակը:

է. Ներկայացնել այն խնդիրները, որոնք ուշադրության են արժանացել աուդիտի իրականացման ընթացքում և որոնք կարող են լուրջ ազդեցություն ունենալ դրամաշնորհային ծրագրի իրականացման և շարունակականության վրա:

ը. ՀՍ ուշադրությունը հրավիրել աուդիտորի կողմից կարևոր համարվող ցանկացած այլ հարցին:

թ. Ղեկավարության նամակում պետք է ներառված լինեն նաև ՀՍ կողմից տրված պատասխանները աուդիտի առաջարկություններին՝ համաձայնեցված առաջարկությունների իրականացման ժամկետների հետ համատեղ: Այն դեպքերում, երբ ՀՍ համար ընդունելի չեն աուդիտի դիտարկումները, ղեկավարության հաշվետվության մեջ արտացոլված կլինի նշված անհամաձայնությունը: Բոլոր դիտարկումները և առաջարկությունները պետք է քննարկվեն ՀՍ ղեկավարության հետ՝ նախքան նամակի վերջնականացումը:

9.2

Ղեկ

ավարտության նամակի տիտղոսաթերթին անհրաժեշտ է հստակորեն նշել, որ այն հանդիսանում է գաղտնի փաստաթուղթ, որի նկատմամբ անհրաժեշտ է կիրառել ԳՀ համապատասխան քաղաքականությունը:

9.3

Ղեկ

ավարտության նամակում անհրաժեշտ է նշել, որ աուդիտորը գիտակցում և համաձայնում է, որ Ղեկավարության նամակը պետք է ներկայացվի ԳՀ-ին և Տեղային գործակալին՝ գաղտնիության պահպանման պայմանով:

9.4

Ղեկ

ավարտության նամակում անհրաժեշտ է օգտագործել գնահատման միավորների համակարգ, որը համապատասխանում է *ՀՄ-ների և ԵՄ-ների ֆինանսական փաստաթղթերի տարեկան աուդիտների իրականացման ուղեցույցներում* բերված առաջարկություններին:

9.5

Ղեկ

ավարտության նամակը պետք կազմված լինի առանձին բաժիններից՝ հիմնական ստացողի և յուրաքանչյուր ենթաստացողի համար:

10.

Ընդ

## հանուր տեղեկատվություն

10.1

Աուդիտի հաշվետվությունը և դրան ուղեկցող ղեկավարության նամակը, ներառյալ ՀՄ-ի պատասխանները պետք է մշակվեն աուդիտն սկսելուց հետո առավելագույնը **երեք ու կես** ամիս հետո (Ըստ Գլոբալ հիմնադրամի ընթացակարգերի աուդիտի հաշվետվությունը Գլոբալ հիմնադրամին պետք է ներկայացվի դիտարկվող հաշվետու ժամանակահատվածի ավարտից հետո վեց (6) ամիսների ընթացքում):

10.2 Ընտրված աուդիտորական կազմակերպությունը ժամանակավորապես կունենա ֆինանսական կառավարման համակարգի, հաշվապահական փաստաթղթերի, գույքի, սեփականության և անձնակազմի հետ կապված բոլոր փաստաթղթերն ստանալու ամբողջական և չսահմանափակված իրավունք, որը կարող օգտակար լինել աուդիտի հետ կապված ցանկացած հարցերի պարզաբանման համար:

10.3 Աուդիտորական կազմակերպությանն աուդիտի պլանավորման մեջ օժանդակելու նպատակով ՀՍ պետք է ապահովի առնվազն ստորև ներկայացված փաստաթղթերի և տեղեկատվության հասանելիությունը: Դրամաշնորհառուի գործունեության բնույթը հասկանալու համար որպես

աուդիտի պահանջների մի մաս առաջարկվում է, որ աուդիտորները ծանոթանան հետևյալ փաստաթղթերի հետ.

ա. ԳՀ ուղեցույցները ՀՍ-ների և ԵՍ-ների ֆինանսական փաստաթղթերի տարեկան աուդիտի վերաբերյալ - [Guidelines and Tools - The Global Fund to Fight AIDS, Tuberculosis and Malaria](#);

բ. ՀՍ և ԳՀ միջև կնքված դրամաշնորհային համաձայնագրերը և ԵՍ-ների հետ կնքված ենթադրամաշնորհային համաձայնագրերը: ԳՀ հետ ունեցած ցանկացած նամակագրություն, որով հաստատվում է դիտարկվող տարվա ընթացքում բյուջեում կատարված ցանկացած փոփոխություն:

գ. Ծրագրի հաշվետվություններ (PU/DRs) և կառավարչական նամակներ: Անհրաժեշտ է ստանալ նաև հատկացված և Գլոբալ հիմնադրամի կողմից դեռևս չվճարված գումարների վերաբերյալ տեղեկատվություն:

դ. Ընդլայնված ֆինանսական հաշվետվություններ:

ե. ԳՀ ծրագրերի բյուջեների մշակման ուղեցույցները՝ [Operational Policies, Guidelines and Tools - The Global Fund to Fight AIDS, Tuberculosis and Malaria](#);

զ. Գնումների, ֆինանսական և ԳՀ կողմից հաստատված այլ ձեռնարկներ:

է. Խորհուրդ է տրվում նաև ծանոթանալ դրամաշնորհի առաջարկի հետ, որի շրջանակներում իրականացվում է ծրագիրը: Առաջարկները կարելի է ձեռք բերել հետևյալ աղբյուրից՝ [Grant Portfolio - The Global Fund to Fight AIDS, Tuberculosis and Malaria](#), որտեղ անհրաժեշտ է անցնել համապատասխան երկրի էջը:

10.4 Աուդիտորներին քաջալերվում է կապվել Տեղային գործակալի հետ նախքան աուդիտի պլանը մշակելը՝ հնարավորություն տալով Տեղային գործակալին մատնանշել հիմնական թույլ կողմերը և մտահոգություն առաջացնող ուղղությունները: Աուդիտի ընթացքում աուդիտորներին կոչ է արվում կապվել Տեղային գործակալի հետ և անհրաժեշտության դեպքում ստանալ լրացուցիչ տեղեկատվություն/պարզաբանումներ:

## 11. Աուդիտորի որակավորումները

Աուդիտորը պետք է լինի լիովին անկախ՝ աուդիտ իրականացվող կազմակերպության, նրա իրականացման/վերահսկման գործակալության կամ ուղղակիորեն կապված հաստատությունների կառավարման և ֆինանսական շահերի առումներով: Աուդիտի ենթարկվող ժամանակահատվածի ընթացքում և աուդիտի իրականացման ընթացքում աուդիտորը չպետք է հանդիսանա աշխատող, հանդես գա որպես տնօրեն, կամ ունենա ցանկացած ֆինանսական կամ մտերիմ աշխատանքային հարաբերություններ հաստատության ղեկավարության ցանկացած բարձրաստիճան ներկայացուցչի հետ: Աուդիտորը պետք է հայտնի իր անկախությունը սահմանափակող ցանկացած հարաբերության մասին:

Աուդիտորը պետք է ունենա վերջին 3 տարիների ընթացքում ISA աուդիտորական ստանդարտների կիրառման փորձ: Աուդիտորը պետք է ունենա համապատասխան աշխատակազմ անհրաժեշտ մասնագիտական որակավորումներով և ISA

ստանդարտներով աշխատանքի փորձով, ներառյալ ԳՀ Հիմնական ստացողի և Ենթաստացողների չափի և բարդության հետ համեմատելի կազմակերպությունների աուդիտի իրականացման փորձը:

Աուդիտորական կազմակերպության ղեկավարը պետք է Պատվիրատուին ներկայացնի աուդիտորի կարծիքը ստորագրող աուդիտորների ինքնակենսագրականները (CVs), ինչպես նաև որպես աուդիտորական թիմի ներկայացուցիչներ առաջադրված կառավարիչների, ղեկավարների և այլ հիմնական աշխատակիցների ինքնակենսագրականները (CVs):

Աուդիտորական թիմի անդամները պետք է ունենան հետևյալ նվազագույն որակավորումները.

- Առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ տվյալ ոլորտում համարժեք չափի նմանատիպ ծրագրերի աուդիտի իրականացմամբ՝ Միջազգային աուդիտորական ստանդարտների համաձայն:
- Թիմում առնվազն 5 աշխատակիցների առկայություն, որոնք ունեն համարժեք որակի և բարդության ծրագրերի աուդիտի իրականացման փորձ: Հաշվապահական համապատասխան մասնագիտական ասոցիացիաներին անդամակցությունը ցանկալի է:
- Աուդիտի թիմի ղեկավարի համար առնվազն 7 տարվա աշխատանքային փորձ տվյալ ոլորտում համարժեք չափի նմանատիպ ծրագրերի աուդիտի իրականացմամբ՝ Միջազգային աուդիտորական ստանդարտների համաձայն:

Ինքնակենսագրականները (CVs) պետք է ներառեն իրականացված աուդիտների տվյալները, ներառյալ ընթացիկ առաջադրանքները՝ նշելով աուդիտ իրականացնելու համար անհրաժեշտ կարողությունները և ներուժը:

**Ըստ Գլոբալ հիմնադրամի ընթացակարգերի Հիմնական Ստացողի կողմից մրցութային գործընթացի արդյունքում աուդիտորական կազմակերպության ընտրությունը պետք է հավանության արժանանա/հաստատվի Գլոբալ հիմնադրամի քարտուղարության կողմից (գրավոր):**

## 12. Աուդիտի ժամանակացույցը և վերջնաժամկետները

| Գործողություն                                                      | Ամսաթիվ                                                  |
|--------------------------------------------------------------------|----------------------------------------------------------|
| Նախնական հանդիպումներ                                              | Աուդիտի առաջին շաբաթվա ընթացքում:                        |
| ՀՍ-ի և ԵՍ-ների աուդիտի իրականացում                                 | Առաջադրանքն սկսելուց (պայմանագիրը կնքելուց) 2.0 ամիս անց |
| Աուդիտի հաշվետվության և ղեկավարության նամակի նախագծերի ներկայացում | Առաջադրանքն սկսելուց (պայմանագիրը կնքելուց) 2.5 ամիս անց |
| Վերջնական հաշվետվությունների ներկայացում                           | Առաջադրանքն սկսելուց (պայմանագիրը կնքելուց) 3.0 ամիս անց |
| Ղեկավարության նամակի ներկայացում                                   | Առաջադրանքն սկսելուց (պայմանագիրը կնքելուց) 3.5 ամիս անց |

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| N                                                                                                                    | Գնման ենթակա ծառայությունների                                                              |                |                                  |                                     | ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՔԱՆԱԿՆԵՐԸ                                                                                                |                  | ԸՆԴԱՄԵՆԸ           |                       |
|----------------------------------------------------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------------------------------|----------------|----------------------------------|-------------------------------------|-----------------------------------------------------------------------------------------------------------------------|------------------|--------------------|-----------------------|
|                                                                                                                      | Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը                                                                           | Չափման միավորը | Միավորի գինը /ՀՀ դրամ/ առանց ԱԱՀ | Միավորի գինը /ՀՀ դրամ/ ներառյալ ԱԱՀ | 2014-2015թթ                                                                                                           | Քանակ            | Գումար /առանց ԱԱՀ/ | Գումար /ներառյալ ԱԱՀ/ |
| 1                                                                                                                    | 2                                                                                          | 3              | 4                                | 5                                   | 6                                                                                                                     | 7                | 8                  | 9                     |
| Ծրագիրը՝ Առողջապահական համագորգի հզորացում                                                                           |                                                                                            |                |                                  | Բաժին 07 հունվր 06 Դաս 02 Ծրագիր 04 |                                                                                                                       | Հ/Հ 900013104055 |                    |                       |
| 1                                                                                                                    | Արտաքին անկախ աուդիտորական ծառայություններ՝ 01.01.2013-31.12.2013                          | դրամ           |                                  |                                     | պայմանագրի համար ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո 90 օրացույցային օրերի ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2014թ.  |                  |                    |                       |
| 2                                                                                                                    | Արտաքին անկախ աուդիտորական ծառայություններ՝ 01.01.2014 - 31.12.2014; 01.01.2015-31.03.2015 | դրամ           |                                  |                                     | պայմանագրի համար ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո 90 օրացույցային օրերի ընթացքում բայց ոչ ուշ քան 20.12.2015թ.   |                  |                    |                       |
| Ծրագիրը՝ ՀՀ-ում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն                                                 |                                                                                            |                |                                  | Բաժին 07 հունվր 06 Դաս 02 Ծրագիր 03 |                                                                                                                       | Հ/Հ 900013105029 |                    |                       |
| 3                                                                                                                    | Արտաքին անկախ աուդիտորական ծառայություններ՝ 01.01.2013-31.12.2013                          | դրամ           |                                  |                                     | պայմանագրի համար ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո 105 օրացույցային օրերի ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2014թ. |                  |                    |                       |
| 4                                                                                                                    | Արտաքին անկախ աուդիտորական ծառայություններ՝ 01.01.2014 - 31.12.2014                        | դրամ           |                                  |                                     | պայմանագրի համար ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո 105 օրացույցային օրերի ընթացքում բայց ոչ ուշ քան 20.12.2015թ.  |                  |                    |                       |
| Ծրագիրը՝ ՀՀ-ում տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում և դեղակայուն տուբերկուլոզի կառավարման ընդլայնում |                                                                                            |                |                                  | Բաժին 07 հունվր 06 Դաս 02 Ծրագիր 06 |                                                                                                                       | Հ/Հ 900013104063 |                    |                       |
| 5                                                                                                                    | Արտաքին անկախ աուդիտորական ծառայություններ՝ 01.01.2013-31.12.2013                          | դրամ           |                                  |                                     | պայմանագրի համար ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո 105 օրացույցային օրերի ընթացքում, բայց ոչ ուշ քան 20.12.2014թ. |                  |                    |                       |
| 6                                                                                                                    | Արտաքին անկախ աուդիտորական ծառայություններ՝ 01.01.2014 - 31.12.2014                        | դրամ           |                                  |                                     | պայմանագրի համար ֆինանսական միջոցներ նախատեսելուց հետո 105 օրացույցային օրերի ընթացքում բայց ոչ ուշ քան 20.12.2015թ.  |                  |                    |                       |
| Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը                                                                                                      |                                                                                            |                |                                  |                                     |                                                                                                                       |                  | -                  | -                     |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ  
ՀՀ առողջապահության նախարարություն  
ք. Երևան, կառավարության 3 շենք  
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն  
Հ/Հ 900013104055, Հ/Հ 900013105029  
Հ/Հ 900013104063  
ՀՎՀՀ 02507171

(ստորագրություն)  
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ  
« » ՓԲԸ  
Հասցե՝  
Բանկ՝  
Հ/Հ  
ՀՎՀՀ

(ստորագրություն)  
Կ.Տ.

**Պ ա տ վ ի թ ա տ ու**

**Կ ա տ ա թ ո ղ**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N \_\_\_\_\_  
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

\_\_\_\_\_ 2014թ.

Պայմանագրի անվանումը՝ \_\_\_\_\_ պայմանագիր

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ \_\_\_\_\_ 2014թ.

Պայմանագրի համարը՝ N \_\_\_\_\_

Պատվիրատուն՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ս.Քրմոյանի, և Կատարողը՝ \_\_\_\_\_, ի դեմս \_\_\_\_\_, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ \_\_\_\_\_ 2014թ. պատասխանատու ստորաբաժանման N\_\_ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատուցված ծառայությունները (այսուհետ՝ Ծառայություն) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը \_\_\_\_\_ 201\_թ. -ից \_\_\_\_\_ 201\_թ. - ը ընկած ժամանակահատվածում մատուցել է հետևյալ Ծառայությունը.

| Ծառայության անվանումը և համառոտ նկարագիրը | Ծառայության քանակական ցուցանիշը | Ծառայության մատուցման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|-------------------------------------------|---------------------------------|-------------------------------|-------------------------------------|--------------------------------------|
|                                           |                                 |                               |                                     |                                      |
|                                           |                                 |                               |                                     |                                      |
|                                           |                                 |                               |                                     |                                      |
| Ընդամենը                                  |                                 |                               |                                     |                                      |

առայությունը հանձնեց

Ծառայությունն ընդունեց

(ստորագրություն)

(ստորագրություն)

ազգանուն \_\_\_\_\_  
 ԿՏ

ազգանուն \_\_\_\_\_  
 ԿՏ

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ «ԳՀ ՊԸԾՁԲ-14/2»

ք. Երևան

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.

«Մասնակցի անվանումը» -ն, ի դեմս Ընկերության տնօրեն -----յանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

**1. Համաձայնության առարկան**

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է ՀՀ առողջապահության նախարարություն (այսուհետև՝ «Պատվիրատու») կողմից կազմակերպված՝ «Գնման առարկայի անվանում» ձեռքբերման «ԳՀ ՊԸԾՁԲ-14/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգին (այսուհետև՝ ընթացակարգ), պետք է ներկայացնի հայտի ապահովում և ընթացակարգին մասնակցելուց բխող պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 «Պատվիրատու» -ի կողմից կազմակերպված «Գնման առարկայի անվանում» ձեռքբերման «ԳՀ ՊԸԾՁԲ-14/2» ծածկագրով ընթացակարգին Ընկերության մասնակցելուց բխող՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ \_\_\_\_\_ (\_\_\_\_\_տոտերով) ՀՀ դրամի չափով:

1.1.2 «Պատվիրատու» -ն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որն Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում «Պատվիրատու» -ին, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող «Ընկերությանը սպասարկող բանկի անվանումը» բանկում կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով «Մասնակցի անվանումը» -ն հանձնարարում է «Ընկերությանը սպասարկող բանկի անվանումը» բանկին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում «Պատվիրատուի անվանումը» առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

**2. Այլ պայմաններ**

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և վավեր է մինչև Օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, Մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ սույն ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց «Պատվիրատուի անվանումը»-ի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

*Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները*

«Մասնակցի անվանումը»,

«Մասնակցի հասցեն»

«Ընկերությանը սպասարկող բանկի անվանումը»

h/h \_\_\_\_\_

տնօրեն -----

-----  
(ստորագրություն)

գլխ. հաշվապահ -----

-----  
(ստորագրություն)

Կ.Տ

## ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ N «ԳՀ ՊԸԾՁԲ-14/2»

ք. Երևան

«\_\_\_\_\_» \_\_\_\_\_ 20 թ.

«Մասնակցի անվանումը», ի դեմս Ընկերության տնօրեն՝ «Ընկերության տնօրենի անուն ազգանունը», որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

**1. Համաձայնության առարկան**

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է «Պատվիրատուի անվանումը» (այսուհետև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «Գնման առարկայի անվանումը» ձեռքբերման «ԳՀ ՊԸԾՁԲ-14/2» ծածկագրով պարզեցված ընթացակարգին, պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում: Սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագիրը Ընկերության կողմից ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված «Գնման առարկայի անվանումը» ձեռքբերման N «ԳՀ ՊԸԾՁԲ-14/2» գնման պայմանագիրը ժամանակին չկատարելու, կատարումից խուսափելու կամ հրաժարվելու դեպքում Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ \_\_\_\_\_թվերով\_\_\_\_\_ (\_\_\_\_\_տառերով\_\_\_\_\_.) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուն, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող «Մասնակցի բանկի անվանումը» կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով «Մասնակցի անվանումը», հանձնարարում է «Մասնակցի բանկի անվանումը» -ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում «Պատվիրատուի անվանումը» առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

**2. Այլ պայմաններ**

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև 20 թ. \_\_\_\_\_-ի \_\_\_\_\_-ը ներառյալ:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

«Մասնակցի անվանումը»

«Մասնակցի հասցեն»

«Մասնակցի բանկի անվանումը»

ՀՀ

ՀՀՀՀ

տնօրեն՝ \_\_\_\_\_

(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ \_\_\_\_\_

(ստորագրություն)

**ԵՐԱՇԽԻՔ N \_\_\_\_\_**

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է

(անունը, ազգանունը կամ անվանումը)

(այսուհետ՝ բենեֆիցիար) և \_\_\_\_\_ (այսուհետ՝ պրինցիպալ) միջև  
(անունը, ազգանունը կամ անվանումը)

կնքված N \_\_\_\_\_ պայմանագրից բխող պրինցիպալի  
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) (պայմանագրի համարը)

պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով \_\_\_\_\_ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ)

(երաշխիք տվող բանկ, այլ վարկային հաստատություն  
կամ ապահովագրական կազմակերպություն)

անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել

\_\_\_\_\_ (այսուհետ՝  
(գումարը՝ թվերով) (գումարը՝ տառերով) (դրամ կամ այլ արժույթ))

երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո \_\_\_\_\_ (\_\_\_\_\_)  
(օրերը՝ թվերով) (օրերը՝ տառերով)

աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի

\_\_\_\_\_ բանկում բացված  
(բանկի անվանումը)

\_\_\_\_\_ (բանկային հաշվի համարը)

բանկային հաշվին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է \_\_\_\_\_ մինչև \_\_\_\_\_ ներառյալ:  
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը) (ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) \_\_\_\_\_

2) \_\_\_\_\_

3) \_\_\_\_\_:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված

պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը \_\_\_\_\_ (\_\_\_\_\_)  
(օրերը՝ թվերով) (օրերը՝ տառերով)

աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, ապա բենեֆիցիարն իրավունք ունի երաշխիք տվող անձի բանկից պահանջելու երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից սույն երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ \_\_\_\_\_ չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ

կատարելու համար երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գործադիր տնօրեն \_\_\_\_\_

Գլխավոր հաշվապահ \_\_\_\_\_

\_\_\_\_\_  
(ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)